Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

618
K-88

ПЕРЕПЛЕТНАЯ
Г. В. КУЗНЕЦОВА
Моск. уг.
Серпуховка

39 к.
40 к.
14 к.

1-2
Фру

ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
30 JUL 2010

ԱՂՋԻԿ

ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

Դպրոցաց ՄԵ. Դպրոցական

Ա. Մ[illegible]
ԲԺՇԿ. Վ. ԱՐԹՈՒՆԻ
Ա-88
№93.

ԱՂՋԻԿ

(Առողջապահական եւ բարոյագիտական էսքիզ)



ԼՈՒՍԱՆԴՐ ՖԱԼԵՍՈՎԻՉ
ՍԱՖԱՐՈՎ
Աստրաքան

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Վրաց Հրատ. Ընկերութեան
1903

Ա. Հարությունյան
ԲԺՇԿ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Ա-88
№93.

ԱՂՁԻԿ

(Առողջապահական եւ բարոյագիտական էջիր)



ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՖԱԼԱՇՈՎԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
Астрахань

ՀԱՏՈՐ ԱՌԱՔԻՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Վրաց Հրատ. Ընկերութեան
1903

22 FEB 2013

7933

Дозволено цензурою. Тифлисъ, 29 марта 1902 г.

ՀԱՅԿԱԶՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Մ. ՄԱՍԻՍՅԱՆ ԱՍՎԱՆ

3821-84

Ա Ղ Ջ Ի Կ

(Առողջապահական եւ բարոյագիտական էսքիզ)։

Նուէր ор. Հայկանոյշ Տիգրանեանին
(Քրոջս աղջկան)։

Սիրելի Հայկանոյշ!

Դու գիտես, որ հայ օրիորդի վիճակը և նրա խաղացած դերը մեր կեանքի մէջ միշտ զբաղեցրել են ինձ։

Երկար տարիների դիտումներն ու ուսումնասիրութիւնները ինձ համոզեցին, որ մեր ազգի պրոգրէսիվ վատառերման և օտարանման մէջ հայ աղջկայ կրթութեան ու դաստիարակութեան սխալանքները առաջնակարգ դեր են խաղում։

Մեր ոչ ընտանեկան կեանքը, ոչ դպրոցական շրջանը և ոչ հասարակական վերաբերման ձևը դէպի աղջիկը ընդունակ չեն

զարգացնելու նրա մէջ այն ֆիզիկական ու հոգեկան յատկութիւնները, որոնք առհասատչեայ են թէ նրա անձնական բարօրութեան և թէ ազգի բարգաւաճման։

Այն ինչ աղջիկը պիտի կազմի հայ ընտանիքի սիւնը!..

Վաղուց մտադրուել էի հաղորդել հասարակութեան այն հայեացքները աղջկայ կրթութեան ու դաստիարակութեան վրա, որ տուել են ինձ թէ գիտութիւնները և թէ իմ սեփական խորհրդածութիւնները։ Սակայն միշտ յանդգնութիւն եմ համարել ձեռնարկելու այսպիսի մի աշխատութեան, որովհետև լաւ եմ հասկացել նրա դժուարութիւնը.—դժուարութիւն, որ կապուած է խնդրի ծաւալի մեծութեան և նրա բարդութեան հետ։

Եւ ահա երկար տատանումներից յետոյ ձեռնարկում եմ վերջապէս այս ուսումնասիրութեան, համոզուած լինելով որ սրանով մի օգտակար գործ կատարած կը լինեմ։

Աղջկայ կրթութիւնը սխալ հիմունքների վրա է դրուած.—կամ բոլորովին անուշադիր է թողնվում նա, կամ անբնական ու կեղծ ուղղութիւն ստանում։

Այս մի ընդհանուր ցաւ է, որից շատ ու քիչ տուժում են բոլոր ազգերը, թէև այս արատը ջնջելու համար վերջին տարիներս մեծ ու յաջող քայլեր են արուած։

Աղջիկը իր ամբողջ կեանքում ուրիշի կամքով է շարժվում։—նախ ծնողների, յետոյ դպրոցի ու շրջավայրի։ Ինքնուրոյնութիւն ասած բանը միանգամայն անըմբռնելի է արդի աղջկայ համար։ Ինքնուրոյն լինել! Չէ՞ որ մեր հասկացողութեամբ այդ նշանակում է լինել անպարկեշտ, կամակոր, անսանձ։ Աղջիկն ինչ է, որ իր խելքով գործ չինի, իր հասկացողութիւնով ապրի, կամ իր սեփական կարծիքները, համակրանքներն ունենայ։

Այսպէս, ամեն կենդանութեան արտայայտութիւն խեղդուած է նրա մէջ. նա չի կարող վազել, երգել, խաղալ, զբօսնել։ Եւ քանի մեծանում է նա, այնքան աւելի սեղմվում է նրա ազատութիւնը, և 14 տարեկանից վեր նրան արդէն արգելուած է մենակ դուրս գալ տանից, ամեն մի քայլի համար բացատրու-

թիւն են պահանջում նրանից և ամեն մի շարժում կշռամբում։ Այդ ինչ է, ինչ տարօրինակ սիստեմ է դա։ Կարծես ծնողներն իրանց աղջկան անբարոյական, ստահոս են համարում։

Նոյնն է անում դպրոցը։

Դպրոցը!.. Նա կարծես ընտանեկան բանտի շարունակութիւնը լինի։ Այնտեղ նոյն սիստեմով ճնշում-խեղդում են երեխայի մէջ մտքի ու գործի անկախութիւնը։ Զէ՞ որ այնտեղ ևս արգելուած է սեփական միտք, ցանկութիւն ու կամք ունենալ։ «Այստեղից-այնտեղ». ահա մեր դպրոցների նշանաբանը, որով ստիպում են աշակերտուհիներին դասագրքի ուղեղով մտածել։ Ամեն ինչ որոշ շրջանակի մէջ է դրուած. նրանից դուրս գալը յանցանք է համարվում, և օրինակելի աշակերտուհին նա է, ով թուրթակի նման բերան է անում «այստեղից-այնտեղը»։

Այսպէս է կատարվում աղջկայ կրթութիւնը.—նրա մտքերը և մտածելու ձևն անդամ ուրիշներին են պատկանում։

Այսպէս, աղջիկը միշտ շարժվում է ուրիշի թելադրութեամբ, նրա մտքերն անդամ ուրիշներինն են։

Այսպէս, ծնողներն ու դպրոցը երկար տարիների ընթացքում կաշկանդած են պահում նրա կամքը և յանկարծ դուրս թողնում նրան կեանքի ովկիանոսի երեսը առանց ղեկի. բնականաբար նա պիտի ընկղմուի ու խեղդուի։ Ամեն կենդանի իր փոքրիկին սովորեցնում է կռուել ու կռուով ապրել, միայն մարդն է, որ իր երեխային անզէն ու անպատրաստ դուրս է շպրտում կեանքի ասպարէզ։ Եւ այնտեղ, կեանքի այդ կռուի մէջ, ինչպէս ուսուցանում է Դարվինի դպրոցը, անզէնը կուլ է գնում զինուածին, թոյլը—ուժեղին։

Ընտանեկան դաստիարակութիւնը չինում է աղջկան անվճռական և կամազուրկ, զուրկ նոյնպէս ձեռներէցութիւնից ու տոկունութիւնից սկսանքների մէջ, իսկ դպրոցը ոչ մի գործնական գիտելիք չի տալիս նրան և մէջը չի մշակում ոչ մի լուրջ հայեացք հասարակական կեանքի և մարդկանց փոխադարձ յարաբերութիւնների վրա։ Նա դառնում է մի վրիպած էակ, ինչպէս վրիպած է ի ծնէ ա-

պուչը, որ անպէտք է կեանքի համար։

Ահա թէ ինչ է դարձնում աղջկան անկանոն դաստիարակութիւնը, ընդհանրապէս, նոյնիսկ շատ քաղաքակրթուած երկրներում։

Մեր մէջ դաստիարակչական գործը մի յատուկ ու բնորոշ ուղղութիւն էլ է ստացել,—յատուկ ու բնորոշ յետ ընկած ու կորստեան մատնուած ազգերին—ես խօսում եմ այն հոսանքի մասին, որ տանում է դէպի մոռացումն ազգային աւանդութիւնների, ուրանումն նախնիների սրբութիւնների և ծայրագոյն արհամարհումն դէպի լեզուն ու ազգայնութեան գաղափարը։ Այս մի հոսանք է, որ արդէն հեղեղել է մեր ժողովրդի բոլոր խաւերը և որ անհրաժեշտաբար պիտի տանի դէպի վատասերումն և դէպի կորուստ!

Մեր կրթուած աղջիկների մեծագոյն մասը այս հոսանքի մէջն են ընկած և առանց իրանց կամքի առաջ են մղվում դէպի օտարանման անդունդը,—փոքրագոյն մասը միայն (հազարից մէկը) ամրացնում է իր մէջ մարդուս լաւագոյն յատկութիւն-

ները, այն է—դիտակցական ինքնապաշտպանութիւն, յարգանք դէպի պապերի աւանդական օջախը և իր սրբազան լեզուն ու կրօնը։

Այսպիսիների մէջն է հասարակութեան փրկութիւնը. և մեր կեանքի մէջ նրանց հինգ մատի վրա կարելի է հաշուել։ Էլ չեմ խօսում ֆիզիկական կրթութեան մասին, որը բոլորովին անուշադիր է թողնուած, որի կարեւորութիւնը չի ճանաչուած մեր մէջ, բայց որ սակայն հիմն է ընտանիքի բարօրութեան, առողջ սերնդի արտադրութեան, հասարակութեան ու ազգերի ֆիզիկական աղնուացման։

Եւ հայ աղջիկը անպատրաստ, անպատրաստ ֆիզիկապէս ու մտաւորապէս, մէկ օր դուրս է գալիս ընդմիշտ դպրոցի յարկի տակից ու աչքերը տրորելով ընկնում է կեանքի բովի մէջ։ Մեծագոյն մասը գործելու ոչ մի ներքին պահանջ չի բերում իր հետ, նա հետեւում է շաբլօնին, ամուսնանում է ծնողի կամքով ու ապրում է մինչեւ մահ ամուսնու թելադրութեամբ։ Այդպիսիների համար չկայ իդէալ, չկայ ալտրուիստ ձգտումն, չկայ պարտաճանաչու-

թիւն դէպի իրան կրթող հասարակութիւնը։ Դրանք կ'ապրեն նոյն շաբլօն ձեւով, ինչ ձեւով ապրել էին մինչեւ այժմ և կը կրթեն իրանց զաւակներին նոյն պրոգրամմով, ինչով որ իրանք են մեծացել։

Եւ ամեն տարի լայն բացվում են մեր դպրոցների դռներն ու դուրս թողնվում հազարաւոր այդպիսի օրիորդներ, որոնցից ոչինչ չունի սպասելու հասարակութիւնը...

Իսկ այդ գեղեցիկ բայց անօգուտ երամակների մէջ, խղճուկ հագուստով, մի տեսակ անվստահ քայլուածքով, անհաստատ ոտը դնում է կեանքի ասպարէզը ապագայ իսկական հայուհին, յուսալից թախանձոտ աչքերը հորիզոնին յառած, որտեղից պիտի ծագէ մի նոր կեանքի արև իր համար։

Ո՞րչափ սակաւաթիւ են սրանք!

Ուրիշ մտքեր, ուրիշ ձգտումներ է փայլում սրանց հայեացքի մէջ։

Զգում են, որ իրանք էլ անդամ են հասարակութեան և որ պարտաւոր են մի գործ կատարելու։

Որչափ յուսալից պատրաստականութիւն են ցոյց տալիս սրանք աշխատելու

ազգի, հասարակութեան օգտին, օգտաւէտ մարդ դառնալու։

Ա՜հ, սիրել մի մեծ, մի ազնիւ գործ ու հոգով անձնատուր լինել նրան, զինուած օգտակար մարդ լինելու բաւարարութեամբ։ Ա՜հ, զգալ, որ այս ձեռները, այս ուղեղը, այս բնական ձիրքերն ու ընդունակութիւնները պիտանի պիտի լինեն հասարակութեան խոցերի վրա սպեղանի դնելու, նրա յուսահատութեան ովկիանոսի մէջ մի կաթիլ մխիթարանք դցելու։

Եւ պատանուհու երևակայութեան մէջ ուրուագծվում է իր ապագայ գործունէութեան գրաւիչ պատկերը։ Նա տեսնում է իրան կամ վարժուհի—մայր ու քոյր դարձած հարիւրաւոր մանուկների, տալով նրանց իր բոլոր մարմնական և հոգեկան ճիգերը, և կամ հասարակական եռանդուն գործիչ, նուիրուած բարեգործական գործունէութեան։ Երբեմն էլ երազում է քաշուել մի յետ ընկած տեղ, իսկական խաւար ամբոխի մէջ և գործել յաւիտենական տառապանքի ու տանջանքի այդ բովարանում։

Նա պիտի մեծ հռչակ հանի նոյնպէս և գրական ասպարէզի մէջ, տալով հայ

մանկան մի շարք գրքեր, հիմնելով մանկական թերթեր, ժողովրդի մէջ տարածելով գրական դաստիարակութեան հիմունքներ։ Չէ՞ որ նա էլ անդամ է հայ ազգի, չէ՞ որ հասարակութիւնը սպասելիքներ ունի նրանից.—նա պիտի գործի, գործի բոլոր ասպարէզների վրա... Եւ այս հեշտ յափշտակուող պատանուհին համոզուած է, որ ամեն ասպարէզ բաց է իր առաջ։

Նա իր միամիտ անուրջներում գիւթական օդային ամրոցներ է կառուցանում։ Ամեն բան պիտի յաջողուի իրան։ Իր անփորձութեան մէջ համոզուած է, որ միշտ հարթ է ճանապարհը դէպի օգտակար գործը.—բաւական է ցանկալ և նպատակիդ կը հասնես...

Բայց ցանկութիւնն ու եռանդը բաւական չեն գործ կատարելու համար։ Հարկաւոր է պատրաստութիւն և (որ գլխաւորն է) կամքի ոյժ... Աւա՜ղ, այդ երկուսն էլ պակասում են հայ աղջկան։

Տատանմունք, անվճռականութիւն, անհաւատութիւն գործի օգտաւէտութեան, հաւատի պակասումն դէպի իր ոյժերը—այս

բոլորը արտայայտվում է նրա ամեն մի սկսանքի մէջ։ Առաջին բոպէներում սրտանց կպչում է նա գործին, բայց շուտով վրա է հասնում անբաւարարութեան զգացմունքը և ձեռները թուլանում են ու սիրտը լցվում անվստահութեամբ։ Սրտաճմլիկ մի տեսարան է դիտել այդ փորձերի անպտղութեանը, ներկայ լինել խեղճի ամենօրեայ ոստումներին։

Նա ինքը լաւ է հասկանում, որ անյաջողութիւնը գործի անմատչելի ու անիրագործելի լինելուց չէ, այլ կամքի թուլութիւնից ու նախաձեռնութեան բացակայութիւնից։

Նա կարդացել է պատմական նշանաւոր կանանց մասին, որոնք գործել են և իրանց գործերով ապշեցրել են աշխարհ։ Ինչի՞ նա ինքը ոչինչ չի կարողանում գլուխ բերել, ինչն է պատճառը, որ ամեն քայլափոխի նա հանդիպում է անյաղթելի խոչընդոտների։

Ինչի՞ նրա սրտում բուն է դրել կասկածի հրէշը, որ ամեն ձեռնարկութիւն ունայն է դարձնում։

Եւ խեղճ աղջիկը բաւականաչափ ոյժ

չի գտնում իր մէջ որ դիմադրի իր իդէալ-
ների փլատակմանը, իր գեղեցիկ յոյսերի
չքանալուն։ Նա ընկնում է առօրեայ կեան-
քի շաբլոն հոսանքը և ընդմիշտ «մնաս բա-
րով» ասում իր փայփայած գաղափարներին։

Գիտակցական կրթութեան ամենա-
բարձր արտայայտութիւնն է.—չընկճուել
կեանքի հարուածների տակ, չստորանալ
յոյսերի դաւաճանման առաջ։

Այդ ներքին կենսական դիմացկունու-
թիւնը, այդ բարոյական էնէրգիան զարգա-
նում են ու ամրանում միմիայն մարմնի ու
հոգու ներդաշնակ կրթութիւնով։

Կամքի ոյժ, անսասան տոկունութիւն,
սրանք ձուլած մաքուր ոսկու կտորներ են,
որոնք դուրս են բերուած հանքաքարերի
ձուլարանից ու կռարանից։ Սրանք ադա-
մանդներ են, որ սև ածուխի միջից են
հանում։

Դաստիարակութիւնն ու կրթութիւնը
պիտի դառն հանքաքարերի միջի ոսկին։

Ահա իմ ձգտումը։

Ես պիտի վերցնեմ աղջկան երեխայու-

թիւնից մինչև օրիորդական հասակը, պիտի
ցոյց տամ, թէ ինչպէս պէտք է կրթել նրան
ֆիզիկապէս, բարոյապէս ու մտաւորապէս,
մինչև որ հասունանայ։

Ես կը հետևեմ գիտութեան ցուց-
մունքներին, որոնք այսուհետև մայրերի և
հասունացած օրիորդների ուղեցոյցը պիտի
լինեն։

Այս տեղ ևս, ինչպէս իմ միւս առող-
ջապահական էտիւդներում, ես կ'աշխա-
տեմ խօսել պարզ և անկեղծօրէն, դէն
գցելով կեղծ ամօթխածութիւնը, որ միշտ
խոչընդոտ է եղել լուրջ առողջապահական
գիտելիքներ տարածելուն ժողովրդի մէջ։

Վ. Արծրունի

ԱՂՋԻԿ

ԳԼՈՒԽ I

Տղամարդը հանդիսանում է կամ իբրեւ իշխող կնոջ վրա եւ կամ իբրեւ նրան հովանաւորող.—Սիրը մի սուր արարած է տղամարդու աչքին.—Ի՞նչպէս էին նայում հները աղջկայ ծնունդեան վրա.—Աղջիկը ամօթ է բերում ծնողներին.—Հայերի վերաբերումն դէպի աղջկայ ծնունդը.—Աղջիկների կոչուածը զանազան երկրներում.—Քաղաքակրթութեան ազդեցութիւնը։

Մարդկութեան վայրենի և կիսավայրենի շրջաններում բռի ֆիզիկական ոյժն է եղել մարդուս գոյութեան միակ գրաւականը։ Ուժեղը միայն կարող էր իր գոյութիւնը պահպանել այնպիսի մի ժամանակ, երբ կեանքի կռիւը լոկ և միմիայն ֆիզիկական զէնքերով էր մղվում։ Նա միայն կարող էր ապրել, ով բաւական ոյժ ունէր ուրիշին ոչնչացնելու, որպէսզի խլի նրանից նրա մի կտոր հացը։

Ֆիզիկական կռիւը տեւել է բիւրաւոր

3821-84
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՈՍ ԽՍՀ

դարեր և մարդը, իր ոյժը աւելի բարձր բանականութեամբ ամրացնելով, կամաց-կամաց նուաճել է բնութիւնը։

Ֆիզիկապէս աւելի թոյլ, դատապարտուած բնութիւնից յղութեան ծանրութեանը, ծննդաբերութեան երկունքին և ծրծմայրութեան պրոցէսսին, որոնք կաշկանդում-բռնանում են նրա ֆիզիկական զարգացման և մարմնական ու հոգեկան անկախութեան վրա, կինը իր բնութիւնով միշտ մի նուազ անհատականութիւն է ցոյց տուել և միշտ պէտք է ունեցել մի առոյգ ձեռքի հովանաւորութեան։

Եւ տղամարդը միշտ, ամեն դարերում երկու տեսակ դիրք է բռնել դէպի կանանց սեռը.—նա հանդիսացել է կամ իբրև տէր, կամ իբրև հովանաւոր, նայելով, ի հարկէ, իր քաղաքակրթութեան աստիճանին։

Վայրենի ցեղերի մէջ տղամարդը նայել է և այժմ էլ նայում է կնոջ վրա իբրեւ մի ստոր արարածի վրա, որ աւելի բարձր չէ, քան այն կենդանիները, որոնց նա նուաճել է և որոնցով օգտվում է։ Կինն այստեղ մի խելացի դրաստ է և միևնոյն ժամանակ մի հաճելի զուարճալիք։

Վայրենի ու կիսավայրենի ցեղերի մէջ հովանաւորութեան գաղափարը, իբրեւ աւելի բարձր հասկացողութիւն, բոլորովին պիտի բացակայէր, կամ չափազանց նուազ կերպով արտայայտուէր։ Փոքրիշատէ քաղաքակրթուած ազգերը միայն ընդունակ են ըմբռնելու թոյլին ու անպաշտպանին հովանաւորելու և օգնելու հումանիտար գաղափարը։ Թէ այսպէս և թէ այնպէս, ստրկութեան թէ հովանաւորուած դրութեան մէջ, թոյլ սեռը ամեն երկրում և ամեն ժամանակ կախումն ունեցողի դիրք է բռնել դէպի տղամարդը, ճանաչելով սրան կամ իբրեւ ինքնակալ տէր իր կեանքին և բաղդին և կամ թէ չէ իբրև խնամատար, իբրեւ պաշտպան ու նեցուկ, առանց որի նա անկարող է իր գոյութիւնը պահպանել։

Պէտք է շատ բարձրանալ քաղաքակրթութեան սանդուխներով, հասնել մինչև անգլիական էմանցիպացիային և ամերիկական ազատամիտ կրթութեան, որ տեսնենք կնոջը համարեա ազատուած այս կապանքներից և ինքնուրոյն մարդ դարձած։ Ասում եմ «համարեա», որովհետեւ այդ երկրնե-

բում անդամ դեղեցիկ սեռը դեռ չի հասած կատարեալ ինքնուրոյնութեան։

Այսպէս, տղամարդը թէ իր վայրենական շրջանում և թէ քաղաքակիրթ դրութեան մէջ միշտ իրան բարձր է դասել կանացի սեռից ֆիզիկապէս և մտաւորապէս։ Պահպանելով իր ֆիզիկական առաւելութիւնները, տղամարդը նախնական դարերից ի վեր պահպանել է նոյնպէս երկրի դերիշխանութիւնը և հողագնաի օրէնսդրի մեծ իրաւունքը։ Հպատակուել են նրան բոլոր կենդանի (և նոյնիսկ անկենդան) էակները, հպատակուել է և կինը միւս կենդանիների շարքին։

Եւ ամեն տեղ տիրում էր այն համոզմունքը, թէ կինը մի ստոր արարած է ամեն տեսակէտից. չէ՞ որ նա տղամարդու կողից է ստեղծուած։

Տղամարդու կարծիքով, բնութիւնն անդամ, նոյնիսկ մօր արգանդի մէջ, աղջկան աւելի ստոր տեղ է յատկացրել, քան տղամարդուն։

Այսպէս, հրէաները, յոյները, նոյնիսկ հռովմայեցիք համոզուած էին, թէ աղջիկը ծնվում է ու սաղմանում մօր արգանդի ձախ

կողմում, իսկ տղան աջ կողմում, և այս պատճառով էլ աղջկով յղի կնոջ ձախ ստինքը աւելի է մեծանում ու լցվում կաթով, քան աջը։ Եթէ յղի կինը ցաւեր է զգում, թոյլ է ու նիհարում է, եթէ նրա երեսի վրա պղուկներ ու չէչեր են դուրս տալիս, եթէ դէմքը թոշնած է, կամ ոտերն ու աճուկները ուռչում են—այդ ապացոյց է, որ արգանդի պտուղը աղջիկ է, այն ինչ զուարթ ու առողջադէմ կինը տղայ կը ծնի։ Աղջկով յղի կինը առհասարակ աւելի է տանջվում, յղութիւնն ու ծննդաբերութիւնը աւելի դժուար են լինում։

Այսպիսով, ժողովրդի հասկացողութեամբ, աղջիկը նոյնիսկ մօր արգանդի մէջ մի պատուհաս է ծնողների համար։

Բայց այս բոլորը չէ։

Շատ ազգերի մէջ տիրում էր այն համոզմունքը, թէ աղջկայ սաղմը աւելի ուշ է հոգի ստանում, քան տղայինը։

Նոյնիսկ հին գիտնականները հաւատում էին, որ տղան աւելի վաղ է հոգի ստանում, քան աղջիկը։

Հիպպոկրատը կարծում էր, թէ տղան մօր արգանդի մէջ հոգի է առնում 30-դ

օրը, իսկ աղջիկը 40-դ.։ Արիստոտելի ասելով, այս տարբերութիւնը աւելի մեծ էր, այն է.—տղան 40-դ օրը, իսկ աղջիկը միայն 80-դ օրը։

Մի հին գրքում (XVI դարու) ասուած է.

«Եթէ պէտք է աղջիկ ծնուի, պտուղը շարժվում է իններորդ օրը, իսկ եթէ պտուղը տղայ է, շարժումներն զգացվում են շատ աւելի վաղ, քառասունքի մէջ։ Ուրիշ տեղերում, օր. Էստլանդիայում, աղջկայ շարժումը իբր թէ տեղի է ունենում 4-դ ամսում, իսկ տղայինը 3-դ»։

Եւ քանի որ այն ժամանակներում կարծում էին, թէ սաղմը սկսում է խ ա ղ ա լ այն բոպէից, երբ հոգին մտնում է նրա մէջ, հետևաբար ենթադրվում էր, որ հոգին աւելի ուշ է իջնում աղջկայ մէջ, քան տղայի։

Մի քանի կիսավայրենի աֆրիկեան ցեղերի մէջ աղջիկը որոշ դրամագլուխ է, որովհետև վեսացուն նրան գնում է, վճարելով մի քանի տնային կենդանի, այդ պատճառով աղջկայ ծնունդը սրանց մէջ աւելի մեծ հրճուանքով է տօնվում։ Բայց այս դէպքերը բացառութիւն են և ընդհանուր վերաբերումն դէպի աղջկայ ծնունդը

ամենուրեք արհամարհական և թշնամական է եղել։

Աղջիկ ծնելը ամօթ է բերում մօրը։

Մի զարմանալի նախապաշարմունք գոյութիւն ունի Ռուսաստանում. «Եթէ հարց տաք մի յղի կնոջ, թէ ինչ կը ծնի,—տղա՞յ թէ աղջիկ, և նա կարմրի, այդ նշանակում է, որ արգանդում աղջիկ է, իսկ եթէ չկարմրի—տղայ է»։

Տեսէք, թէ որչափ ամօթալի բան է աղջկով յղանալը, որ մայրը, նոյնիսկ չիմանալով, թէ ինչ է իր արգանդի միջինը, ամօթից կարմրում է։

Ղուրանում այսպէս է նկարագրվում արաբի հոգեկան դրութիւնը, երբ նա լսում է, որ իրան աղջիկ է ծնուել. «Նրա դէմքը մռայլվում է և նա մեծ վշտի մէջ է ընկնում. խուսափում է մարդկանցից և հարց է տալիս իրան, պահի՞ այդ ամօթահար երեխային, թէ թաղի նրան»։

Միևնոյնը տեսնում ենք, ըստ Շալկովի, և հիմա արաբական ցեղերի մէջ. նոյնն է և հնդիկների, պարսիկների, նեգրերի, եապոնացիների ու չինացիների մէջ։ Ամենամեծ անպատուութիւն է մանդարինի համար, երբ

հարցնես նրան թէ աղջիկ ունի՞ նա թէ ոչ։

Պլոսը իր գրքի մէջ առաջ է բերում Միջին-Ասիայի թիւրքմէն ցեղի երգը.

«Աւելի լաւ է, որ աղջիկը արեւի լոյս չտեսնի, այլ մօր արգանդում մեռնի. իսկ եթէ ծնուել է, աւելի լաւ է, որ խսկոյն մեռնի։ Այն ժամանակ ծննդեան հետ միասին կը տօնեն և թաղումն»։

Նոյն ձեւով են վերաբերվում աղջկան և բոլոր ասիական ցեղերը։ Կանայք ամաչում են աղջիկ ծնելիս, կարծես յանցանք կատարած լինէին։

Հին դարերի հասկացողութեամբ ծնընդաբերութիւնը պղծում է կնոջը. մաքրուելու համար որոշ ժամանակ էր որոշուած։ Այս ժամանակամիջոցը աղջկայ ծննդից յետոյ աւելի երկար էր, քան տղայի ծննդից, որովհետև աղջիկը աւելի է պղծում մօրը։

Մովսէսի օրէնքով եթէ կինը տղայ է ծնել, նա անմաքուր է եօթն օր, իսկ եթէ զաւակը աղջիկ է—երկու շաբաթ։ Այդ ժամանակամիջոցին նա իրաւունք չունի տաճար մտնելու և սրբազան իրերին ձեռք տալու։

Հայերի մէջ նոյնիսկ մեր օրերը նկատ-

վում է նոյնպէս արհամարհանք դէպի աղջիկը։ Աղջիկ ծնող մայրը կարծես ամաչում է իր սկեսարի ու տագրերի առաջ։

Դանձակի գաւառում աղջկայ ծնունդը սխրութիւն է պատճառում թէ ծնողներին և թէ ազգականներին։ Մայրը, կարծես մի յանցանք գործած, կուչ է գալիս. ամուսինը երբեմն բարկանում է կնոջ վրա, երբեմն էլ ամենակոպիտ խօսքերով հայհոյում նրան։ Սկեսարը անիծում է նրան ասելով. «Ջահել աղիս օրը սեւացրիր, ջինոդ (սերունդդ) կտրուի»։ Ազգական կանայք գալիս են ոչ թէ աչքալուս տալու, այլ մխիթարելու. «բան չկայ, աղջիկ բերողը տղայ էլ կը բերի, հէրն ու մէրը սաղ ըլին»։ Անիծում են նոյնպէս տատմօրը. «ձեռքդ կոտրուի, մէկ էլ մեր տանը աղջիկ չփաթթես» *)։

«Ի հարկէ, այս դժգոհութիւնը այնքան աւելի է լինում, որքան շատ աղջիկ երեխաներ են ծնուած այդ գերդաստանում։ Պատահել են դէպքեր, որ նորածին աղջկան տաշտակի տակին են դրել ու սպանել։

«Այսպէս վերաբերուելու պատճառն

*) «Դանձակի գաւառ», Ե. Լալայեան։

այն է, որ աղջկան «ուրիշի ապրանք, դրսի պատ են» համարում: 10—15 տարի հայրենական տան մէջ ապրելով, ծախսերի ենթարկելուց յետոյ թողնել-գնալու է: Այն ինչ արու երեխան «տան սիւն է, ծերութեան նեցուկ է, օջախը վառ պահող, ծնողաց յիշատակը պահպանող, նրանց գերեզմանը օրհնել տուող է» *):

Շուշուայ գաւառում (Վարանդա), աղջիկ բերող հարսը նոյնպէս հալածանքի է ենթարկվում: Սկեսարը անէծքներ ու հայհոյանքներ է թափում խեղճի գլխին: Աղջիկայ ծննդին կերուխում, աչքալուս չի լինում: Շատ դէպքեր են պատահել, որ մի քանի աղջիկ բերող կնոջը դուրս են արել տանից **):

Աղջիկը ծանր բեռ է համարվում ընտանիքի համար, քանի որ պահանջում է մեծ ծախս մինչև մեծանալն ու մարդու դնալը. —նրան պէտք է լաւ հագցնել, այն ինչ իբրև բանուոր ոյժ, նա թոյլ է և յաճախ անպէտք: Իսկ որչափ մեծ ծախքեր են պահանջում նրանք ամուսնանալիս:

*) Նոյն տեղ:
**) «Վարանդա», Ն. Լալայեան:

Կայ և մի ուրիշ երկիւղ, այդ այն է, որ աղջիկը կարող է «պառաւել, տանը մնալ», եթէ նա տգեղ է կամ բաժինք չունի: Այդ արդէն մի մեծ դժբախտութիւն է ծնողների համար:

Այս պատճառով էլ մի քանի աղջիկ ունենալը Աստուծու անէծք ու պատուհաս է համարվում, և ծնողները ուրախ են, երբ աղջիկներից մէկն ու մէկը հիւանդութիւնների ու արկածների զոհ է դառնում:

Բաֆֆին նոյնպէս մատնացոյց է անում այս վերաբերումը դէպի աղջիկը.

«Եթէ ծնունդը տղայ է, նրա անկողինը շրջապատում են մի խումբ պառաւներ, որոնք գործ են դնում իրանց ամբողջ կախարդական արհեստը մօր և նորածին մանուկի կեանքը անվնաս պահելու «չարիքից», «աչքերից», «քաչքերից», «դեւերից», «մեղնից աղէկներից», «սատանաներից» և այլն: Մանուկի օրօրոցը նոյնպէս զրահաւորում են բժժանքներով, յուռութներով, մահիկներով և մինչև անգամ տէրտէրի գրած «բթիկներով»: Իսկ աղջիկը զուրկ է մնում այդ նախախնամութիւններից»:

Շատ երկրներում այս աստելութիւնը դէպի աղջիկը այն աստիճանի է հասնում, որ ծնողները սպանում են նորածին երեխային։

Աղջկայ սպանումն կատարվում է մեծ ծաւալով հնդկական և չինական երկրներում։ Այդ գարշելի սովորութիւնը տեղի ունի նաև Աւստրալիայում և մօտակայ կղզիների վրա։

Որդեսպանութեան շարժառիթներից ամենագլխաւորը, անտարակոյս, աղքատութիւնն է։ Ծայրայեղ չքաւորութեան մէջ ապրող ազգերի մէջ անընդհատ տիրում է սովը։ Ուժեղ բանուոր տղամարդը հազիւ է կարողանում իր գոյութիւնը պահպանել, և մի աւելորդ որկորը ընտանիքի մէջ ահագին ծանրութիւն է դառնում։

Չինաստանում և Հնդկաստանում ապրող տասնեակ միլիոնաւոր մարդկային էակները, խռնուած լինելով մրջնային հաստայքների պէս մի կտոր հողի վրա, որ դադարել է նրան բաւարար բրինձ տալուց, ընկճուած իշխող դասերի սոսկալի կեղեքման ու ճնշման տակ, ետ մղուած առեւտրական կենտրոններից դէպի երկրի խորքերը,—այդ ողորմելիները բնականաբար պի-

տի ձգտէին դանդաղացնելու իրանց աճումն, և անհրաժեշտաբար հասնէին որդեսպանութեան ահռելի գաղափարին։ Եւ այս «անհրաժեշտ չարիքի» զոհերը պիտի լինէին թոյլերը, որոնք անկարող են մաքառել և իրանց ապրելու միջոց հայթայթել, այսինքն —աղջիկները։

Աղջիկը մեծ խնամք ու ծախք է պահանջում։ Նա մի աւելորդ ուտող «բօղազ է», որը լցնել անկարող են կիսաքաղցած ծնողները։

Սոսկալի է սպանութեան ձեւը։

Ցաճախ նորածին աղջկան ուղղակի գցում են աղբի կողովի մէջ, կամ հոր են փորում ու կենդանի-կենդանի թաղում։ Հնդկաստանում ուղղակի գցում են Գանգէսի և ուրիշ սրբազան համարուած գետերի ջրերը։ Երբեմն հայրը ոտով ջնջում է երեխային, կամ գլուխը պատին է խփում և այլն։

Հնդկաստանում և Չինաստանում աղջիկների սպանութիւնը ահագին ծաւալով է կատարվում և կարծես սրբագործուած է. հայրը սպանում է իր աղջիկներին, եղբայրը

քոյրերին։ Զնայելով անգլիական կառավարութեան խստագոյն արգելքին, հնդկական ընտանիքներում իգական սեռի մի սոսկալի կոտորած է կատարվում։ 1836 թուին հնդկա-անգլիական կառավարութիւնը քննութիւն բացեց այդ մասին, որից դուրս եկաւ, որ Բաղպուտանի նահանգում 10,000 մարդկանց մէջ ոչ մի աղջիկ չէր մնացել։ Մի ուրիշ նահանգում մարդիկ խոստովանվում էին, թէ 100 տարուց աւելի է, ինչ ոչ մի էգ երեխայ կենդանի չի թողնվում։ Վաթսունական թուականներին կատարուած քննութիւնը ցոյց տուեց, որ համարեա բոլոր հնդկական նահանգներում որդեսպանութիւն էր տեղի ունենում, այնպէս որ աղջիկ երեխայ գրեթէ բոլորովին չէր մնացել և տասնեակ, նոյնիսկ հարիւրաւոր տարիներ շատ տեղերում հարսանիք չէ եղել, և աղամարդիկ ուրիշ երկրներից են իրանց կին բերել։

Աֆրիկական մի քանի վայրենի ցեղերի մէջ սովորութիւն կայ դրսից կին բերել, որովհետեւ իրանց մէջ աղջիկ դաւակ չի մնում։

Հայերի մէջ քրիստոնէական սկզբունք-

ները, ի հարկէ, թոյլ չեն տալիս ոչնչացնելու էգ երեխային, սակայն կայ յիշատակութիւն, որ պատահել են սպանութեան դէպքեր։ Ցամենայն դէպս «աղջկայ մահը մի ներքին բաւականութիւն է պատճառում շատ հայ ծնողների», ինչպէս նկատում է Բաֆֆին։

Մեր ժամանակներում անգամ այս որդեսպանութեան զարհուրելի սովորութիւնը թագաւորում է շատ տեղեր։ Ցէյլոն և Մադագասգար կղզիների վրա բոլոր աղջիկները կոտորվում են, բացի առջնեակից։ Մի քանի արաբական կռապաշտ ցեղերի մէջ, ըստ Շալկովի, աղջիկներին թոյլ է տրվում ապրել մինչեւ վեց տարեկան հասակը միայն։ Այդ ժամանակ հայրը տանում է երեխային ջրհորի մօտ, հրամայում է կռանալ ու նայել, և այդ րոպէին ուժով խփում է գլխին, գլորում ջրհորի մէջ ու հորը լցնում հողով։

Հին կլասիկ երկրներում (Յունաստանում և Հռոմում) աղջկայ ծնունդը այդպէս թշնամաբար չէր ընդունվում։ Այնտեղ աղջկայ վրա նայում էին իբրև ապագայ զինուորների մօր վրա, այդ պատճառով էլ

աղջկանից պահանջվում էր դեղեցիկ և առողջ մարմին, ինչպես և տղաներից։

Հայրը նորածին երեխային պիտի ներկայացներ թաղական ծերունիներին, որոնք զննում էին նրան ու իրանց վճիռը տալիս։ Եթէ նա լաւ կազմուածք ունէր, մտցնում էին քաղաքացիների անուան ցուցակի մէջ, իսկ եթէ նա մի որևէ արատ ունէր կամ թուլակազմ էր, շպրտում էին ձորը Տայգետեան կոչուած քարափից։

Նորագոյն ազգագրական տեղեկութիւններին նայելով, արատաւոր երեխաներին աշնչացնելու սովորութիւնը գոյութիւն ունէր և ունի այժմ էլ զանազան ազգութիւնների մէջ։

Ահա թէ ինչպէս էին նայել ու նայում են այժմ էս աղջկայ ծննդի վրա։ Աղջիկը մի աւելորդ ծանրութիւն է համարվում, որից վաղօրօք ազատուելու փափագը մղում է ծնողին մինչև անգամ դեպի որդեսպանութեան ոճիրը։

Հին դարերի մեծ խորհողների ու յեղափոխիչների և մանաւանդ Քրիստոսի մարգասէր ուսմունքները միշտ ձգտել են

ազգերին սէր ներշնչելու դեպի կանացի սեռը, սակայն անկարող են եղել հաւասարեցնել երկու սեռերը։ Անտարակոյս, քանի քաղաքակրթվում է մի ազգ, այնքան աւելի է նուազում այդ տարբերութիւնը, բայց դարձեալ—նոյնիսկ քաղաքակրթուած ազգերի մէջ—աղջկայ ծնունդը չի բերում ծնողներին այն հրճուանքը, ինչ որ տղայինը, այլ ընդհակառակը մի խուլ, զսպուած անբաւականութիւն ու դժգոհութիւն է գցում նրանց սրտի մէջ։

II

ՀՆԵՐԻ ՀԱՅԵՍԱՑՔԸ ԱՂՋԿԱՅ ՎՐԱ.

Հների արհամարհական հայեացքը կանացի սեռի վրա.—Կնոջ անմարդուրիան գաղափարը.—Աղջկայ դրութիւնը հոր տանը.—Նրա վաճառումն.—Նրա ազատութիւնը բափառական ցեղերի մէջ.—Աղջիկը Սպարտայում։

Աղջիկը, որի աշխարհ գալը, ինչպէս տեսանք, աղէտ էր համարվում, մեծանալով մնում է նոյն արհամարհանքով, նոյն թագցրած թշնամանանքով պատած. նա պահվում է իբրև վաճառքի ապրանք, կամ ինչպէս տան բանուոր ոյժ ու բանուորի ապագայ մայր։

Միքանի կիսավայրենի երկրներում աղջիկը անուն անգամ չունի, նա կոչվում է քոյր, դուստր, իսկ ամուսնանալիս նա ընդունում է մի ուրիշ կոչումն, օր. այնտեղի

անունը, որտեղ ամուսնացել է։ Զինական երկրներում արգելուած է նրանց տղամարդկանց հետ սեղան նստել, ինչպէս և արևելքում։ Հիւսիսում կինը իրաւունք չունի այծեամի միս ուտել։ Այսպիսի վերաբերումն դէպի կանացի սեռը, բացի վերեւ յիշած դիտումներից, բացատրվում է և այն կարծիքով, որ ունեն մինչև հիմի էլ անքաղաքակիրթ ազգերը կնոջ դաշտանի ու ծննդաբերութեան պրոցէսների մասին։ Կնոջ օրգանիզմի այս ֆիզիոլոգիական ֆունկցիաները արատաւորող ու պղծող են համարվում, ինչպէս կը տեսնենք, երբ կը խօսենք դաշտանի մասին։ Հայերի մէջ էս շատ տեղերում ծննդկանին անսուրբ են համարում։ Նրա բաժակը, ամանը, չանգալդանակը առանձին են պահում, և թոյլ չեն տալիս որ նա իր ձեռքով բան վերցնի։ Կինն ինքն էլ նոյն համոզմունքին է, թէ իրաւունք չունի, այնպէս որ ծննդկանը ամբողջ օր կարող է քաղցած մնալ, եթէ նրան հաց տուող չլինի։ Մինչեւ անգամ ծննդկանի ամբողջ տունը պղծուած է համարվում և հարկ է լինում փարատել նրան, որի համար քահանայ է հրաւիրվում։

Կնոջ անմաքրութեան գաղափարը պահպանվում էր ու շահագործվում քուրմերի և նոյնիսկ աւելի ուշ քրիստոնէական պաշտօնեաների կողմից, այսպիսով տղամարդ-հոգեւորականը իր համար հոգու փրկութեան մենաշնորհ էր ստեղծում։

Այսպէս, կնոջը իրաւունք չէր տրվում զոհաբերութիւն անգամ անելու.—զոհը պիտի տան տղամարդը բերէր։ Մահմեդական երկրներում շատերը կասկածում են, թէ կինը հոգի ունի, և համոզուած են, որ յամենայն դէպս կնոջ արքայութիւնը տղամարդու արքայութիւնից ցոկ է։ Հները համոզուած էին նոյնպէս, որ կանանց սեռը հանդերձեալ կեանքում ապրում է մռայլ դժոխքում, որտեղ Բեհզեբուղի իշխանութեան ներքոյ թափառում են նրանք ուրուականների նման։

Քրիստոնէական ուսմունքը ոչնչացրեց այս անվայել հայեացքը կնոջ վրա, մի հայեացք, որ, ինչպէս կը տեսնենք յետոյ, չեն քաշվում պաշտպանել նոյնիսկ մինչեւ մեր օրերը յայտնի խորհողներն անգամ։

Մենք շատ հեռու կը գնայինք, եթէ աշխատէինք պատկերացնել ընթերցողի առաջ այն տարօրինակ վայրենի հայեացքները աղջկայ ու կնոջ վրա, որ տիրել է և այսօր էլ տիրում է համարեա ամեն տեղ։

Այսպիսի պայմաններում ի հարկէ դժուար է արդէն խօսել հաւասարութեան, համակրանքի ու սիրոյ մասին։ Կնոջ նսեմութեան, նրա անմաքրութեան գաղափարում խոխոմած տղամարդու ուղեղը անկարող է ըմբռնել սիրոյ «զգացմունքի» նրբութիւնը, որովհետեւ նա անկարող է տարբերել այդ զգացմունքը տուփանքի հաճոյքից։

Հարեմային սիստեմը մի զօրեղ ապացոյց է, սակայն, սէր չճանաչելով հանդերձ, արեւելեան տղամարդը լցուած է խանդով, որ ուղղակի հիւանդութեան և մոլութեան է հասնում։ Այդ խանդոտութիւնն է, որ չարսաւ է դցել կնոջ երեսին, որ փակել է կնոջը կանանոցի չորս պատերի մէջ, որոնց դռների ճեղքերից անխոնջ հսկում են անսեռ ներքինիների մռայլ աչքերը *)։

Մինչև որոշ հասակը աղջիկը միմիայն

*) Տղամարդու այս խանդոտութիւնն է, որ առաջ է բերել այրի կնոջ սպանութիւնը ամուսնու դերեզմանի վրա։ Հնդկաստանում, Պերու, Մեկսիկայում, այրի կնոջ ողջ-ողջ

առանց ծածկոցի է դուրս թողնվում; իսկ 8—10 տարեկանից սկսած նա պէտք է ծածկի իր ամբողջ մարմինն ու դէմքը (բացի մի աչքից)։

Եթէ կինը բազմաթիւ աղգերի մէջ այսչափ իրաւազուրկ էր, աղջիկը միանգամայն սարուկ էր։ Եւ, յիրաւի, նա ոչ միայն իր հօր գոյքն էր, այլև կախումն ունէր իր եղբօրից, այն սկզբունքի հիման վրա, որ տղամարդն է օջախի տէրը։

Նոյնիսկ կլասիկ երկրներում (Յունաստան և Հռոմ), մինչեւ անգամ մայրը պիտի խոնարհուէր իր որդու առաջ *)։ Հայրը

Թաղում էին ամուսնու կողքին, կամ այրում էին նրա դիակի հետ։ Մի որևէ ինքնակալի մահից յետոյ նրա ամբողջ հարէմը այրվում էր։ Համոզուած, որ ամուսնուց յետոյ այլևս իրաւունք չունեն ապրելու, կանայք իրանք սրբազան պարտք են համարում ոչնչանալ իրանց ամուսնու մահից յետոյ։ Իսկ եթէ նրանց արգելվում է այդ հրապարակով կատարել, հեռանում են անտառներն ու գաղտնի տեղեր և այնտեղ ինքնասպանութիւն գործում։ Մի քանիսի ասելով միայն Հնդկաստանում ամեն տարի այրվում էին 30,000 այրի կին։

*) Թեկեմակն ասում է իր մօրը. „Ե՛տ դարձիր կանանոցդ և պարապիր քո գործերով, հսկի՛ր ճախարակիդ վրա և կարգադրիր աղախինների պարապմունքը, որովհետև այստեղ միայն տղամարդիկ իրաւունք ունեն դատողութիւն տալու, և ամենից առաջ իրաւունքն ինձ է պատկանում, քանի որ ես եմ տանտէրը“։

և եղբայրը իրաւունք ունեն ծախել տան աղջկան, կամ նուիրել ում կամենան։ Շատ տեղերում մինչեւ այժմ դեռ գոյութիւն ունի հիւրասիրութեան այն քստմնելի ձեւը, որ տանտէրը գիշերը հիւրի մօտ է ղրկում իր կնոջը կամ աղջկան։ Հասունացած աղջիկը այսպիսով արժէք է ստանում և եթէ նա այնքան էլ օգտաբեր չէ ընտանիքի համար, գոնէ վաճառելու ապրանք է դառնում։ սակայն այս կենդանի ապրանքը աւելի էժան էր, քան շատ անկենդան իրեր։ Մովսէսի օրէնքով կինը այնքան արժէր, որքան սարուկը, իսկ դուրանը աղջկայ գինը դրել է ոչ պակաս քան 10 դիրմ (1 ռ. 50 կ.)։ Աղջիկ գնողը իրաւունք ունէր լաւ ընտրելու իր ապրանքը և դրանից է մնացել շատ տեղերում նորահարսին պսակից առաջ տկլորացնելու ու զննելու սովորութիւնը, որ կատարում են կանայք։

Բազմակնութիւնը, հարեմային սիստեմը, մի ահագին առեւտուր էին սահմանել վաճառատ արեւելքում; մանաւանդ որ բազմակնութիւնը սրբագործուած էր կրօնով *)։

*) Հնդկական երկրներում դեռ չի վերջացել աղջկայ ընծայաբերումն տաճարին, այսպիսով էր որ կազմը-

Մահամմէդի օրինակը սուրբ էր, և Արաբստանի կիզիչ արեւի տակ կրքերը բերբոքվում էին անդիմադրելի ոյժով ու ամբողջ երկիրը դարձրել էին հեշտասիրութեան բովարան։ Մինչեւ այժմ, չնայելով Եւրոպայի արդելքներին, Պաղեստինէի, Արաբստանի, Իրանի հովիտում, Փոքր-Ասիայի, Աֆրիկայի լայնատարած մահմեդական երկրներում դեռ շրջում են «կենդանի ապրանքի» վաճառականներ, որոնք ամեն հնարքով որսում են սպիտակամորթ և սեւամորթ գեղեցկուհիներին և մատակարարում նրանցով զօրեղների հարէմներին։

Առհասարակ հին քաղաքակրթուած երկրներում աղջիկը աւելի անկախութեան նշոյլներ էր վայելում, որոնք միանգամայն խեղդվում ու ջնջվում են յետոյ։

Այսպէս, Եգիպտոսում մինչև սեմիթական ցեղերի տիրապետումն, կինն ազատ էր նոյնիսկ հասարակական գործերին մասնակցելու։ Հրեաների մէջ աղջիկն ու կինը (գոնէ հին դարերում) նոյն իրաւունքներն

վում էին խորամանկ քուրմերի հարէմները և միջնադարեան կաթոլիկ մենաստանները, որոնք ուղղակի դարձել էին զեղխութեան և անառակութեան որջեր!

էին վայելում, ինչ որ տղամարդիկ։ Արաբստանում, ընդհակառակը, դեռ մինչև Մահամմէդի երևալը, նա միանգամայն իրաւազուրկ էր դարձրած։ Այս մարդարէի ճիգը փոքրիշատէ պաշտպան հանդիսացաւ կնոջ, սակայն նկատելի կերպով չբարեփոխեց նրա հասարակական դիրքը։

«Մի ընդհանուր հայեացք գցելով Արևելեան կրօնական ուսմունքների վրա, ասում է մի հետազօտող, մենք տեսնում ենք, որ նրանք ամենքը, թէև տարբեր ճանապարհներով, հասան միևնոյն նպատակին, այն է կնոջ ստորացման և նրա իրաւազրկման»։

Միակ բացառութիւն կազմում են այս տեսակէտից միքանի լեռնաբնակ ցեղեր. այսպէս, ճանապարհորդները պատմում են թուրքմէն, քուրդ, բեդուին աղջիկների ազատութեամբ։ Այս ցեղերի մէջ չկայ հարեմական կազմակերպութիւն, չկայ ուրեմն փակուածութիւն և ոչ չարսաւ։ Աղջիկը ազատ է, ինչպէս իր լեռան այծեամը, ու իր վրանը միշտ տատանող քամին։ Իբրև թափառական, սովորած լինելով արկածալից կեանքի, միշտ դէմ առ դէմ բիւրաւոր պա-

տահարների, պնդուած ընութեան եղանակների փոփոխման մէջ, լեռնաբնակ աղջիկը սովորել է յոյսը իր վրա դնել և այդ պատճառով տղամարդու պէս նա քաջ է և անվախ։

Ամբողջ օրով մատաղահաս բեդուին աղջիկը կամ քրդուհին առնում են իրանց հօտերն ու անհետանում սարերը, չվախենալով ոչնչից—ոչ գայլից, ոչ անձրեւից և ոչ էլ ջահել հովուի հրապոյրներից, որովհետեւ նա տէր է իր գլխին և իր կամքին։

Իբրեւ ընդհանուր կանոն պէտք է ընդունել, որ նստակեաց ազգերի մէջ աղջկայ ազատութիւնը շատ աւելի է սահմանափակուած, քան թափառական ցեղերի մէջ։ Այս վերջինների կենցաղը հէնց տրամադրում է աղջկան ինքնուրոյն լինել։

Սպարտայում աղջիկը, ինչպէս և տղան, իր ծնողներինը չէր, այլ համայնքինը, հանրապետութեանը, ինչպէս կը տեսնենք յետոյ։ Որքան անողորմ ու դաղանային էր հանրապետութեան վերաբերումն դէպի ապատաւոր աղջիկները, որոնց անդունդն էին նետում, այնքան էլ մեծ էր նրա խնամքն

ու սէրը դէպի լաւ կազմուածք ունեցողներն ու առողջները։ Սրանք էին ապագայ սերնդի մայրերը, սրանցից էր կախուած երկրի քաղաքական ոյժը, առողջ ու քաջ զինուորների արտադրութիւնը։

Կառավարութիւնը միջամտում էր ընտանիքի գործերին, նոյնիսկ սահմանափակում էր որդեծնութիւնը, եթէ երեխաների թիւը բաւարար էր համարում, այսպիսով չափաւորում էր ամուսինների փոխադարձ սէրը...

Որդուն խլում էին մօր գրկից դեռ երեխայ հասակում և կրթում էին նրան հասարակական հիմնարկութիւնների մէջ, հանրապետութեան հաշուով։ Ծնորհիւ լաւ կրթութեան ու դաստիարակութեան, ինչորհիւ մարդավայել վերաբերման, որ վայելում էր սպարտուհին, նա, ճշմարիտ է, կամաց-կամաց, բայց դարձեալ բաւական ոյժ ձեռք բերեց դարերի ընթացքում, և սկսեց ձրդտել դէպի ինքնուրոյն կենցաղ։

Այսպէս, հռոմէական համայնքում, որտեղ հայրը անպայման իր ընտանիքի տէրն էր և իր զաւակների վրա կեանքի ու մահի իրաւունք ունէր, աղջիկը կամաց-կամաց

որոշ, թէև դեռ միայն ձեւական, ինքնուրոյնութիւն ձեռք բերեց։ Նրան իրաւունք էր տրուած փեսացու ընտրել իր համար և կարող էր իր մասն ունենալ ընտանեկան կարողութիւնից։ Հետը բերած սեփականութիւնը օրէնքը այլևս չէր խլում նրանից, որ ամուսնուն տայ. նա տէր էր մնում իր օժիտին և ազատ էր կտակելու իր զաւակներին։

Ցաւակցաբար դրուածքիս ծաւալը թոյլ չի տալիս ինձ կանգ առնել կնոջ իրաւունքների զարգացման վրայ կլասիկ Հռոմում; կ'ասենք միայն, որ այնտեղ կինը կամաց-կամաց, անդադար բողոքի ոյժով, ձեռք բերեց մեծ արտօնութիւններ, մրցում էր տղամարդու հետ և նոյնիսկ իշխում նրա վրայ այն աստիճան, որ Կատոնը հրապարակով այս խօսքերն էր արտասանում։ «Ամեն տեղ տղամարդը իշխում է կնոջ վրայ, իսկ մենք, որ տիրել ենք բոլոր ազգերին, կնոջ իշխանութեան տակն ենք ընկել»։

III

ԱՂՋԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՐԵՐՈՒՄ

Եկեղեցու մեծ հայրերի հայեացքը կնոջ վրա.—Ամուսնութիւն եւ կուսութիւն.—Աշխարհային կեանքի ունայնութեան գաղափարը եւ նրա հետեւանքները.—Հոգեւորականութեան ոյժը.—Աղջիկը միջին դարերում.—Ասպետականութիւն եւ կնոջ պատուի բարձրացումն.—Լիւրերը եւ ռեֆորմացիայի խաղացած դերը կնոջ հարցի մէջ.—Կանացի սեռի դիրքը նորագոյն դարերում։

Քրիստոսի վարդապետութիւնը ձգտեց բարձրացնել կնոջն իր ընկած դիրքից. կինը տղամարդու հաւասարը դառաւ գոնէ հանդերձեալ կեանքում։ Յիսուս գութ ու նեղողամտութիւն ցոյց տուեց ընկած կնոջն անդամ և իր կենդանի օրինակով քարոզեց, որ կինը ևս արժանի է համակրանքի և յարգանքի։

Այս ուսմունքը պիտի բարձրացներ տղամարդու աչքում գեղեցիկ սեռի արժէքը, սակայն ժամանակ է հարկաւոր մի թէորիայի կեանքի մէջ մտնելու համար, և ճշմարիտ որ, քրիստոնեայ կինը դեռ երկար դարեր, մնում է ստորացման վիճակի մէջ և այդ դիրքը սրբագործվում է մեծ քարոզիչների կարծիքով։

Եկեղեցական մի ժողովի մէջ (6-դ դարում) եպիսկոպոսներից մէկը ապացուցանում էր, թէ կինը մարդ չէ և հարց յարուցեց, թէ ինչ կերպարանքով պիտի յարութիւն առնի նա—կնոջ թէ տղամարդու։ Աւետարանը որոշ կերպով չէր ասում, թէ կինը հաւասար է տղամարդուն և մեծ հայրերից ամեն մէկը իր մեկնութիւնն էր տալիս, բայց ամենքն էլ համամիտ էին, որ կինը պիտի հնազանդ լինի մարդուն և հետեւի, այսինքն հպատակուի նրան։

Իսկապէս կնոջ բացակայութիւնը երրորդութեան մէջ, մի զօրեղ հարուած էր նրա հաւասարութեանը։ Հրեշտակների մէջ էլ կին չկար։ Աղջիկը իրաւունք չունէր, «որքան էլ նա դիտուն լինի, ոչ քարոզչութիւն անելու, ոչ մկրտութիւն կատարելու,

ոչ մօտենալու տաճարին, ոչ սրբազան անօթներին ձեռք տալու և ոչ էլ խնկարկելու»։

Եկեղեցին երբէք չի կարողացել ներել կնոջը նրա նախամօր Եւայի յանցանքը։ Քարոզիչները մարդկութեան թշուառութիւնը նրան էին վերագրում, և սրանցից մէկը բացականչում է. «Կին, դու դժոխքի դուռն ես, դու ես, որ առաջինը ձեռք մեկնեցիր արգելուած պտուղը քաղելու և դրանով խախտեցիր Աստուծու օրէնքը. քո պատճառով էր, որ մեռաւ Աստուածորդին։ Երբ դու տեսնում ես կնոջ, իմացիր, որ քո առաջ մարդ չէ կանգնած, այլ վայրի գազան, այլ սատանան անձամբ ինքն է դա. նրա ձայնը—օձի ֆշոցն է»։

Մի պատմաբան բերում է ս. Երոնիմոսի այս խօսքերը. «Կինը սատանայի դուռն է, անառակութեան ուղին, կարիճի խայթոցը»։

Ահա թէ որչափ սիրալիր էին եկեղեցու հայրերը դէպի գեղեցիկ սեռը։

Կինը, իր նախամօր աններելի մեղքով ծանրաբեռնուած, անդադար ղղջումով ու ապաշխարանքով միայն կարող էր երկնքի արքայութիւն ժառանգել։

Սակայն քրիստոնէական եկեղեցին սըր-

բագործելով պսակը, ընդունելով նրան իբրեւ ծէս, եկեղեցական ծէս, բարձրացնում էր աղջկայ դիրքը հասարակութեան մէջ։ Բայց այնուամենայնիւ եկեղեցու մեծ հայրերն սկսեցին նայել ամուսնութեան վրա, իբրեւ մի անհրաժեշտ չարիքի վրա և պսակը դարձաւ մի զիջումն մարդկային թուլութեան, իսկ իսկական քրիստոնեայի իդէալը մնաց մենակեցութիւնը, մարմնի սպանումն իբրև հոգու արատաւոր կեղեւի։ Չէ՞ որ ինքը Յիսուս անպսակ էր, չէ՞ որ Նրա Մայրը, թէև ամուսնացած, բայց կոյս մնաց և կոյս ծնեց։ Շատերը քարոզում էին, թէ ամուսնութիւնը չարիք է։ «Կնոջ սէրը, ասել է ս. Թովմաս, այդ մահուան անդունդն է. ամուսնութիւնը չի օրինաւորում սէրը, այլ հազիւ ներելի է դարձնում նրան»։ Ուստի աղջկայ իդէալն էր—հեռանալ աշխարհից, նուիրել իրան Աստուծու պաշտաման և մնալ անարատ մինչև մահ։

Կոյսը Քրիստոսի հարսնացուն էր, և նրա առջև բաց էին արքայութեան դռները։ Մարդիկ պիտի անարատ մնային թէկուզ վերջանար մարդկային ցեղը աշխարհիս երեսից։ Առաքինութեան վրայ ունեցած այս հայեացքը միանգամայն պիտի յեղաշրջէր մատաղ սերնդի կրթութեան ձեւը։ Աշխարհը ունայնութիւն էր, պէտք էր հեռանալ նրանից, որովհետեւ նա լի էր հրապոյրներով, և մենակեցութեան ու անամուսնութեան գաղափարը դառնում է ղեկավարող սկզբունք. կղերականութեանը մնում էր միայն շահագործել ու աւելի բորբոքել հասարակութեան այս մոլութիւնը։ Մինչին դարերում մանր բռնակալների, բարոնների ու հերցոգների դղեակներին կից կամ աւելի ևս յաճախ, իբրեւ բռնակալութեան անկախ կենտրոններ, փայլում էին վանքերի ոսկեզօծ գմբէթները, այն ինչ թէ ամրոցների և թէ այս մենաստանների ստորոտում, կարծես ջնջխուած նրանց ահռելի ծանրութեան տակ, գլուխը քարշ գցած ու մէջքը կորացրած խռնուած էր հլու ամբոխը, որ մատնուած էր իր ամբողջ կեանքում իր արիւն-քրտինքով յագուրդ տալու դղեակների ու վանքերի զեղխութեան ու անառակութեան կրքին։

Հպատակ ամբոխը բարոնի սեփականութիւնն էր, ինչպէս ռուս չինականը մի ժամանակ պօմեշչիկինը. ինքնակալը ծծում

էր ոչ միայն իր հպատակների բոլոր տնտեսական հիւթերը, այլ և զրկում էր նրան մարդուս ամենաթանկագին սեփականութիւնից—ընտանիքի բարօրութիւնից։

Միջնադարեան հասարակութեան մէջ աղջիկը ծնողներին չէր պատկանում և նրա կուսութիւնը բարօնի սեփականութիւնն էր. այդ ծայրայեղ բռնակալութեան դարերում նորահարսի առաջին գիշերը տիրոջն էր... Ֆէօդալը քանդում էր ընտանիքի հիմունքը, խլում էր աղջկան ու կնոջը, ծախում էր «հոգիները», բաժանելով մարդուն կնոջից, աղջկան ծնողներից և ամեն տեղ տարածում էր անբարոյականութիւն։ Անդադար կռիւների ու արշաւանքների համար ժողոված զօրքերին թոյլ էր տրվում ամեն տեսակ զեղխութիւն։ Զինուորը բռնաբարում էր աղջիկներին, խլում էր կնոջը ամուսնուց, պղծում էր ու քանդում երկրի բարոյական զգացմունքները և անպատիժ մնում։

Հոգեւորականն էր միայն, որ դեռ կարող էր փրկել ընտանիքը բարոյական անկումից, բայց կաթոլիկ կղերը ինքն էր պղծում ընտանիքը, ինքն էր անբարոյականու-

թեան սաղմեր դցում ժամանակակից հասարակութեան մէջ։

Քարոզելով մենակեցութիւն և հրաժարում երկրաւոր հաճոյքներից, նա հրապուրում էր կոյսերին դէպի մենաստանները, որոնց մէջ ազատ մուտք ունէր ինքը, և որոնք միջին դարերում կերպարանափոխուել էին անառակութեան կենտրոնների և շահագործվում էին հոգեւորականութիւնից, իբրեւ հասարակաց տներ։

Եւ այս նպատակով կղերականութիւնը իր օգտի համար միանգամայն իր ձեռքն էր առել աղջկայ կրթութիւնը և վարում էր նրան այնպէս, ինչպէս ձեռնտու էր իրան, պատրաստելով նրանցից կամաղուրկ մանրքէններ, հլու հպատակ իր կրքերի։

Այսպէս նիզակն ու խաչը իրար գըրկած, միշտ զարզանդի տակ էին պահում միջնադարեան աշխարհը և ապականել էին ընտանիքը։

Իբրեւ բողոք կնոջ այս անպատուութեան և անարգական վերաբերման դէպի ֆէօդալական դարեշրջանի կինը, բարձրացաւ ասպետականութիւնը, որ քարոզեց կնոջ կուլտը, սրբագործեց սէրը և աղնուացրեց

տղամարդու վերաբերումն դէպի կինը։ Կինը այս շրջանում սրբացրած էր, հասցրած չաստուածուհու փառքի, ամեն ասպետ իր տիրուհին, իր դուլցինէն ունէր, որին նուիրում էր իր կեանքը, որի մի ժպիտի համար ամենավտանգալից գործեր էր կատարում, տարիներով պատերազմներ էր վարում։

Միջնադարեան հերոսի ամենաթանկագին պարգևը իր դուլցինէի մի համբոյրն էր։ Ամեն կին իրաւունք ունէր ասպետից հովանաւորութիւն ու պաշտպանութիւն պահանջելու, ով էլ որ լինէր նա, առանց մինչեւ անգամ սոխպուած լինելու իր ով լինելը յայտնելու։ Կրքերի այս բռի տիրապետութեան դարում երբ գիւղացին, շինականը—ոչ-ազնիւը անդէն մռնչում էր անթիւ բռնակալների ու հոգևորականների լծի տակ, բարձր իշխող դասակարգի օրիորդն ու կինը ասպետական կեանքի փարոսն էր դառել։ Կնոջ այս կուլտը մի մոլութեան մանիա էր դառել այն աստիճան, որ մարդիկ անասելի տանջանքներ էին կրում, հերոսութիւններ կատարում մի տիկնոջ կամ օրիորդի համար, որին չէին տեսած, կամ նոյնիսկ որոնց ստեղծել էին իրանք իրանց

երեւակայութեան մէջ։ Կրկնում ենք, որ այս ասպետական վերաբերումն դէպի կանացի սեռը սահմանափակուած մնաց որոշ դասակարգի մէջ և երբէք չթափանցեց ժողովրդի խաւերը։ Այնտեղ աղջիկը դեռեւում էր միշտ միևնոյն ստոր վիճակից, տղամարդու քմահաճոյքին հպատակուած։

Լիւթերը բողոք բարձրացրեց կաթոլիկութեան ֆանատիկոսութեան դէմ, մաքրեց եկեղեցին կռապաշտանման ծէսերից, զինուեց անառակութեան դէմ և քանդեց մենաստանները, հերքեց պասը, ամուսնացրեց հոգեւորականութիւնը։ Սակայն այս բեֆորմատորի հայեացքները չունէին մեծ յեղափոխիչներին յատուկ պարզութիւնն ու ընդարձակութիւնը, և կինը նրա աչքում մնաց նոյն ստոր արարածը, որ պիտի ամեն բանում հպատակուի իր ամուսնուն. նա պիտի հրաժարուի աշխարհային հրապոյներից, խուսափի զուարճութիւններից և փակուի տանը։ Այսպիսով նա միաք ունէր վերականգնել հին նահապետական ընտանիքը. բայց ինքը երկրպագու լինելով տղամարդու հեղինակաւորութեանը և կնոջ հպատակման տղամարդուն, նա ոչ մի նկատելի բարելա-

ութիւն չմտցրեց կնոջ դրութեան մէջ։ Քարոզելով, թէ «ով չի սիրում գինի, կնոջ և երգ, նա իր ամբողջ կեանքում տխմար կը մնայ», նա քարոզում էր տղամարդկանց նոր ձեւի էպիկուրէութիւն, այն ինչ կնոջը զրկում էր նոյնիսկ ամենաանմեղ զուարճութիւնից, ինչպէս է թատրոն, հանդէսներ այցելելը, կամ ժապաւէններ ու զարդեր հագնելը, դաշնամուր ածելը. իսկ անբարոյականութիւնը նա ամեն յանցանքից վեր էր դասում։

«Ընտանիքի մաքրութիւնը և աղջկայ անմեղութիւնը ուզում էին պահպանել մրտրակի, բանտի և խայտառակութեան ահով», ասում է Շաչկով։ Ցեղափոխուած եկեղեցին ոչ միայն չաղատեց աղջկան հօր քմահաճութիւնից, այլ աւելի ևս ամրացրեց հօր իշխանութիւնը, և ամուսնութեան խընդրում հայրը մնաց նոյն լիազօր տէրը։ Այսպիսով ամուսնութիւնը դառաւ մի առևտուր և վաճառուած աղջիկը անհրաժեշտաբար պիտի հալածուած, արհամարհուած ու ճնշուած ամուսին դառնար։

Սակայն մտրակը, բանտն ու նշանակութիւնը չէին կարող փրկել ընկած բարքերը։ Եւրոպան քանի գնում, աւելի խոր էր ընկղմվում զեղխութեան և անբարոյականութեան մէջ։ Անկարելի է և տեղը չէ այստեղ նկարագրել նոր դարերում տիրող անասելի անբարոյական կեանքը։ Օրիորդը մրցում էր կանանց հետ անառակութեան մէջ։ Սնանկացած արեստոկրատուհին ծախում էր իրան, իր պալատների շքեղութիւնը պահպանելու համար, վաճառում էին նոյնպէս իրանց անձը քաղցած բանուորի և անասելի թշուառութեան հասած գիւղացու կինն ու աղջիկը, քաղցից չմեռնելու համար։ Եւ տղամարդը, հզօր թագաւորներից սկսած մինչեւ վերջին զինուորը, նայում էին կնոջ վրա, իբրեւ մի ծախու զուարճալիքի վրայ։ Նորագոյն ժամանակներս մեքենաների ահռելի ոյժը խլեց կնոջ ձեռքից ապրուստի աղբիւրները, չպրաեց աղջկան հրապարակի սալայատակի վրայ և մատնեց նոյնպէս զաղրելի ինքնավաճառման։ Ան-էլ չքաւորութեան տակ ճնշուած ծնողներն անգամ մղում են իրանց դեռահաս աղջիկներին դէպի անվայել կեանք, իսկ աւելի բարեխիղճները որոնում են մի կերպ «տեղաւորելու» իրանց աղջիկներին, ամուս-

նացնելով նրանց, ուր հետ էլ որ պատահի, ինչպէս էլ որ պատահի, միայն թէ որքան կարելի է շուտ հեռացնեն տնից այս անպէտք ծանրոցքը։

Եւ մենք տեսնում ենք վաղաժամ ամուսնութիւնը իր կորստաբեր հետեւանքներով*)։

Այսպէս, նոյնիսկ Քրիստոսի լուսամիտ կրօնը անկարող եղաւ բարձրացնել կնոջը իր միշտ հպատակ դիրքից։ Եւ այդ հասկանալի է, քանի որ կնոջ ստորադրութեան պատճառները աւելի խոր էին և խրուած էին երկրի տնտեսական տնանկութեան մէջ։ Ուրեմն կրօնական յեղափոխութիւնը բաւական չէր ընտանիքը փրկելու համար, հարկաւոր էր տնտեսական յեղաշրջումն, որ մի կողմից ստիպէր անքան կապիտալիստին ու արիստոկրատին աշխատելու և այդպիսով դուրս գալու զեխութեան և անառակութեան տիղմի միջից, միւս կողմից իսկական քանուորի ու գեղջուկի վաղուայ հացը ապահովացնելու։

Կանացի սեռը ամեն դարերում բա-

*) Տե՛ս իմ «Ամուսնութիւն»։

ցայտապէս տանջուել է իր անփառունակ դրութիւնից, և միշտ բողոքել է տղամարդու գերիշխանութեան դէմ, և դարերի ընթացքում կամաց-կամաց կինը ձեռք է բերում խոշոր իրաւունքներ, որոնք նրանց չբարձրացնելով հանդերձ մինչեւ հաւասարութիւն, այնուամենայնիւ փոքրիշատէ ապահովացնում են նրան որոշ դիրք, իբրեւ հասարակութեան անդամի, իբրեւ իրաւաբանական անհատի։

IV

ՀԱՅ ԱՂՋԻԿԸ

Հայ կնոջ դիրքը հնումը.—Աղջիկը ընտանիքի մէջ.—Ծնողների իրաւունքները.—Աղջկայ նշանդրէքը («օրորոցի խաղը» և «գտակի պսակ»).—Սիրոյ բացակայութիւնը ամուսնութեան մէջ.—Կովկասի տնտեսական դրութեան նոր ժամանակները եւ գիւղական երիտասարդութեան ապականութիւնը մեծ քաղաքների մէջ.—Երիտասարդներն արտաւորում են հայ ընտանիքը գիւղերում.—Քաղաքացուհու կեանքը, «ուսում առած» աղջիկը եւ նրա կրթութիւնը.—«Զարգացած» հայ շրջանի օտարանումն.—Օժիտը իբրեւ անբարոյականացնող միջոց.—Նոր սերնդի վտանգումն։

Մի չափազանց հետաքրքրական ուսումնասիրութիւն կը լինէր հայ աղջկայ դիրքի պատմութիւնը։ Թողնելով աւելի հեղինակաւոր պատմագէտներին այս կարեւոր հարցի մշակումն, ես այստեղ առաջ կը բերեմ այն գաղափարը, որ ես դուրս եմ բերել իմ մասնաւոր հետազօտութիւններից։

Հայաստանի մէջ կանացի սեռը այնպիսի ստրուկ չի եղած, ինչպէս միւս արեւելեան ազգերի մէջ։ Մի քանի թագաւորների անունների կողքին մենք գտնում ենք և նրանց կանանց ու դուստրների անունները։ Հեթանոսական և նոյնիսկ պատմական շրջանում բազմակնութիւնը և հարեմը գոյութիւն չի ունեցել Հայաստանի մէջ, որ ապացոյց է մարդավայել վերաբերմանը դէպի կինը։ Ընկնելով պարսիկների լծի տակ, հայերի կեանքը ձեւակերպուելու էր տիրապետող ժողովրդի կենցաղին և հայ ընտանիքը պիտի զգար իր վրա բռնակալ-բարբարոսական ռեժիմի ծանրութիւնը։

Հայ կինը քրիստոնէութիւն ընդունելով չերջանկացաւ. նա մնաց փակուած յարկի տակ, նուիրելով իրան որդեծնութեան և տնարարութեան գործին։ Կնոջ փակուածութիւնը գուցէ աւելի ևս ստիպողական դարձաւ, երբ մահմեդական ազգերը նուաճեցին Հայաստանը և պղծեցին հայ ընտանիքը, երբ կորաւ աղջկայ համար պատուի ապահովութիւնը։ Նա փակուեց տանը, որպէսզի խուսափի առեւանգումից ու բռնաբարութիւնից։

Մեր պատմագիրներից մի քանիսը, ի միջի այլոց նաև Եղիշէն, սքանչանում են հայ կնոջ առաքինութիւններով, նկարագրում են նրա անձնուիրութիւնը աղգայնութեան ու կրօնի գաղափարին, նրա բարոյական կեանքը։

Հայ կոյսերը եւս, ինչպէս և միւս մեծ ազգերի կանայք, Քրիստոսի ուսման առաջին աշակերտները, ջատագովները, իրանց արեան գնով տարածողներն են եղել։ Բաւական է յիշել երջանկայիշատակ կոյս Գայիանէին, Հռիփսիմէին և ուրիշներին։ Կոյսերի այս բարեպաշտ գործունէութիւնը անտարակոյս պիտի աւելի մեղմացուցիչ ազդեցութիւն գործէին ժողովրդի վրայ, քան շատ քարոզիչների, կաթողիկոսների ու ճգնաւորների ջանքերը։ Միևնոյն ժամանակ կնոջ համարումն պիտի ամրանար ու աճէր։

Ճիշտ տեղեկութիւններ չունենալով աղջկայ ընտանեկան և հասարակական դրութեան մասին պատմական շրջաններում, մենք պէտք է աշխատենք լուսաբանել մեզ այդ հարցը ժողովրդագրութեան տուած ցուցմունքներով, մանաւանդ որ հայ ժողովրդի ետ ընկած խաւերում երևի պահ-

պանուել է աւանդաբար հին ժամանակների հայեացքներն ու ընտանեկան կազմը։

Հօր իրաւունքը տան մէջ մեծ է, յաճախ անսահման. ամբողջ գերդաստանը հնազանդվում է տան մեծի, տանուտէրի հրամանին, և քանի որ հին գերդաստանը գոնէ միքանի տասնեակ տարիներ առաջ բաղկացած էր լինում 30—50 անդամից, ուրեմն տան մեծը մի ամբողջ համայնքի գլուխ էր. նա էր գերդաստանի բոլոր գոյքի անկօնտրոլ տէրը, նա էր տան գանձապահը, և անդամների բոլոր աշխատանքը պիտի նրա ձեռքն անցնէին։ Տանուտէրն էր նոյնպէս և տղաներին ու աղջիկներին ամուսնացնողը առանց ամուսնացողների կամքի և յաճախ հակառակ նրանց հաճութեան։ Հին հայ հասարակութեան մէջ մանաւանդ աղջիկը մի անձայն և անկամ էակ էր։ «Նա տան սպասուհին է, նա միայն տան հասակաւոր կանանց հրամանները պիտի կատարի. «այս բեր, այն տար», իսկ միջամտել մի որևէ գործի մէջ, առանց հարցնելու, իրաւունք չունի նա», ասում Ռաֆֆին։ Արդէն երեխայ հասակում, նոյնիսկ ծիծ տալու մէջ մայրը խտրութիւն է անում տղայի

ու աղջկայ մէջ։ Աղջիկը անխնամ է թող-
նուած, ենթարկուած ամեն տեսակ զըր-
կանքների, ցոկողութեան, ծեծի ու անէծ-
քի, որոնց մէջ պարզ արտայայտվում է ար-
համարհանք դէպի նրա սեռը, որոնցից աղ-
ջիկը հասկանում է, որ ինքը մի ծանրու-
թիւն է տան համար, որ իրան կերակրե-
լով, ծնողները մեծ զիջումն ու բարերարու-
թիւն են անում և այս համոզմունքը, ինչ-
պէս նկատում է նոյն հեղինակը, նրան չի
վիրաւորում, նա ընտելացած է և նրա կար-
ծիքով այլապէս չի էլ կարող լինել։

Ամուսնութիւնն առհասարակ շատ վաղ
է կատարվում. 12—13 տարեկան երեխան
յաճախ կին է դառնում, և կին է դառ-
նում մի հասակաւորի։ Ռուսահպատակ հայե-
րի մէջ այս անբարոյութիւնը կարծես վե-
բանալու վրա է, բայց պարսկական ու
տաճկական երկրներում դա առօրեայ ե-
բեւոյթ է։

Եւ տան մէջ ամենքը, նոյնիսկ հասա-
կով փոքր տղան իրան իրաւունք է համա-
րում աղջկան վիրաւորելու, ծեծելու, մա-
զերից քաշելու, լաւ բաժինը նրա ձեռքից

խլելու, և նա պիտի անձայն տանի այդ
անպատուութիւնները։

Այսպէս, ճնշուած բարոյապէս, անընդ-
հատ ֆիզիկական աշխատանքի մէջ անընդ-
պատ հակառողջական դրութեան մէջ գըտ-
նուելով, հայ աղջիկը չի կարողանում զար-
գանալ ֆիզիկապէս ու մտաւորապէս։

Նրա ձեռները կոշտանում են, մէջքը
կռանում, փորը դուրս ընկնում, մի ուսը
միւսից ցած (կուժ ու ծանրութիւններ
կրելուց), իսկ թոնրատան այրող ծխից կո-
պերը հաստացած-կարմրած, երեսի գոյնը
փչացած. հայ գեղջկուհին կորցրել է կա-
նացի նրբակազմութիւնը, քնքշութիւնը, և
դեռ մատաղ հասակում կորցրել է նաեւ
մանկահաս հասակի թարմութիւնը։ Միեւ-
նոյն ժամանակ ֆիզիկական անկանոն ու
անչափաւոր աշխատանքը նրա շարժումնե-
րին առնացի կոպտութիւն է տալիս։ Սրան
աւելացրէք և անշնորք հագուստը, որ տեղ-
տեղ ուղղակի աղաւաղում է կազմուածքը,
և դէմքի գծագրութիւնների այն քաշուող,
ամաչկոտ արտայայտութիւնը, որ երբեմն
անինտելիգենտի կնիք է դրոշմում հայ

աղջկայ դէմքի վրա և դուք կըստանաք մի անդրաւիչ էակ։

Սակայն մեզ յայտնղուել է տեսնել միևնոյն աղջկան և՛ ընկերուհիների հետ զուարճանալիս, երբ նրա դէմքի ստիպողական կնճիռները ուղղուած էին, և՛ անծանօթ տըղամարդկանց շրջանում, երբ նա ստիպուած էր ամօթխածութեան և պարկեշտութեան դիմակ հագնել։ Ի՜նչ մեծ տարբերութիւն. մռայլ, անշարժ և իր անշարժութեան մէջ անմիտ դէմքը յանկարծ պարզվում է ազատութեան մէջ, այտերն սկսում են կարմըրել, աչքերը կենդանանում են, ժպիտը բաց է անում գեղեցիկ ատամների շարքերը և այն մեռած դէմքի վրայ փայլում է կեանքը, պատանեկութեան թարմացնող հրապոյրը։

Հայ աղջիկը, նոյնիսկ գեղջկուհին չափազանց ուսումնասէր է։ Մեծ երջանկութիւն է նրա համար գրել-կարդալ սովորելը։ Յաւակցաբար նրա այդ ծարաւը յագեցնելու համար բաւականաչափ դպրոցներ չկան։ Քաղաքներում, նախ քան մեր դըպրոցների փակուելը, մի մեծ և ուրախալի շարժում էր նկատվում դէպի աղջիկներին

ուսում տալը։ Մի քանի տարուայ ընթացքում մեր դպրոցները արդէն գրագէտ և ուսումնասիրաբար օրիորդների մի նոր սերունդ էր պատրաստել։ Եւ եթէ այժմ հայ ընտանիքում լսվում է, աւաղ, երբեմն միայն հայ գրականական լեզուն, դրանով մենք պարտական ենք այդ սերունդին, որի մէջ դեռ ուսումնարանական շրջանից պահանջ է դարձել մայրենի լեզուով խօսել և այդ լեզուով կրթել երեխաներին...

Աղջկայ բաղդը անօրինում են ծնողները և մասնաւորապէս հայրը, և բողոքելը ամենամեծ անհարգութիւն է համարվում։ Դեռ ամենամատաղ հասակում նրա ապագան որոշվում է. նա նշանադրվում է, շատ տեղերում 9—10, նոյնիսկ 5—6 տարեկան հասակում աղջիկն արդէն նշանած ունի, որ նրա հետ «իր միաքը կիսում է»։ Յայտնի է նոյնպէս օրօրոցային նշանդրէքները։ Այս հին սովորութիւնը միքանի տեղերում «ororng խազել» է կոչվում, որովհետև նշանելիս օրօրոցների վրա խազ են անում *) և

*) Զգիտեմ պահպանուել է դեռ մեր մէջ այս տարօրինակ սովորութիւնը թէ ոչ. բայց պարսիկների և

մեծ անազնուութիւն է համարվում այսպիսի նշանդրէքը քանդելը. քանդողը բամբասանքի և մեղադրանքի է ենթարկվում։

Հայերի մէջ «աղջկան մարդու են տալիս» և ոչ թէ աղջիկը «մարդու է գնում»։ Այդ ապացոյց է, որ նրա ամուսնանալը իրանից չի կախուած։

Հայ գեղջկուհու կեանքի պայմաններն էլ թոյլ չեն տալիս նրան իր կամքով ընտրութիւն անելու և որևէ կերպով իր կամքը յայտնելու։ Փակուած լինելով հօր տանը, իսկ դուրս գալիս, եկեղեցի գնալիս միշտ հսկողութեան տակ գտնուելով, հասած հայ գիւղացի աղջիկը իսկի առիթ էլ չի ունենում աղային տեսնելու և որևէ գաղափար կազմելու նրա «արժանաւորութիւնների» մասին։ Համակրանքն ու սէրը անծանօթ են մնում նրան, և իրապէս նրա համար միևնոյն է, թէ ով է լինելու իր ամուսինը, մանաւանդ որ «հայրը նրա վասը չի կամենայ»։

Թուրքերի բռնակալութեան տակ, աղջիկներին առանձնումից և հարեմ տանելուց ազատելու համար պսակում էին աղայի գ տ ա կ ի հետ, եթէ տան բացակայ էր։

Բաֆֆի

Աղջիկներն ու երիտասարդները առհասարակ իրար տեսնում են.

1. Եկեղեցիներում, ուր հաւաքվում են գիւղի բոլոր աղջիկներն ու տղաները, տարուայ մէջ մի երկու անգամ, Ծաղկազարդին ու Զատկին, և իրար հաւանում։ Այս տօներին գեղջկուհին իր ամենալաւ շորերն է հագնում և մայրը ինչ զարդեր որ ունի, կախում է իր աղջկայ վրա։

2. Ուխտատեղերում, գիւղից ու քաղաքից դուրս։

Ճանապարհի վրա շարվում են տղաներն ու զննում անցնող աղջիկներին։

3. Հարսանիքներում։ 4. Աղբիւրների մօտ, քաղհանքում, այգիներում թութ թափ տալիս։ Այլն։ Այսպիսի ծէսերի ժամանակ աղջիկը երբեմն առաջին անգամն է աչքի ճոթով նայում իր ուզողին։ Առհասարակ նրա հետ գնում է տղայի ազգական աղջիկը, որ և ցոյց է տալիս տղային, երբեմն էլ խօսք ու նամակ է տանում-բերում։ Պատահում է որ այցելութիւններ էլ են սարքում։ Երբեմն էլ աղջկան խափելով իր ընկերուհին տանում է մի տեղ և այնտեղ, իբր թէ պատահմամբ, հանդիպում են հա-

ւանող երիտասարդին։ Ա.յսպիսի հանդի-
պումներից յետոյ տղան ու աղջիկը արդէն
իրար խօսք տուած են համարվում։ Ա.յսպի-
սի պայմաններում, ի հարկէ, իսկական սի-
րահարութեան մասին խօսք չէ կարող լի-
նել *)։

Աղջկայ այս ճնշուած դրութիւնը մի
կողմից, մեղք անելու ահը միւս կողմից,
պահպանել են դարերի ընթացքում հայ
ընտանիքի մաքրութիւնը, որ ասելիք է
դարձել։ Սակայն վերջին կէս դարում հայի
կեանքը կորցրեց իր սահմանափակումն ու
միակերպութիւնը։ Քաղաքակրթութեան հո-
սանքը, կեանքի մրցման դժուարանալը շուռ
տուեցին հայի վիճակի անիւը և հանեցին
նրան նահապետական անշարժութիւնից ու
դցեցին կեանքի կռուի բովը։

Կովկասի տնտեսական դրութիւնը մեծ
ցնցումն ստացաւ։ Երկաթուղին խրուեց երկրի
խորքերն ու շղթայեց քաղաքները և հեշ-
տացրեց նրանց մէջ յարաբերութիւնները։
Միւս կողմից նաւթային դործի վիթխա-

*) «Ազգագրական Հանդէս»։

ի աճումն, հեշտ հարստանալու անդիմա-
դրելի հրապոյրը մագնիսի պէս քաշեց դէ-
պի ինքը երիտասարդ ոյժերը, և կազմուեց
մի նոր դասակարդ, որ գոյութիւն չունէր
առաջ—բանուորական դասակարդ։ Միևնոյն
ժամանակ աղդաբնակութեան աճումից ա-
ռաջացած հողի պակասութիւնը և դրանից
ծագած անտանելի չքաւորութիւնը դուրս
մղեց հայ դեղջուկի նահապետական օջախից
լաւագոյն մատաղ ոյժերը, որոնք հեղեղի
նման լցուեցին քաղաքները աշխատանք
որոնելու։

Ա.յսպիսով սկսուեց մի մեծ հոսանք
դիւղերից, մանր կենտրոններից դէպի քա-
ղաքները, որտեղ հայ երիտասարդութիւնը
ընդունեց տիրապետող բարքերը, շատ բան
տեսաւ և զդաց, որտեղ փոխուեց նրա աշ-
խարհայեացքը, նրբացաւ ու զարդացաւ
նրա ճաշակը։ Ընդունելով քաղաքից մի կտոր
քաղաքակրթութիւն, հայ երիտասարդն ըն-
դունում է նաև այնտեղի անառակութեան
ամբողջ օրէնսդիրքը և վերադառնալով իր
տուն, նա վարակում է իր օրինակով հայ
ընտանիքը, և վարակում է ֆիզիկապէս ու
բարոյապէս։

Եւ մեր աչքի առջև քանդվում է հայ օջախի ամբողջութիւնը,—ցրվում են բազմանդամ ընտանիքները, կորչում է համերաշխութիւնը անդամների մէջ ու ընկնում տան մեծի հեղինակութիւնը, և, որ աւելի ևս ցաւալին է, խախտվում է ընտանիքի մաքրութիւնը... Մեր դաւառների կեանքը հետազօտողներին հարուածում է հայ կնոջ և օրիորդի բարոյական սկզբունքների խախտուելը, որ նկատվում է արդէն շատ տեղերում։

Քաղաքացի աղջկայ կեանքը բոլորովին տարբերվում է վերը նկարագրածից։ Այստեղ հայ օրիորդը շատ աւելի ազատ է և համարեա անկախ։ Վաճառականի, աղնուականի և համալսարանականի երեխաները միևնոյն դպրոցում կրթուելով, չեն տարբերվում միմեանցից ուսումով ու զարգացմամբ, և աշխատում են նմանուել նոյնպէս և արտաքինով։ Այստեղից ծագում են և այն պահանջները, որոնք անդադար անում են աղքատ օրիորդները իրանց ծնողներից, և որոնք անդադար տարաձայնութիւնների և կռիւների առիթ են տալիս։

Գիմնազիան աւարտած օրիորդը իրան այնչափ բարձր է դդում իր ծնողներից, որ արհամարհական կերպով է վերաբերվում դէպի նրանց և ձգտում է բոլորովին անկախ լինել նրանցից, արհամարհելով օջախի նուիրական աւանդութիւնները։ Պէտք է ասած, որ յաճախ ծնողները ընկճվում են իրանց «ուսում առած» աղջկայ պահանջների առաջ և, չկարողանալով զսպել նրան, բարձի թողի են անում...

«Ուսեալ» օրիորդի աններելի արատներից մէկն էլ նրա արհամարհանքն է դէպի մայրենի լեզուն *)։ Այս ախտով վարակուած են մինչեւ անգամ քաղաքային ստորակարգ դպրոցներում սովորողները, կամ հէնց ռուսերէն այբ ու բեն իմացողները, որքան էլ կոշտ ու կոպիտ, որքան էլ նոյնիսկ ծիծաղելի լինէր նրանց ռուսերէնը։ Շատ ծիծաղելի է այն ֆակտը, որ այդպիսի օրիորդները ստիպում են իրանց անդրադէտ մօրն ու պառաւ մամին էլ նոյն լեզուով խօսել իրանց հետ։ Անկարելի է լինում սառնասիրտ կեր-

*) Այս արհամարհումն մայրենի լեզուի և ազգային կեանքի այն ատիճանի է հասնում, որ կրթուած հայ օրիորդը յօժարութեամբ օտար տղայի է մարդու դնում։

պով լսել այդ ողորմելի պառաւների ռուսերէն կոտրատելը։ Ինչպէս, օրինակ. «Скожу тебѣ довай, է, довай, թէ չէ ти знаишь, հա»!..

Ուսեալ օրիորդների զարգացումն այն աստիճանի է հասնում, որ նրանք ամաչում են իրանց գլուխ կապած մօրից և նոյնիսկ իրանց բաղահնչիւն կարծուած անունից։ Եւ Հականոյշը Ольга է դառնում ու Սիրանոյշը—Любовь!...

Հասկանալի է, որ երբ ամուսնանան ու տուն ու տեղ դառնան այդ աղջիկները, իրանց տնից դուրս կը վռնդեն այն ամենը, ինչ որ մայրենի է, ազգային է և կը կրթեն իրանց զաւակներին նոյն օտար ուղղութեամբ...

Մեծ քաղաքների բնակչուհու մտաւոր և բարոյական կեանքը ենթարկուել է նոյն էվոլիւցիային, ինչ որ միւս ազգերի կանանցը։ Թիֆլիզում և Բագուում դժուար է տարբերել հայ օրիորդին ռուսուհուց և հաղիւ թէ Թիֆլիզի «արեստոկրատ» օրիորդը ուսումով և սալոնական կրթութեամբ շատ ցած լինի Պետերբուրգի, հէնց նոյնիսկ Պարիզի օրիորդից։ Սակայն կայ ներքին տարբերութիւն, այն է. հայուհին մեծ մասամբ դուրս եկած վաճառականական անքաղաքակիրթ շրջանից, տանը հիմնաւոր կրթութիւն չի ստացել, զուրկ է հաստատուն սկզբունքներից, զուրկ է նոյնպէս չափաճաշակութիւնից, և նրա բարոյական աշխարհը չափազանց անմշակ է մնում։ Դուցէ այս է պատճառը, որ հայ օրիորդի մէջ, ցաւակցաբար, մենք չքացած ենք տեսնում ազգայնութեան գաղափարը և թուլացած բարոյական հիմունքները...

Հայ օրիորդի քաղաքակրթութիւնը, քիչ բառացութիւններով, սոսկ արտաքին է...

Մենք մի ուրիշ տեղ խօսել ենք օժիտի անբարոյականացնող և ստորացնող ազդեցութեան մասին աղջկայ վրա *), այս դէպքում ևս առիթ կ'ունենանք այդ խնդրի վրա կանգ առնելու, առայժմ յիշենք միայն, որ օժիտը մեծ դեր է խաղում մեր ընտանիքի կազմի մէջ։

Այո, օժիտը առաջնակարգ դեր է խաղում ամուսնութեան խնդրի մէջ. այս պատճառով էլ ի հարկէ սէրը վանուած է։ Աղ-

*) Տե՛ս իմ «Ամուսնութիւն»։

ջկայ սիրահարութիւնը մի անտակտ և անգործնական բան է համարվում և ծնողները ամեն կերպ արգելք են լինում, որ այդ սիրահարութիւնը բնական վախճանի հասնի, եթէ տղան լաւ «պարտիա» չի կազմում։ Իսկ եթէ մի սիրահարութիւն բնական վախճան չի ստանում, հասկանալի է, թէ ինչ ուղղութիւն պիտի տայ նա աղջկայ մտքերին ու բարքին։

Ամուսնութիւնները մեր մէջ այսպիսով լինում են միմիայն որոշ դիտումներով, և մոռացվում է ամուսնացողների ֆիզիկական յատկութիւնները, նրա առողջութիւնը, ժառանգականութիւնը և այլն, այս պատճառով շատ յաճախ ենք տեսնում «բարձր» կոչուած դասակարգի մէջ ֆիզիկապէս և բարոյապէս վատասերուած սերունդ *)։

*) Տե՛ս նոյն գիրքը։

V

ԱԿՆԱՐԿ ՀՆԵՐԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՎՐԱ.

Կրթութեան նպատակը.—Ֆիզիկական կրթութիւն եւ դաստիարակութիւն.—Նորածին երեխայի մտաւոր ու ֆիզիկական անզօրութիւնը.—Հաւի ձուը եւ նորածին երեխաւն ֆիզիկական եւ բանիմացական տեսակէտից.—Կրթութիւնը վայրենի ցեղերի մէջ.—Կրթութիւնը հին քաղաքակիրթ ազգերի մէջ.—Ֆիզիկական կրթական սիստեմը կլասիկ երկրներում.—Ճուկաց փիլիսոփաների հայեացքը կրթութեան վրա.—Ամփոփումն դասական կրթութեան սիստեմի։

—

«Մեծ գործեր կատարելու համար, ասում է մի փիլիսոփայ, մարդ պէտք է այն պէս ապրի, իբր թէ երբէք մեռնելու չէ»։ Այն մեծ էգոիստը, որ արտասանում էր— «ինձնից յետոյ թէկուզ ջրհեղեղ» (après moi le déluge), մի անսիրտ և անմիտ խօսք էր

ասում, որովհետև մարդս բնազդաբար ձգտում է, այսպէս ասած, շարունակուելու իր որդոց մէջ։

Աշխարհը ոչ սկսուել է մեզանով, ոչ էլ կը վերջանայ մեզ հետ։

Մենք շարունակութիւն ենք մեր նախնիքների և ապագայ սերունդները մեր շարունակութիւնը պիտի լինեն։

Եւ այդ նպատակով ամեն ծնող ձգտում է զարգացնել իր զաւակների մէջ այն բոլոր յատկութիւնները, որոնք սրանց իսկական մարդ պիտի դարձնեն։ «Իսկ այդ նշանակում է տալ հասարակութեանը պիտանի անդամներ, այդ նշանակում է պատրաստել մի աւելի լաւ հասարակութիւն, մի աւելի լաւ ազգ, մի աւելի լաւ մարդկութիւն», ասում է Մարիոն։

Կրթութիւնը լինում է ֆիզիկական և մտաւոր, որ կոչվում է նոյնպէս մի խօսքով դաստիարակութիւն։

Մարդկութեան պատմութեան սկզբնեռում մտաւոր կրթութիւնը բացակայ էր։ —Երեխան ինքնիրան էր կրթվում, նմանուելով իր մեծերին. գոյութիւն ունէր միայն

ֆիզիկական կրթութիւնը, այն էլ ամենատարրական ձևով, այն է. իբրև խնամք դէպի զաւակը։

Ո՛չ մի կենդանի էակ այնչափ կարօտ չէ խնամքի, այսինքն կանոնաւոր կրթութեան և դաստիարակութեան, որքան մարդկային էակը։

Մինչդեռ կենդանիների ձագիկները ծնվում են արդէն համարեա պատրաստ ինքնուրոյն կեանքի համար, երեխան աշխարհ է գալիս բոլորովին անզէն, իբրև մի շնչաւոր կոյտ, որին պիտի խնամքով պահել մինչև որոշ հասակ, որ նա զոհ չդնայ շրջապատող բիւրաւոր վնասակար ազդեցութիւններին և քաղցին։

Աշխարհ եկած երեխան, ասում է Սիկորսկին, համարեա զուրկ է մտածելու և հասկանալու որևէ ընդունակութիւնից, զուրկ է նմանապէս և ամեն տեսակ զգացմունքից.—ոչ սիրել գիտէ, ոչ զուարճանալ, ոչ վախենալ, ոչ համբերել ու սպասել։ Այդ դեռ ոչինչ—նա ոչ լսողութիւն ունի, ոչ տեսողութիւն և ոչ մի հասկացողութիւն ձայների, առարկաների ձևի, գոյնի, ոչ էլ

տարածութեան ու ժամանակի մասին։ Այս պատճառով նորածին երեխան բոլորովին անզէն է և, առանց մեծերի խնամքի, նա անխուսափելի կերպով կը մեռնի, քանի որ անկարող է մինչեւ անդամ տեղից շարժուելու։ Երեխայի հետ համեմատելով, նորածին կենդանին զինուած է աւելի մեծ մըտաւոր և ինքնապաշտպանութեան ընդունակութիւններով։ Ձուից նոր դուրս եկած հաւի ճուտը միքանի ժամից յետոյ կարող է արդէն շարժուել, վազել, հաստատ կանգնում է ոտերի վրա և կանգնած զարմանալի մաթեմատիկական ճշտութեամբ կոցահարում է փթռուկը... Նրա վազելը, նրա ուտելու եղանակը, բոլոր շարժումները ցոյց են տալիս, թէ ինչ ճշտութեամբ որոշվում են նրա փոքրիկ ուղեղի մէջ առարկաների մեծութիւնը, նրանց միջի տարածութիւնը և թէ ինչ մեծ հմտութիւնով կծկեցնում է նա իր փոքրիկ մկանները։ Ճուտիկը ճանաչում է իր մօրը, լսում է և կարծես հասկանում է նրա ձայնը։ Նա ընդունակ է վախենալու և փախչելու, եթէ մօր ձայնի մէջ վտանգալից հընչիւններ է լսում։ Երկու-երեք օրուայ ճու-

տը արդէն ծնողներին հաւասար խելք և իմացականութիւն է ցոյց տալիս!

Ո՛րչափ անկատար է երեւում մեզ երեխան, երբ համեմատում ենք նրան այն փոքրիկ ձագիկի հետ։ Երեխան չի ճանաչում իր մօրը, չի լսում նրա ձայնը, ոչ ահ ունի, ոչ երկիւղ։ Այս տարբերութեան պատճառը բացատրում է մեզ գիտութիւնը, որ ուսուցանում է, թէ նորածին երեխայի ուղեղն այնքան կատարեալ չէ, որքան կենդանիներինը։

Առհասարակ քանի բարդ է կենդանու անատոմիական կազմը, այնչափ անզէն է ծնվում նրա սերունդը։ Մարդը, իբրեւ ամենաբարդ կենդանական էակ, արտադրում է ողորմելի, նուազ և թոյլ սերունդ, որ մօր արգանդից դուրս գալիս, մի հաւի ճուտից հազար անդամ անկատար է և թոյլ։

Եւ վայրենի մարդն անդամ, երբ նա կամենում էր պահպանել զաւակի կեանքը, պիտի պահպանէր նրան կորստից, ինչպէս մի նորաբողբոջ տունկ, տալով նրան ուտելիք և հագուստ։

Այս է իսկապէս տարրական կրթու-

թիւնը։ Այնուհետեւ, քանի աւելանում է մանկան հասակը, այնքան էլ բազմակողմանի ու բարդ է դառնում կրթութիւնը, և ծնողները, խնամքի հետ միասին, աշխատում են սովորեցնել իրանց զաւակներին լողալ, ծառ բարձրանալ, որսալ, ընտելացնում են նրան ցրտի, քաղցի ու զանազան զրկանքների։

Աֆրիկայի կաֆրների մէջ թէ տղաները և թէ աղջիկները որոշ սիստեմի կրթութիւն են ստանում, որ մօտեցնում է նրանց Սպարտայում երբեմն թագաւորող մեթոդին։ Որոշ հասակում տղաներն ու աղջիկները հաւաքվում են հմուտ դաստիարակի կամ դաստիարակչուհու շուրջը և սովորում ինչ որ անհրաժեշտ է կեանքի համար։ Աղջիկների մէջ հաստատամտութիւն, կամք, տոկունութիւն զարգացնելու համար, նրանց ենթարկում են զանազան զրկանքների ու տանջանքների, որոնց միջոցին նրանք չպէտք է ցաւ արտայայտեն *)։

Կաֆր կանանց նման, կարմրամորթների կանայք էլ աշխատում են տոկուն ու

*) Լբտուրնո. Կրթութեան էվոլիցիան։

դիմացկուն երեխաներ արտադրել։ Մինչեւ 3—4 տարեկան հասակը աղջիկը մօր կաթով է կերակրվում և օրուայ մեծ մասը մօր մէջքի վրա է անցկացնում, իսկ այս տարիքից սկսած, նա արդէն իր մօր օգնականն է։ Սակայն աշխատանքը յարմարացրած է երեխայի հասակին և ոյժերին։ Այսպէս, մինչեւ 8 տարեկան հասակը աղջիկները ծանր իրեր չեն վերցնում։ Ութ տարեկանից սկսած միայն աղջկան սովորեցնում են մէջքին ցախ կրել, իսկ միքիչ յետոյ նոյնպէս և փայտ կոտորել ու եգիպտացորեն մշակել։ Զարմանալի չէ ուրեմն, որ այստեղ պատիժը գոյութիւն չունի. որովհետեւ նա հակասում է տիրապետող կրթութեան սկզբունքին, այն է, ինքնուրոյնութիւն մշակել մանկան մէջ։

Բոլոր հին քաղաքակրթուած ազգերի մէջ (Հնդկաստան, Չինաստան, Եգիպտոս, Հրէաստան, Պարսկաստան) աղջկայ կրթութիւնը փոքր հասակում ոչնչով չէր զանազանվում տղայի կրթութիւնից. տարբերութիւնը կայանում էր նրանում, որ աղջիկներին սովորեցնում էին տնայնագործութիւն։

Ցունաց հանրապետութիւնների մէջ կրթութեան նպատակն էր պատրաստել առողջ սերունդ. այս պատճառով էլ ֆիզիկական մարզութիւնները սիստեմատիկ էին ոչ միայն տղաների, այլև աղջիկների համար։

Եւ այս միջոցով զարգացնում էին աղջկայ մէջ ոյժ, դրացիա, աշխոյժ և, որ գլխաւորն է, վճռականութիւն և ինքնուրոյնութիւն։

Անտարակոյս, դասական կրթական կեանքում ամենախոշոր ու նշանաւոր տեղը բռնում էին մարզութիւնները։ Յոյն երեխան միշտ մեծ քանակութեամբ խաղալիքներ ունէր և մեր ժամանակուայ բոլոր մանկական խաղերը յայտնի էին նրան։ Մեծերը իրանց օրինակով քաջալերում էին փոքրերին մարզուելու և խաղալու մէջ։ Աղջիկները մրցում էին տղաների հետ հասարակական մարզական հրապարակների վրա, որովհետև նրանցից ևս պահանջվում էր «մարմնի գեղեցկութիւն»։

Հին փիլիսոփաներն ու մանկավարժները զարմանալի հմտութիւնով են խօսում մանկավարժական խնդիրների մասին։ Նրանց

լուրջ հայեացքները մարմնական կրթութեան վրա ապշեցնում են մեզ։

Զկամենալով աւելի երկար կանգ առնել կրթութեան ձևերի վրա կլասիկ հնութեան դարերում, իբրև եզրափակումն, առաջ բերենք Կապտերեվի արած ամփոփումն.

1) Հների մանկավարժութիւնը, որ սերտ կապուած էր հասարակագիտութեան և բարոյագիտութեան հետ, չէր հիմնուած հոգեբանութեան վրա։

2) Հների մանկավարժական հայեացքների մէջ պարզ կերպով արտափայլում էին միքանի չափազանց կարեւոր կէտեր, այն է. ա. ժառանգական յատկութիւնների ներգործութիւնը երեխաների զարգացման վրա, բ. երեխային մօր կաթով կերակրելու անհրաժեշտութիւնը, գ. մանկական խաղերի և բազմատեսակ մարզումների ու շարժումների կարեւորութիւնը, դ. լաւ դայեակի, ծծմոր և դաստիարակի ու վարժապետի անհրաժեշտութիւնը, ե. պատիժների ճնշումը և գովասանքի ու պարսաւի ազդեցութիւնը մանկան վրա, զ. կրթութեան շատ վաղ սկսելու կարեւորութիւնը

և նրա կանոնաւոր ընթացքը և է. կրթութիւնը մանկան առանձնայատկութիւններին յարմարացնելու անհրաժեշտութիւնը։

VI

ԱՂՋԿԱՅ ԿՐԹՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ ԴԱՐԵՐՈՒՄ

Աղջկայ կրթութիւնն ու դաստիարակութիւնը միջին դարերում.—Քրիստոնէական ուսման ազդեցութիւնը. —Ֆիզիկական կրթութիւնը մոռացուած է.—Մօնտէնի եւ Քենըլօնի հայեացքները աղջկայ կրթութեան վրա. —Տիկին Մէնտընօն.—Ժան Ժակ-Ռուսսօի մտքերը. —Կոնդորսէի յեղափոխիչ հայեացքները աղջկայ մտաւոր զարգացման վրա.—XIX դարու գիտութեան ազդեցութիւնը մանկավարժական սիստեմների վրա. —Անգլիական սիստեմը եւ նրա ազդեցութիւնը Եւրոպայի վրա։

«Երբ հետաքրքրում ենք աղջկայ դաստիարակութեան ու կրթութեան զարգացմանը, տեսնում ենք, որ նա զուգընդաբար է ընթանում կնոջ հասարակական դիրքի զարգացման հետ», ասում է մի յայտնի մանկավարժ։

Քանի կինը գտնվում էր ստոր, ստըրկացած դրութեան մէջ, քանի նա տղամարդու առաջ աղախնի դեր էր խաղում, աղջկայ կրթութիւնն էլ արհամարհուած էր։

Բայց փոխվում են հայեացքները քաղաքակրթութեան և կրօնական ուսմունքների ազդեցութեան ներքոյ, և աղջկայ կրթութիւնը սկսում է դրաւել հասարակութեան ուշադրութիւնը։ Այսպէս, կլասիկ երկրներում, որտեղ կինը որոշ իրաւաբանական անհատ էր, աղջիկները յարգի էին և նրանց ֆիզիկական կրթութեան վրա գոնէ ուշադրութիւն էր դարձնվում։

Յաւակցաբար քրիստոնէական ուսմունքը, որ քարոզում էր մարմնի նուաճումն ու ճնշումն, ի փառս հոգու, միանգամայն ետ մղեց աղջկայ ֆիզիկական զարգացման խընդիրը և առաջ քաշեց հոգեւոր դաստիարակութիւնը։

Այս մի մեծ հարուած էր աղջկայ ֆիզիկական զարգացմանը, որ, ինչպէս կը տեսնենք, միակ դրականն է կամքի կազմութեան։

Մինչև դարերի երկար շրջանը ծանրացաւ աղջկայ ֆիզիկական ու մտաւոր

զարգացման վրա։ Մոռացուեց դասական երկրների սքանչելի կրթական սիստեմը. աղջիկները կամ փակուեցին տանը կամ մենաստանների փակ դպրոցներում, որտեղ տարիների ընթացքում, ծնողներից, ազգականներից անջատուած, կզգիացած աշխարհային զարդացնող կեանքից, զրկուած մանկական շրջանից, անհրաժեշտ ազատութիւնից, մանկական խաղերից, նրանք ամենաքնքոյշ պատանեկութեան տարիներն անց էին կացնում վանքերի մռայլ մամռապատ պատերի մէջ, զրկուած ազատ շարժուելու հաճոյքից, ազատ քրքիջի թարմացնող հրապոյրից, սեւածածկ կոյսերի և հոգեւորականների սգաւոր հովանու տակ։ Երեխայի և պատանուհու ամեն մի ժամը նախօրօք որոշուած էր. ոչ մի աւելորդ խօսք ու շարժում թոյլ չէր տրվում խեղճ աղջիկներին։ Խստիւ արգելուած էր կամքի, ինքնուրոյնութեան ամենաթոյլ արտայայտութիւն անդամ։ Բանական էակը վերածուած էր մանրբէնի, որ շարժվում էր, խորհում, խօսում ուրիշի թելադրութեամբ, այնպէս, ինչպէս պահանջում էին քարսրտացած, կամ իրանց բռնի կուսութիւնից զայրացած ու մենա-

կեցութիւնից տաղտկացած կոյսերը։ Միայն Ս.-Գրքի ընթերցանութիւնն էր թոյլ տրվում այդ խեղճերին, ամեն դեղարուեստ վանուած էր վանական դպրոցներից։ «Պատանուհին երբեք չպետք է լսի երաժշտութեան ձայնը, նա չպիտի գիտենայ, թէ ինչի համար են ջութակն ու արֆան». այս էր միջնադարեան հայեացքը։

Տասնուվեցերորդ և տասնուեօթերորդ դարերում աղջկայ դաստիարակութիւնը դեռ դուրս չէր եկել այդ ընկճուած դրութիւնից, և Մոնտէնը, որ ապրում էր 16-րդ դարի վերջին կիսում, այն կարծիքին էր, թէ կինը կարիք չունի զարգանալու, «որպէսզի չաղաւաղուեն նրա բնածին հրապոյրներն ու գրաւչութիւնը». նա թոյլ էր տալիս նրանց միայն զբաղուել բանաստեղծութիւնով, որ «նրանց կարիքներին մօտ մի զուարճալիք է»։ Ֆենելօնը, 17-դ դարու այս յեղափոխիչ մանկավարժը, սրտի ցաւով ընդգծում է աղջկայ դաստիարակութեան այս յետամնացութիւնը։ Ահա նրա խօսքերը.

«Ասում են, թէ հարկ չկայ, որ աղջիկները գիտուն լինեն, որովհետև հետաքրքրութիւնը նրանց դարձնում է սնո-

տի և ունայնապաշտ. բաւական է որ նրանք տուն կառավարել սովորեն և ուսանեն հնազանդ լինել իրանց ամուսնուն։ Անմահ Մոլիէրը իր դրամայի մէջ («Գիտուն կանայք») այս խօսքերն է դնում Կրեզալի բերանը. «Լաւ բան չէ, որ կինը այսքան բաներ ուսանի ու գիտենայ. նրա ամբողջ գիտութիւնն ու փիլիսոփայութիւնը այն պիտի լինի, որ նա կարող լինի կրթել իր զաւակներին, տուն կառավարել, հսկել ծառաների վրա և խնայողութիւն անել ծախսերի մէջ»։

«Եւ այլապէս չէր էլ կարող լինել, քանի որ «ամենակարողը միրուքի տէրն էր։ Թէեւ մարդ ու կին հասարակութեան երկու կէսերն են, բայց կէսերը հաւասար չեն.—մէկը իշխում է, իսկ միւսը հպատակվում» և այլն» *)։

Աղջկայ կրթութեան խնդրում ահագին դեր խաղաց 17-րդ դարում Ֆենելօնի «Աղջիկների կրթութիւն» վերնագրով գիրքը **)։ Այդ առաջին լուրջ գրուածքն էր այս խնդրի

*) Molière, Femmes Savantes.
**) Fenelon. De l' Education des filles.

մասին, և հենց իր լրջությունով էլ մեծ յեղափոխիչ զորություն ունեցաւ աղջկայ կրթական սիստեմի վրա։

Ֆենելոնը բողոքեց աղջիկների փակ, վանական կրթության դէմ; ուսուցման սահմանափակման դէմ; ֆիզիկական կրթության արհամարհման դէմ։

Սակայն Ֆենելոնը երկրպագու չէ աղջկայ լայն զարգացման։

Նոյն դարում մեծ հռչակ ստացած տիկին Մէնտենոնը (որ ղեկավարում էր Սեն-Սիրի կանանց ինստիտուտը), 17-րդ դարի ամենալուսաւոր կանանցից մէկը, համաձայնվում էր Ֆենելոնի հետ և կարծում էր, թէ աղջիկը պիտի «չափաւոր լինի կարդալու մէջ և ընթերցումն փոխարինի ձեռքի աշխատանքի»։

Հետևեալ 18-րդ դարում Ժ. Ժ.-Ռուսսոն իր հռչակաւոր «Էմիլի» մէջ բարոյական դաստիարակությունը անխզելի կերպով կապում է ֆիզիկական կրթության հետ և ասում է, թէ մարմնի թուլությունը հոգեկան խանդարումների աղբիւրն է։ Նրա իրաւացի կարծիքով, առողջությունն ու ոյժը զօրեղ

նեցուկ են բարոյական կամքի։ Նա քարոզում է սաների ազատություն։ Երեխայի հետ չպէտք է վարուել ոչ այնպէս, որ նա միշտ զգայ իր գլխին խնամատարություն և պաշտպանություն, ոչ էլ այնքան խստապահանջ, ճնշող ղեկավար լինել, որ, նա հարկ համարի խորամանկության, ստի ու կեղծաւորության, դիմելու։

Յատկապէս աղջկայ դաստիարակության վրա նրա հայեացքները շատ չէին տարբերվում ժամանակակից հասկացողությունից։ Երկրպագու լինելով բնական կրթությանը, Ռուսսոն աղջկան ամբողջովին մօրն էր յանձնում, որ նրանից պիտի իդեալական ամուսին, մայր և տանտիկին պատրաստէր։

Այս դրությանն մէջ էր աղջկայ կրթությունն ու դաստիարակությունը մինչև ֆրանսիական մեծ յեղափոխությունը։ Այս ժամանակամիջոցին յայտնի Կոնդորսէն իր զօրեղ ձայնը բարձրացրեց աղջկայ կրթության օգտին։ Նա պահանջում էր լայն ծրագրով կրթել աղջկան. 1. որպէսզի նա կարող լինի լաւ դաստիարակել իր զա-

ւակներին, քանի որ նա է իր երեխաների բնական կրթողը. 2. որպէսզի արժանաւոր և հաւասար ընկեր և ուղեկից դառնայ ամուսնուն, մասնակցի նրա աշխատանքներին ու հոգսերին, մի խօսքով ապրի նոյն կեանքով. 3. որպէսզի անզարգացած մնալով, չհանգցնի ամուսնու մէջ նրա սրտի ու մտքի կայծը, որ տուել է նրան ուսումը, այլ ընդհակառակը, պահպանի այդ կրակը, մասնակցելով նրա ընթերցումներին և խօսակցելով նրան զբաղեցնող խնդիրների մասին. 4. վերջապէս աղջկայ կրթութիւնը անհրաժեշտ է, որովհետև այդ ուղղակի մի արդար պահանջ է, քանի որ երկու սեռերն էլ հաւասար իրաւունք ունեն ուսում առնելու եւ զարգանալու»։

Այս էին մեծ գիտնականի և քաղաքական անձի հայեացքները։ Սակայն նրանց իրագործումն ժամանակ էր պահանջում; և Եւրոպայի մէջ, յատկապէս Ֆրանսիայում, աղջկայ կրթութիւնը դեռ մինչեւ վերջին ժամանակներս հնացած մեթոդով էր տարվում։

—

Տասնիններորդ դարը, գիտութիւնների զօրեղ զարգացմամբ, յեղափոխեց դաստիարակութեան գործը և նոր հիմունքների վրա դրեց աղջկայ կրթութեան մեթոդը։

Աղջկայ ֆիզիօլոգիայի և հոգեբանութեան ուսումնասիրութիւնը նոր կանոններ տուեց մեզ նրա առողջապահութեան համար, ուստի նրա ֆիզիկական կրթութիւնն էլ պիտի յարմարեցնուէր այս կանոններին։

Գիտութիւնը ցոյց տուեց, որ, որոշ հասակից սկսած, աղջկայ օրգանիզմը սկսվում է շեղուել տղայինից, և ուրեմն այս երկուսի կրթութեան ու դաստիարակութեան ձևերն էլ պիտի տարբերուեն։

Հասկացուեց աղջկայ մարմինը խնամելու անհրաժեշտութիւնը, ապացուցուեց, որ կինը իր վսեմ պարտականութիւնները կատարելու համար պէտք է նպատակայարմար ֆիզիկական զարգացումն ստանայ, քանի որ մեր առողջակազմութիւնից է կախուած սերնդի առողջութիւնն ու կենսունակութիւնը։

Շնորհիւ այս ուսման, ֆիզիկական կրթութիւնը, որ, ինչպէս ասեցինք, միջին դարերից վեր բարձի թողի էր արուած,

նորից կենսական պահանջ է դառնում, և մենք տեսնում ենք, որ նա կամաց-կամաց տնային—ընտանեկան կրթութեան հիմնաքարն է կազմում։

Անգլիան իրաւամբ կրում է այս ուղղութեան պարագլխի մեծ պատիւը։ Անգլիացու մէջ վերածնել է հին հռովմայեցու ոգին, —նոյն ոգեւորութիւնը մարդութիւններով, նոյն ձգտումն դէպի մատաղ սերնդի մարմնի բարելաւումն—և այսօր վստահ կարելի է ասել, որ եւրոպացի օրիորդը կարող է մրցել հռովմուհու հետ իր ֆիզիկական զարգացմամբ։

Այս ազատ երկրից ֆիզիկական կրթութեան սկզբունքները անցան Եւրոպա և կօնտինենտի բոլոր երկրներում թէ պետութիւնները, թէ մասնաւոր հիմնարկութիւնները առանձին ուշադրութեան են արժանացրել աղջկայ մարմնի մարզումները։ Վերածնուեց մարմնի կուլտը։ Մարդիկ յիշեցին հին, վաղուց մոռացուած, սկզբունքը —«առողջ միտք առողջ մարմնի մէջ» ու ձգտեցին կազդուրել, ամրապնդել աղջկայ մարմինը ևս։ Միւս կողմից Պեստալոցցայի և Ֆրեօբէլի կրթական և ուսումնաւորութեան մեթոդները թարմացրին մանկական կրթութեան հնացած ու փտած գործը։

Աղջկան լաւ կրթելու պահանջը քանի գնաց աճեց և հասարակական կեանքի ամենակարեւոր և ամենախոշոր խնդիրների շարքն անցաւ։ Ստորակարգ և միջնակարգ դպրոցների խիտ ցանցը ծածկեց քաղաքակիրթ երկրները և միլիոնաւոր մանուկ-աղջիկներ խռնուեցան կրթութեան այս տաճարների մէջ։ Աղջիկը ձգտեց դէպի բարձրագոյն ուսումն և շատ երկրներում բացուեցին նրա առջև համալսարանի և ուրիշ բարձրագոյն կրթական հիմնարկութիւնների դռները։

Միջնակարգ և բարձրագոյն ուսում ստացած օրիորդները մայր դառնալով, մտցրին ընտանիքների մէջ նոր կրթական ձեւեր և այսպիսով, կրթութիւնն ու դաստիարակութիւնը արեւի ճառագայթների պէս տարածուեցին ընտանիքի վրայ։

Խղճուկ հայ աղջիկը ևս ձգտեց դէպի լոյս, բացուեց արեւին, ինչպէս մի թարմ կոկոն! Բայց մի օր յանկարծ մթնեցին

հայ մանկիկի աչքերը և երբ սա բարձրացրեց իր հայեացքը դեպի երկինք, տեսաւ մի սև ամպ, որ չարագուշակ ու վիթխարի վիշապի նման ծածկել էր լոյս արեւը...

VII

ՑՂԻ ԿՆՈՋ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Հիանդ ծնողների սերունդը.—Ցղի կնոջ առողջապահութիւնը.—Նրա բմահաճոյքները.—Նրա հոգեկան դրութեան ազդեցութիւնը սաղմի վրա։

«Մանկան փիզիկական կրթութիւնը պիտի սկսուի դեռ մոր արգանդից», ասում է Օվար։

Թող ծիծաղելի չթուի այս միտքը։ Նա բոլորովին համապատասխան է արդի գիտութեան ցուցմունքներին, որոնց հիման վրա մոր առողջական դրութիւնը, նրա յոյզերը, նրա տանջանքները, մի խօսքով նրա փիզիկական ու բարոյական աշխարհում կատարուած դղրդիւնները արձագանք պիտի գտնեն արգանդի սաղմի վրա, քանի որ այդ սաղմը ինքնուրոյն կեանք չունի, այլ ապրում է մոր կեանքով։

Հիւանդ ծնողները միայն հիւանդոտ սերունդ կարող են արտադրել։

Ամենասարսափելի ախտերը ժառանգականութեան վերաբերմամբ հետևեալներն են. սիֆիլիս, արբեցողութիւն (ալկոհոլիզմ), թոքախտ եւ ներվախտութիւն։

Սիֆիլիսոնս ծնողների բեղմնաւորութիւնը որոշ շրջանում կամ բնաւին տեղի չի ունենում, կամ վերջանում է վիժումով *)։ Կենդանի ծնուածներն էլ կարճ ժամանակում մեռնում են (99% ըստ Տարնովսկու), իսկ մնացածներից էլ մի մասը արատաւոր, հիւանդոտ, կեանքի կռուի մէջ ապիկար են լինում։ Թոքախտաւոր ծնողների զաւակները նոյնպէս ենթակայ են հարիւր տեսակ հիւանդութիւնների, մանաւանդ թոքախտի. արբեցողները ծնում են նոյնպէս արատաւոր զաւակներ, տրամադրուած դէպի հիւանդութիւններ, նոյնը պէտք է ասել նաև ներվային ծնողների սերնդի մասին։

Մարդկութեան այս չորս գլխանի ճիւաղը (թոքախտ, ալկոհոլիզմ, սիֆիլիս և ներվայնութիւն) արտադրում է վատոյժ,

*) Սակայն եթէ հիւանդ ծնողը լաւ բժշկուած է և եթէ հիւանդութեան բժշկուելուց միքանի տարի անցել է, զաւակները կարող են կենդանի ծնուել։ (Տե՛ս իմ „Ամուսնութիւն“, „Սիֆիլիս“ և „Վատ ցաւ“ գրքոյկները։

վատասերուած սերունդներ, որոնց կեանքը ջախջախում, տրորում է, որովհետեւ նրանք թոյլ են ֆիզիկապէս և անտոկուն հոգեպէս։

Մենք չենք կարող այստեղ խօսել հիւանդ կամ արատաւոր ծնուած երեխաների մասին, այդ չափազանց հեռու կը տանէր մեզ։

Սակայն միայն խոշոր հիւանդական ժառանգականութիւնը չէ, որ անցնում է զաւակներին։ Այսչափ տարածուած ներվային դրութիւնները եւս առանց հետքի չեն մնում արգանդի զաւակի վրա։ Հասարակական աղմկալից կեանքը իր ամենօրեայ հոգեկան յուզմունքներով, կեանքի կռուի դժուարանալն ու բարդուելը, որոնք ուժասպառում են ծնողների ներվային ոյժերը, այս բոլորը անդրադառնում են սաղմի վրա։ Ցղի կինը մեր հասարակութեան մէջ—մանաւանդ քաղաքային դասակարգի մէջ—,շարունակում է օրիորդական կեանքը իր պարերով, իր անքուն կամ կիսաքուն գիշերներով։ Եւ տուժում են զաւակները իրանց մօր անփութութեան համար։

Բժ. Պավլենէն ասում է հետեւեալը.

«Այժմ նորածինը այնպես չէ, ինչպես առաջուայ ժամանակները։

«Նայեցէք նրան։ Հազիւ ծնուած, նա արդէն բաց է անում իր աչքերն ու կարծես դիտում է իր շուրջը, միքանի ժամ շարունակ անքուն մնում է օրօրոցի մէջ կամ մօր թեւերի վրա, չի ճչում; այլ կանոնաւոր կերպով լալիս է, շուռումուռ է գալիս և չափազանց զգայուն է դէպի լոյսը։

«Որքան մեծ է տարբերութիւնը։ Առաջուայ ժամանակները երեխան աչքերը խուփ էր ծնվում; նա քնոտ էր, օրերով և շաբաթներով անտարբեր էր մնում դէպի իր շրջապատը, կարծես խոր և քաղցր լեթարգիական քնի մէջ ընկած, որից զգաստացնում էր նրան քաղցը միայն։ Տարբերութիւնը զարմանալի է, բայց ամենից շատ այդ զանազանութիւնը զարմացնում է պառաւ տատերին և ազգականներին, որոնք դիտելով արդի թոռնուկներին, ցաւով յիշում են հին դեղեցիկ ժամանակը»։

Բղի կինը պէտք է գիտակցօրէն վերաբերուի դէպի իր դրութիւնը։

Նա ոչ մի օր չպէտք է մոռանայ, որ

կրում է իր արգանդի մէջ մի ամբողջ սերընդի ապագան։

Այո, մի պատասխանատու գործ է յղանալ և մայր դառնալ։ Բղութիւնը մի սրբազան ակտ է, որը պահանջում է աչալուրջ վերաբերումն և ամեն րոպէ զգուշութիւն։ Մեղապարտ է այն մայրը, որ իր անզգուշութեամբ կամ մեղապարտ անհոգութեամբ վտանգի է ենթարկում իր արգանդի պտուղը։

Մենք անկարող ենք այստեղ մանրամասն ուսումնասիրել յղութեան առողջապահութիւնը,—այդ մեզ չափազանց հեռու կը տանէր։

Մենք կը յիշատակենք միքանի դլխաւոր կէտերը միայն։

Նորատի կանայք ընդհանրապէս վախի մէջ են ընկնում, երբ զգում են, որ յղի են։ Միշտ անհանգիստ են, սարսափով սպասում են ազատուելու սարսափելի կարծած օրուան։

Այդ ահը նրանից է, որ յղութիւնը մի անբնական, նոյնիսկ հիւանդական դրութիւն են կարծում; այն ինչ սա մի բնա-

կան, ֆիզիոլոգիական ակտ է, որ իր բնական ընթացքն ունի և շատ հազուագիւտ դէպքերում միայն նա բարդութիւններ ունի, այն էլ երբ կինը որևէ հիւանդութեան կամ անկանոն կոնքի տէր է։

Ծղի կինը պէտք է հասկանայ այդ և հանգիստ ու անհոգ ապրի. նա ոչ թէ ահ ու դողով, այլ հրճուանքով ու անհամբերութեամբ պիտի սպասի մայր դառնալու երանութեան։

Ծղութիւնից առաջացած ցաւերն ու տանջանքները միայն ժամանակաւոր են և ընդհանրապէս ՁԼասակար կերպով չեն աղդում կնոջ վրա, այլ անցնում են առանց հետեւանքի։

Այս հիման վրա յղութեան միջոցին չպէտք է փոխել առօրեայ աշխատանքն ու կենցաղը, այլ աւելի զգոյշ լինել թէ ուտելու-խմելու և թէ աշխատանքի մէջ։ Պէտք է խուսափել այնպիսի աշխատանքներից, որոնք ոյժերի լարումն են պահանջում; ուտել այնպիսի կերակուրներ, որոնք հեշտ են մարսվում; խմել ջուր, լիմոնադ, պանդան սիրոպներ, իսկ սովորածներին միայն թոյլ է տրվում օրը մի բաժակ գինի կամ գա-

րեջուր խմել։ Նա պէտք է աշխատի մաքուր օդում ապրել և յաճախ զբօսանքներ անէ, առանց յոգնածութեան հասցնելու իրան։ Շատ նորատի կանայք յղութեան միջոցին տարօրինակ և ՁԼասակար հակումներ են ցոյց տալիս. պահանջում են հազուագիւտ մրգեր ու խմելիքներ, ուտում են անմարս բաներ, օր. հող, կիր, ապակի և այլն։ Շատերի քմահաճութեանը սահման չկայ, և բոլոր ազգերի մէջ մերժելը կամ հակառակելը ՁԼասակար է համարվում արգանդի զաւակի համար։

Ժողովուրդը կարծում է, որ եթէ յղի կնոջ ուզածը մերժուի, երեխայի դէմքի կամ մարմնի վրա զանազան նշաններ կը մնան։ Այս ամենը նախապաշարմունք է և ոչինչ ՁԼաս չի հասնի սաղմին, եթէ մօր անհիմն ու իրանց հետեւանքով վտանգաւոր պահանջները անխտիր կերպով չկատարուեն։

Պէտք է ընդհակառակը դիմադրել, և ամենից առաջ ինքը կինը պիտի զսպի իրան, սահմանափակի իր անտեղի պահանջները, հասկանալով, որ նրանք կենսական չեն։ Երջապատողները ևս պէտք է թէ համոզե-

լով և թէ միքիչ սաստելով յետ կանգնեցնեն կնոջ իր ուղածից։

Սաստիկ յոյզերը. բարկութիւն, սարսափ, վիշտ և ուրիշ կրքեր, ազդում են գլուխի վրա, երբեմն վիժումն, երբեմն էլ նոյնիսկ մահ առաջացնում։ Հետեւաբար շրջապատողները պիտի կրկնապատկեն իրանց զգուշութիւնը, չհաղորդեն նրան յուզիչ նորութիւններ, չգրգռեն նրան ոչ մի կերպ. նրանց վարմունքը առհասարակ պիտի շատ մեղմ ու քնքուշ լինի, պէտք է հասկանան, որ յղութիւնը չափազանց դիւրագրգիռ ու չափազանց ներվային է դարձնում կանանց։

Պէտք է աշխատել նորատի կնոջ հեռու պահել ամեն տեսակ անախորժ տպաւորութիւններից, տխուր տեսարաններից, տրխրեցնող ընթերցանութիւնից, այլ ընդհակառակը միշտ զուարթ դէմք ցոյց տալ, զուարճալի ու հաճելի տեսարանների ներկայ անել։ Ամենահին գրողները խորհուրդ են տալիս յղի կնոջ «զուարճութեան» մէջ պահել։ Հնդկաստանցիք և չինացիք արգելում են կնոջը յուզարկաւորութիւններին մասնակից լինել և գերեզմանատունդ գնալ։ Մինչեւ հիմա էլ մարդիկ հաւատում են, որ եթէ յղի կինը գեղեցիկ դէմք տեսնի, երեխան սիրուն կը լինի։

Մենք այդքան հեռու չենք գնայ, բայց գիտութիւնը և գիտումները թելադրում են մեզ զգուշութիւն և խնամք դէպի յղի կանայք։

Արգանդի սաղմը իր զարգացման համար պահանջում է ազատութիւն։ Այն ամենը, ինչ սեղմում է մօր որովայնը, սեղմում է նաեւ նրա արգանդը և կարող է ճնշել սաղմի ազատ ու կանոնաւոր աճումն։

Այս հիման վրա նորատի կինը երբէք չպիտի սեղմի իր իրանը և փորը. պէտք է դէն գցի կորսէտը, որը սեղմում է և իջեցնում փորը և կարող է նոյնիսկ վիժումն առաջ բերել։

Փորկապներ գործ են ածում ամեն տեղ, մանաւանդ բազմածին կանայք իրանց թուլացած ու ընկած որովայնը բարձր պահելու համար։ Փորկապը կարելի է գործածել յղութեան եօթերրորդ ամսից սկսած. միայն նա պէտք է լաւ լինի և կարած փափուկ կտորից ու կոճկուի յետեւից։ Պառկած ժամանակ պէտք է քակել։

Ամեն տեսակ շտապ շարժում, արագ քայլ, մանաւանդ պար պէտք է արգելուի նոյնիսկ հինգերորդ ամսից. սարեր բարձրանալը և իջնելը նոյնպէս վնաս է։

Ընդհանուր կենցաղի մասին մենք այստեղ անկարող ենք այլեւս կանգ առնել։

VIII

ԱՂՋԻԿ-ԵՐԵԽԱՑԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՆԸ

Նորածին աղջիկը.—Աղջկայ կոնքը եւ նրա ծռումները.—Ողնաշարը եւ նրա կորութիւնների պատճառները.—Երեխային գրկելու ձեւը.—Ողնաշարի ծռումները դպրոցական շրջանում.—Աղջկայ անկանոն նիստը պարապելու միջոցին եւ նրանից առաջացած վնասները ամբողջ կազմուածքի համար։

Աղջկայ վրա նրա ծնուելու րոպէից պէտք է նայել իբրև ապագայ մօր վրայ, և հէնց այդ ժամանակից նրա ֆիզիկական կրթութիւնը այդ ուղղութիւնով տանել։

Այդ նորածին մանկիկի մէջ արդէն դրուած են այն գործարանները, որոնք զարգանալով, հասունացած հասակում պիտի դառնան նրա օրգանիզմի կարևորագոյնները։ Դրանք են. զաւակատունը և ձուարանները։

Այդ գործարանները ժամանակի ընթացքում պիտի գերակշիռ դեր խաղան օրիորդի և կնոջ ամբողջ օրգանիզմի կեանքի մէջ։

Նրանք մատաղ հասակում դրուած են աղջկայ որովայնի մէջ, բայց սեռական հասունութեան միջոցին իջնում են կոնքի մէջ և այնտեղ զարգանում։

Հասկանալի է, որ աղջկայ կոնքը աւելի լայն և աւելի մեծ պիտի լինի, քան տղայինը, որը յիշած օրգաններից զուրկ է։

Կոնքը կազմվում է երկու կշտոսկրներից, որոնք առջևից միանում են անմիջապէս, իսկ յետեւում կպչում են սրբանոսկրին կամ կեղծ ողներին։

Եթէ դիտելու լինէք կմախքը, կը տեսնէք, որ կոնքը կրում է իր վրա ահագին ծանրութիւն.—ողնաշարը, որի վրա ծանրանում են գլուխը, բազուկները, կուրծքը իր միջի գործարաններով և որովայնը նոյնպէս իր միջի օրգաններով ծանրանում են կոնքի վրա, որը յենվում է ոտերի ոսկրերին։

Հասկանալի է, որ կոնքը պիտի աղատ զարգանայ, որպէսզի իր մատաղ հասակում, երբ ոսկրները դեռ ճկուն են, երբ կապերը թոյլ և նուրբ, նա չծռմռուի, չնեղանայ, այլապէս կը ճնշուեն պարունակուող գործարանները։

Ցիրաւի, երեւակայեցէք, որ ծռուել են կոնքը կազմող ոսկրները, ներքեւի ողերը, անկիւնաւորուել ու ներս, դէպի կոնքն են ցցուել. ի՞նչ կը լինի գործարանների դիրքը, ի՞նչպէս կարող է այդպիսի մի նեղացած ու կորացած խոռոչի մէջ աճել և զարգանալ սաղմը։ Վիժումների, դժուարածնութիւնների, մեռած երեխայ ծնունդների, մինչեւ անգամ մօր մահուան պատճառ են դառնում աղաւաղուած կոնքերը։

Ահա թէ ինչը պիտի զբաղեցնի առանձնապէս մայրերին և ինչի վրա պիտի անդադար լարուած լինի նրանց ուշադրութիւնը։

Կոնքի ծռմռելու մէջ մեծ դեր են խաղում ողնաշարի կորութիւնները։

Ծծկեր մանկան ողնաշարը գանգից մինչեւ պոչիկը միանգամայն ուղղագիծ է։ Բայց նստեցրէք երեխային ու կը տեսնէք, որ նրա ողնաշարը սաստիկ կը կորանայ ու կը կազմի մի կամար, որի մի ծայրը ծոծրակին է կպած, միւսը կոնքի ոսկրներին։ Երբոր

երեխան ոտի է կանգնում ու սկսում է վազ-
վըզել, նրա ողնաշարը միքանի տեղ գո-
գանում է և ընդունում է կամաց-կամաց
հասունացածի ողնաշարի չորս գոգութիւն-
ները. պարանոցային—դէպի առաջ, կըրծ-
քային—դէպի յետ, կռնակային—դարձեալ
դէպ առաջ և պոչիկային—նոյնպէս դէպի
յետ։ Այս չորս գոգութիւնները բոլորն էլ
տեղի ունեն յետ ու առաջ։

Անբնական կամ հիւանդական ծռում-
ները լինում են ընդհակառակը. կողմնակի,
այսինքն աջից—ձախ և ձախից—աջ, այն-
պէս որ յետեւից ողնաշարը, փոխանակ ու-
ղիղ գծի, կազմում է S նման մի գիծ։

Ինչից են առաջանում այս կորութիւն-
ները։

Պատճառներից մէկը երեխային վատ
գրկելն է։

Մայրը կամ դայեակը երեխային առ-
հասարակ նստեցնում են թեւերից մէկի
վրա, աջ կամ ձախ։ Ցաւն այն է, որ սովո-
րութեամբ հէնց բոլոր ժամանակ միեւնոյն
թեւի վրա են դնում երեխային։

Եթէ տկլորացնէք գրկած երեխային,
ահա թէ ինչ կը տեսնէք (նկ. 1)։

Եթէ երեխան աջ
թեւի վրա է դրած, նրա
ձախ կողմը կպած է գըր-
կողի ուսին կամ կրծքին,
նստատեղի ձախ կողմը ա-
ւելի ցած է, քան աջը, և
սրանից էլ ողնաշարը գո-
գացած է դէպի ձախ։

Նկ. 1.

Այս գոգութիւնը աւելի
եւս սաստկանում է, երբ
երեխան, յոգնած այս ան-
յարմար դիրքից, թեւիկը
դէմ է տալիս մոր կրծքին, իբրեւ նեցուկ։
Այսպիսով առաջ է գալիս ողնաշարի կողմ-
նակի կորութիւններ։

Ողնաշարի կորութիւնների միւս պատ-
ճառը աւելի կարեւոր է.—այդ դպրոցական
կեանքն է։

Ամենից առաջ Շվեյցարիայում ուշ դար-
ձրին այն հանգամանքի վրա, որ դպրո-
ցական պատանիների մէջ շատ յաճախ են
պատահում ողնաշարի կորութիւններ, և այդ
իրողութիւնը բացատրեցին անկանոն նիս-

տով պարապմունքների միջոցին։ Այսպէս, Պարովը հետազօտեց 282 երեխայ, որոնք ծռմռուած ողնաշար ունէին, և եկաւ այն եզրակացութեան, որ նրանցից 218-ը ուղղակի նստելու անկանոնութիւնից է առաջացել։

Եւ, ճշմարիտ որ, ողնաշարի ծռումները ընդհանրապէս յայտնվում են դպրոցական կեանքում, երբ երեխան երկար ժամանակ անկանոն դիրքեր է բռնում կարդալիս կամ (աւելի եւս) գրելիս։

Գրութիւնը երեխայից այժի մեծ լարում է պահանջում, այս պատճառով էլ միքիչ ուղիղ նստելուց յետոյ, նա թեքվում է այս ու այն կողմը, որպէսզի դադար տայ լարուած մկաններին ու գործի կանչի մի ուրիշ խումբ մկաններ։ Իսկ երբ ողնաշարի բոլոր մկաններն էլ յոգնում են, այն ժամանակ երեխան նեցուկ է որոնում ու յենվում է սեղանին, համարեա պառկում է վրան, սարսափելի ծռումներ առաջ բերելով (նկ. 2 և 3)։

Ի՛նչ կասկած, որ ամիսների ու տարիների ընթացքում այսպիսի արատաւոր դիրքերից կը մնան ողնաշարի ու կողերի

(հեռեւաբար եւ կոնքի) անուղղելի կորուբիւններ, իրանց վտանգաւոր հետեւանքներով։

Սակայն այս երեխաները դեռ էլի մի կերպ նստած են սեղանի հանդէպ և սեղանի վրա են դնում իրանց տետրակները։ Ի՛նչպէս պէտք է ծռմռուի գիւղական աղջիկների կազմուածքը, քանի որ դրանք ստիպուած են ժամերով ծալապատիկ նըստած մնալ, գլուխները փորներին կպցրած գրել կամ կարել...



Նկ. 2. Սեղանը չափազանց ցած է։

Նկ. 3. Սեղանը չափազանց բարձր է։

Իբրև կորութիւնների պատճառ բժ. Վիրենիուսը յիշում է նաև երեխաների պայուսակների ծանրութիւնը։ Միքանի աշակերտուհիներ 8—10 ֆունտ գիրք են տանում-բերում դպրոց։ Եթէ մի ձեռով են բռնում, հասկանալի է, որ մի ուսը կը ցածանայ և մէջքը իր կողմը կը ծռի. այդ պատճառով աշակերտուհիները պէտք է մէջքներին կապած պայուսակ ունենան։ Նոյնն է անում ի հարկէ և ուսին կուժ, սափոր կամ մի որևէ ծանրութիւն կրելը։

Բացի ողնաշարի (հետևաբար և կռնքի) կորութիւններ առաջացնելը, արատաւոր դրութիւնները ահագին վնասներ են հասցնում երեխային և ուրիշ տեսակէտներից։

Ամեն անկանոն նիստի միջոցին (առաջ թեքուելը, կուրծքը սեղանին դէմ անելը) պարանոցի մկանները շուտով յոգնում են գլխի ծանրութիւնը պահելուց, և գլուխը կորանում է. դրանից վզի երակները սեղմվում են, արեան շրջանառութիւնը գլխի երակների և ուղեղի մէջ խանգարվում է, իսկ այս խանգարումից առաջանում է գլխացաւ, գլխի պտոյտ գալ, աչքացաւ (աբիւն է լցվում աչքերը), կրծքացաւ, միևնոյն ժամանակ փորը ծալվում է, աղիքները ճնշվում են, փորի մէջ էլ արեան շրջանը խանգարվում է, որտեղից առաջ են գալիս մարսողութեան խանգարումներ, դժուարամարսութիւն, յետոյ մէջքացաւ. մինչև անգամ սեռական գործարանները արիւնով լցվում են ու գրգռվում։ Գոյանում է նաև թուքք (геморрой), ոտները դմրում են և այլն։ Եւ, իբրև այս ամենի ծայրայեղ արտայայտութիւն, առաջ է գալիս սակաւարիւնութիւն։

Մենք թռուցիկ կերպով յիշատակեցինք այն պատճառները, որոնք աղջկայ կմախքի ծռմռումներ են առաջացնում։

Հասկանալի է, որ այս աննպաստ պայմանները աւելի ևս խորապէս կաղդեն նուազ ծնուած, ժառանգականապէս արատաւորուած, թուլակազմ աղջիկների վրա, քան առողջակազմների։ Քանի թոյլ է աղջկայ կազմուածքը, այնքան աւելի տրամադրուած է նա կորութիւններ ստանալու։

Պէտք է կռուել արատաւորման և նրա հիւանդական տրամադրութեան դէմ, պէտք է աղջկան այնպիսի խնամքներ ցոյց տալ,

որ աղատ նա մնայ իր մատաղ հասակին սպառնացող վտանգներից։

Դրա համար գիտութիւնը միջոցներ է տալիս մեր ձեռքը։ Խօսենք ուրեմն այդ միջոցների մասին։

IX

ԻՆՉՊԷՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԱՂՋԿԱՆ ԾՌՈՒՄՆԵՐԻՑ

Փոքր աղջիկներին ցալիք խնամքը.—Զգուշութիւններ աղջկայ ոտի կանգնելու եւ քայլելու ժամանակ.—Մեր աղջիկների արտաւոր դիրքերը.—Սնունդ, ինչպէս կուռել անախորժակութեան դէմ.—Քնի կարեւորութիւնը, իբրեւ կազդուրիչ միջոցի.—Լողացումներ եւ օթումներ։

Ծննդեան հէնց առաջին շաբաթներից մանուկ աղջկան պիտի դնել այնպիսի պայմանների մէջ, որ նրա կազմուածքը ամրանայ ու զարգանայ ապագայ մայրութեան համար։ Ահա բժ. Վիրենիուսի տուած խորհուրդները այդ մասին.

«Քանի դեռ երեխայի գանգը չի ոսկրացել, հարկաւոր է գլխի տակը փափուրէ բարձ դնել, բայց հէնց որ գլուխը

պնդուեց բարձը պէտք է մաղով, բրդով կամ ծովային ու հնդկական կոչուած խոտով լցնել։ Վերմակիկը նոյնպէս բրդից կամ բամբակից պէտք է գործած լինի (բամբակով լցրած հաստ վերմակները վնաս են)։ Երեխայի տակը երկու դօշակ պիտի դցել. վրայինը պէտք է ձիու մաղով կամ յիշած խոտերով լցուած լինի, իսկ տակինը կարելի է աւելի կոշտ անել։ Նորածնին պիտի պառկեցնել մի լայն անկողնիկի մէջ, կամ թախտի վրա, որպէսզի նա ազատ լինի իր շարժումների մէջ, և երբէք չփակել նրան զանազան զամբիւղների ու երկու թզանոց օրօրոցների մէջ, որտեղ խեղճ երեխան ստիպուած է կռկացնել իր անդամները։ Նրան պիտի պառկած դրութեան մէջ պահել մինչեւ որ ինքը փորձեր անէ նստելու, սակայն այն ժամանակն էլ չպէտք է առանց նեցուկի թողնել երեխային, այլ քամակին բարձ դնել, որի վրա նա թեք կընկնի»։

Գրկելիս երեխային պիտի փոփոխակի երկու թեւերի վրա էլ դնել և այն թեւը, որի վրա նստեցրած է նա, պիտի հորիզոնական ուղղութեամբ (ուղիղ) բռնել։ Եթէ

երեխան արդէն նստել գիտէ, նրան կարելի է աթոռի վրա դնել, միայն աթոռի թիկունքը պէտք է քիչ թեք լինի, որպէսզի երեխան յենուի նրա վրա։

Շատ ծնողներ աշխատում են զօռով երեխային ոտի կանգնացնել։ Այդ մի վերին աստիճանի վտանգաւոր զուարճութիւն է, որի համար տուժում է երեխան։

Ծնողները չպէտք է մոռանան, որ մանուկը այն ժամանակ միայն կարող է կանգնել, երբ նրա մկանները ուժեղացած են և ոսկրների կապերը ամուր են. հակառակ դէպքում մկանները անկարող են պահպանել ողնաշարը, և սա կը ծռմռուի ու իբրեւ հետեւանք, կը ծռմռուի և կոնքը։ Նոյն ձեւով ծռվում են և ոտերը, և եթէ մէկ ոտն աւելի է ծռվում քան միւսը, երեխան կաղ է դուրս գալիս, իսկ կոնքը թեքվում է նոյն կողմը։

Առհասարակ մէկ տարեկանից վաղ չպէտք է աշխատել աղջկան ոտի կանգնեցնել ու քայլել տալ, այլ սպասել մինչև 18 ամսական հասակը և եթէ այդ հասակումն էլ չի քայլում, այն ժամանակ պէտք է խորհրդակցել բժշկի հետ։

Երբ աղջիկն արդէն կարող է ոտի կանգնել պէտք է հետեւել, որ չծռուի ոտերից մէկի վրա, այլ բոլորովին ուղիղ կանգնի և ուղիղ պահի մէջքը։ Նստելիս էլ մարմինը պէտք է երկու դաւակների վրա ծանրանայ և ոչ թէ միայն մէկի։ Աղջիկները երբեմն իրանց հագուստը մի կողմն են հաւաքում և նստում վրան. այդպիսով մի կողմը բարձր է լինում։

Մեր աղջիկների կանգնած, նոյնիսկ նստած դիրքերը միանգամայն անկանոն են ու տգեղ։ Ես երկար տարիների ընթացքում դիտել եմ դպրոցների մէջ հաղարաւոր աղջիկ-երեխաների և գտել եմ, որ նրանցից շատ քչերն են ուղիղ կանգնում ու նստում. մեծ մասը յենվում է մի ոտի վրա, թեքվում է մի կողմ, կամ մի ուսը կախ է գցում, մէջքները կորացնում։ Ցաւալին այն է, որ այս արատաւոր դրութիւնները այնքան արմատացած են լինում նրանց մէջ, որ յաճախ անկարելի է լինում ուղղել։

Հիւանդոտ ծնողները, նամանաւանդ թոքախտ ունեցողները, աւելի ևս պիտի խնամեն իրանց զաւակներին, որովհետև

թոյլ են ծնվում սրանք և երկարակեաց չեն լինում։

Ծննդեան հէնց առաջին օրից պիտի ուշ դարձնուի աղջկան ամեն կերպ կազդուրելու վրա. իսկ կազդուրել կարելի է լաւ սնունդով, մաքուր, բացօդեայ կեանքով և մարզութիւններով։

Սնունդ.

Մայրը պարտաւոր է ինքը կերակրել իր զաւակին, եթէ ի հարկէ, առողջ է. հակառակ դէպքում պէտք է ծծմայր վարձել։ Ես չեմ կարող այստեղ մանրամասն թուել երեխայի սննդին վերաբերեալ դիտելիքները *)։

Աղջկան կերակրելու գործը դժուարանում է աւելի հասունացած հասակում, մանաւանդ դաշտանի մօտենալու և սկսուելու միջոցներին, երբ աղջիկը նրբազգաց ու բմահաճոյ է դառնում, երբ նրա օրգանիզմի բոլոր ֆունկցիաները փոփոխման են ենթարկվում, երբ ճաշակն աղաւաղվում է և ախորժակը կորչում։

*) Մանրամասն տե՛ս իմ „Խնամատարութիւն առողջ երեխաների“ գրքոյկը։

Այս միջոցներին աղջիկը ախորժակի շատ տարօրինակ շեղումներ է ունենում։ Նա զզվում է որոշ ուտելիքներից ու խմելիքներից, ուտում է հող, կիր, նոյնիսկ ապակի, քաղցրեղէն և այլն, խմում է քացախ և այլն ու այսպիսով խանգարում է իր մարսողութիւնը։ Զբօսանքը, ֆիզիկական մարզողութիւնները օգնում են մարսողութեան, ախորժակ են բերում։ Սովորեցրէք ձեր աղջիկներին որոշ ժամերին սեղան նստել. իսկ կերակուրները փոփոխէք, մի աշխատէք ստիպմամբ ուտանելու, այլ ախորժելի կերակուրներ պատրաստելով։ Այն դէպքերում, երբ անկարելի է լինում կռուել աղջկայ անախորժակութեան դէմ, պէտք է բժշկի դիմել։

Քունը. Հանգիստ ու երկար քունը համարեա ոչ-պակաս կազդուրիչ ազդեցութիւն ունի, քան սնունդը։

Քունը աճող օրգանիզմի համար շատ աւելի մեծ նշանակութիւն ունի, քան հասակաւորի։

Մինչև 6 տարեկան հասակը երեխային պիտի թողնել քնելու, ինչքան կամենայ։

7 տարեկանից մինչև 9 տարեկան 11 ժամ։

10	»	»	13	»	10
14	»	»	17	»	9
18 տարեկան					8

Երբ երեխան աւելի քիչ է հանգստանում քնի մէջ, նրա ամբողջ կազմուածքը թուլանում է, մի տեսակ թմրութիւն ու տաղտկութիւն և ներվային դիւրագրգռութիւն է գալիս վրան։ Զափաղանց երկար քունն էլ վնաս է։

Երբէք չպէտք է զօռով քնեցնել երեխաներին։ Պէտք է սովորեցնել որոշ ժամերին պառկել, և սա կը սովորի այդ ժամերին քնել։ Անմիջապէս ուտելուց յետոյ մի թոյլ տաք պառկելու, որովհետև մարսողութիւնը կանոնաւոր չի կատարուի և քունն անհանգիստ կը լինի։

Մի ուրիշ զգուշութիւն էլ. երբէք չպէտք է պառկեցնել երեխային հագնուած։ Միայն մի շապիկ, եթէ ցուրտ է, մի վարտիկ ևս և կոֆտա—ահա քնած երեխայի բոլոր հագուստը։

Իբրև լաւ կազդուրիչ միջոց պէտք է

յիշենք և լողացնելն ու շփումները։ Այժմ բժիշկները պահանջում են, որ լողարանի ջուրը փոքր երեխաների համար գոլ լինի և ոչ թէ տաք։ Ըստ Վիրենիուսի կազդուրելու համար լողարանների ջուրը, սկզբում պիտի 28⁰ լինի, երկու ամսականին—27⁰, չորս ամսականին—26⁰, վեց ամսից յետոյ—25⁰, տարուց յետոյ—22⁰։ Լողարանից հանելուն պէս պիտի փաթաթել երեխային սաւանի մէջ և լաւ չորացնել, տրորելով ամբողջ մարմինը։ Երեկոյեան քնից առաջ լաւ պէտք է շփել մարմինը, առաջին երեք ամիսը գոլիկ ջրով, իսկ յետոյ սառը (սենեակում պահած) ջրով։

Մեր գիւղերում ամառը երեխաները լողանում են գետերում։ այդ մի վերին աստիճանի կազդուրիչ միջոց է և ծնողները պիտի խրախուսեն աղջիկներին լողանալու։

Ցաւում ենք, որ յօդուածիս ծաւալը թոյլ չի տալիս մեզ աւելի մանրամասն գրել նաև ուրիշ առողջապահական անհրաժեշտ պայմանների մասին։

Սակայն չենք կարող չխօսել մարմնամարզութիւնների մասին, որոնք այնքան արհամարհուած են մեր մէջ, որոնք սակայն

մեծ կազդուրիչ ազդեցութիւն ունեն աղջկայ վրա, որովհետև ամրացնում են մկանները, արագացնում շնչառութիւնը, լաւացնում են մարսողութիւնը, սնունդը և այլն, և այսպիսով արգելում են ոսկրների ծռմռումները և սակաւարիւնութիւնը։

X

ՄԱՐԶՈՒԹԻՒՆՆԵՐ

Օրօրոցի աղջկան տալիք խնամքը.—Արուեստական վարժութիւններ իսկական մարմնամարզութիւն կամ գիմնասթիկա եւ բնական մարզութիւններ կամ խաղեր.—Ճարժական խաղեր գործիքներով եւ առանց գործիքների (ազատ խաղեր).—Ի՞նչ է պահանջվում խաղից.—Ազատ խաղերի առաւելութիւնները գիմնասթիկայից.—Նրանց կրթական ու բարոյական նշանակութիւնը.—Ի՞նչ տեսակ մարզումներ են հարկաւոր պատանուհուն.—Կրթական կոչուած մարզութիւնները։

Պէտք է դէն գցել վերջապէս ամեն տեսակ կապեր, բարուրներ, բինտեր և այլն, որոնք սեղմում են խեղճ մանկան կուրծքը, կաշկանդում են թեւիկները ու ոտիկները։ Պառկեցրէք փոքրիկին մի ընդարձակ թախտի կամ անկողնու վրա և կամ, եթէ օրօրոցի մէջ էք քնեցնում, մեծ օրօրոց վերցրէք ու երեխային ազատ մէջը պառկեցրէք, թոյլ

տուէք, որ նա զարթնելիս ազատ շարժի իր անդամները, շուռումուռ գայ անկողնիկի մէջ։ Լաւ սովորութիւն է օրօրոցի վրայից կախ տալ զանազան զոզիկներ, որոնց հետ երեխան պառկած տեղը խաղում է։ Առհասարակ թոյլ տուէք երեխային ինչ դիրք ուզում է բռնի, ինչպէս ուզում է խաղայ։ Երբէք չպիտի աշխատել զօռով ձեռը բռնած վազեցնել և ոչ անվերջ միեւնոյն խաղալիքները տալ ձեռը։ Երեխան ինքը լաւ կը գտնի իր համար խաղալու միջոցներ, որովհետեւ նրա մէջ «պահանջը դէպի շարժողութիւնը նոյնչափ ծանր ու ստիպողական մի զգացմունք է, որքան քաղցն ու ծարաւը», ինչպէս ասում է Լագրանժը։ Միլլէն ասում է. «երեխան մի շարժուն էակ է»։ Հին դարերում ֆիզիկական մարզութիւնները մանկան կրթութեան ամենակարեւոր մասն էին կազմում, միջին դարերում մարզումները յետ մղուեցին և տեղի տուին մտաւոր կրթութեանը. իսկ վերջին ժամանակներս միայն հասկացուեց, որ պատանու ֆիզիկական ու մտաւոր կրթութիւնը պէտք է զուգահեռաբար ու ներդաշնակօրէն ընթանայ։ Անգլիան առաջին երկիրն էր, որտեղ

սկսուեց աղջկայ ֆիզիկական կրթութեան զարգացումն և այնտեղից անցաւ Եւրոպա։

Մենք անկարող ենք այստեղ կանգ առնել ֆիզիկական մարզութիւնների բազմաթիւ ձեւերի վրա, որ ընթերցողը կը գտնի իմ ուրիշ աշխատութեան մէջ*), սակայն մի քանի հատուած պիտի առաջ բերենք։

Կան երկու տեսակ մարզութիւններ. 1) արուեստական մարմնամարզութիւն (իսկական գիմնաստիկան) և 2) բնական վարժութիւններ, որոնք կոչվում են նոյնպէս և բնական մարզումներ կամ խաղեր անունով։

Մանուկներին, մանաւանդ աղջիկներին, օգտաւէտ են խաղերը. սրանք կատարվում են կամ գործիքների միջոցով կամ ազատօրէն (առանց սրանց)։ Գործիքներից ամենագործածականը գնդակն է։ Շատ լաւ են նոյնպէս և կրոկէտը, կրիկէտը, ֆուտ-բալը, լաուն-տեննիսը, մեր լեփուկ և ճանը։

Աւելի կարեւոր են ազատ շարժական-խաղերը, որոնց մասին միքանի խօսք պէտք է ասել։

*) Տե՛ս իմ „Դպրոցական առողջապահութիւն“ գլ. չորրորդ, նոյնպէս և բժ. Բուդուլեանի „Մարմնամարզութիւն“։

«Մանկան մարմնակազմութեան (ոսկրների, մկանների, թոքերի, սրտի) ու նրա հոգեբանութեան մասին մեր ունեցած ծանօթութիւնը, ասում եմ ես յիշած հեղինակութեանս մէջ, որոշ պահանջներ է անում մարզումներից.

«1) Մարզումներից այնպիսիներն են միայն օգտակար աճող սերնդին, որոնք պահանջում են մարմնի բոլոր մկանների գործունէութիւնը և ոչ թէ միայն մի գրուպի (օրինակ, միայն թեւերինը) ինչպէս այդ տեղի ունի արուեստական վարժութիւնների մէջ. 2) Նրանք պէտք է հեշտ հասկանալի և հեշտ կատարելի լինեն, այսինքն առանց ուղեղի ու մկանների յոգնեցուցիչ լարման, որպէսզի մի նոր դաս չդառնան մանկան համար. 3) Նրանք պիտի զուարճալի լինեն, որպէսզի երեխան յափշտակումով խաղայ. 4) Վարժութիւններից ամենայարմարները նրանք են, որոնք կատարվում են խմբովին, երգով, գոռալով, երաժշտութիւնով. 5) Վարժութիւնները անպատճառ պէտք է յարմարուեն մանկան հասակին. 6) Որքան մանր լինեն երեխաները, այնքան յաճախ

պիտի փոփոխել խաղերը և այնքան ազատ պիտի լինեն նրանք իրանց ցանկացած խաղը որոշելու համար։

«Ֆիզիկական կրթութեան ձևը, որը համապատասխան է վերոյիշեալ պահանջներին—այդ շարժական վարժութիւններն են, այսինքն խաղը։

«Խաղը դպրոցական մանկան համար միակ ցանկալի և միակ կարելի ֆիզիկական կրթութիւնն է։ Խաղի միջի շարժումները բոլորը բնական են և հեշտ կատարելի։ Խաղը պահանջում է մարմնի մկանների բոլորի մասնակցութիւնը.—նրա ամենագլխաւոր մասը վազն է, որը ընդունուած է իբրև ամենալաւ վարժութիւն արեան հոսանքը արագացնելու և, հետևաբար, թէ սրտի և թէ թոքերի գործունէութիւնը զարգացնելու համար։ Վերջապէս խաղն է միակ ֆիզիկական վարժութիւնը, որը մանկան իսկական հրճուանք է պատճառում իր հաւաքական կազմութիւնով, իր աղմուկով, իր մրցումով, իր երբեմն անսպասելի բարդումներով և ծիծաղելի պատահմունքներով։ Մանուկը խաղի մէջ իր բնազդումին է հետևում թէ շարժումների, թէ իր զուարճա-

նալու ձևի մէջ։ Խաղը, կատարուելով առհասարակ բացօթեայ, մեծ բակերում կամ ընդարձակ տեղերում, մի առանձին լայնութիւն և ազատութիւն է տալիս նրա մարդութիւններին, և մանկան սիրտը, կարծես, նոյնպէս լայնանում է։ Երեխան խաղերի մէջ նմանում է մի թռչնակի, որը ազատ ճեղքում է օդը և թարմ ու զուարթ սաւառնում է, պտոյտներ անելով օդի մէջ, իր ուղղութիւնը փոխելով, բարձրանալով և իջնելով դեռին, միշտ թոքերը լայն բացած, ազատ շնչելով։ Այն ինչ ապպարատների վրա ճգնող երեխան (գիմնաստիկա) յիշեցնում է նոյն թռչնակին, որին պինդ փակել են նեղ վանդակի մէջ, որտեղ խեղճը անկարող է թևերն անգամ պարզել, և գուր մթնոլորտում ամեն շարժողութեան միջոցին վանդակի պատերին դիպչելով, մնում է թևերը ծալած, կուրծքը սեղմած, տաղտկալի անշարժութեան մէջ... Խաղը բացի ֆիզիկապէս կրթելուց մանկան, նրա բարոյական կրթութեանը նոյնպէս շատ նըպաստում է.—նա սովորեցնում է երեխային հաւաքական աշխատանքի որոշ նպատակին հասնելու համար, մշակում է նրա մէջ ըն-

կերական ոգի, քաջութիւն, կամք, արագ որոշումն, ազատ և ազնիւ մրցման ցանկութիւն, յարգանք դէպի իր սեփական ոյժերը։ Գոնէ այս հանգամանքը պէտք է ի նկատի ունենան մեր մանկավարժները և ուսումնարանական մասնաժողովները եթէ նրանք դպրոցական առողջապահութիւնը մի աւելորդ բան չեն համարում։ Նրանք պէտք է նոյնպէս չմոռանան, որ ֆիզիկական կրթութիւնը զուգընթաց է գնում մտաւոր կրթութեան հետ, և որքան լաւ է դրուած մի դպրոցում առաջինը, նոյնքան և աջող է ընթանում երկրորդը։ Այսօր դա ստատիստիկայով հաստատուած մի փաստ է, որը ակներև է դարձել անգլիական, ֆրանսիական և բելգիական դպրոցներում, ուր մշտցրած են շարժական վարժութիւններ։

«Բոլոր մարմնական վարժութիւններից միայն կազդուրիչ խաղը պարունակում է իր մէջ հոգու և մարմնի կրթութեան հիմնական սկզբունքները, ասում էր Բուդապէշտի կօնգրէսին Բերրեվիցը։ Մկանների աշխատանքի հետ միասին նա զարգացնում է մանկան մէջ կամք, սովորեցնելով նրան լինել տոկուն, համբերող, ուշադիր և իր գործի տէրը։

«Փոխադարձ հպատակութիւնը սովորեցնում է անկողմնապահ լինել և զարգացնում է զոհաբերութեան ոգին։ Միւս կողմից խաղը պահանջում է արիութիւն, վստահութիւն, ճիշտ սահմանուած գործողութիւն, հաստատ կամք.—նա կարող է սակաւացնել բնական պակասութիւնները և վերջապէս նա աւելի սերտ կապերով մտերմացնում է աշակերտներին դեկավարների հետ»։

Պրոֆ. Լվովը շատ իրաւացի նկատում է, թէ խաղը միանգամայն բաւականութիւն է տալիս այն բոլոր պահանջներին, ինչ որ առողջապահութիւնն անում է ֆիզիկական վարժութիւններից։ Խաղերը միևնոյն չափով յարմարվում են մանկան ֆիզիկական կազմութեանը և նրա բարոյական պահանջներին։ Միևնոյն ժամանակ նրանք զուարճութեան միջոց են։ Ֆիզիկական տեսակէտից, նրանք չեն պահանջում ոչ չափազանց ճիգնումն և ոչ այս ինչ կամ այն ինչ մկանների մարզութեան սահմանափակումն։ Ամենաբարդ խաղերն անգամ միշտ պահանջում են

միմիայն հասարակ ու բնական շարժումներ։ Խաղի համար հարկաւոր է վազ, թռիչք, սողալ, հրումն, ծեծ և այլն, այսինքն այն, ինչ որ ամեն երեխայ անում է բնականաբար, համարեա ծննդից։ «Խաղը, ասում է Լվովը, ընդգրկում է մարդկանց գործողութիւնների մի ընդարձակ շրջան, որոնք մի կողմից չեն պահանջում ծանր աշխատանք, իսկ միւս կողմից հրճուանք ու զուարճութիւն են տալիս»։ Նոյնը ասում է և Լադրանժը. «Բացի զուարճութիւնը, որը առողջապահական տեսակէտից անհրաժեշտ է մանկանը, այս խաղերի մէջ կատարուող մարզումներն էլ միանգամայն բաւարար են նրա համար։ Համոզուելու համար բաւական է նայել խաղից յետոյ այն կենդանացած դէմքերին, այն փայլուն աչքերին, որոնք ապացոյց են, որ արիւնը ոյժով շրջում է բոլոր երակներում,—նայել կրծքի ուժեղ բարձրանալուն ու իջնելուն, որը ցոյց է տալիս, թէ մկանների գործողութիւնը բաւական է եղել օդի ծարաւ յարուցանելու համար և ստիպել է երեխային մեծ բանակութիւնով թթուածին քաշել իր թոքերը»։

Փոքր հասակում տարբերութիւն չկայ տղայ և աղջկայ մէջ ֆիզիկական կրթութեան տեսակէտից։ Մանկական խաղերը, քայլը, վազը, թռիչքները, գնդակախաղը և այլն հաւասարաչափ երկուսին էլ օգտակար են։ Բայց շուտով զանազանութիւնը որոշվում է։ Աղջկայ շարժումները շուտով դառնում են աւելի մեղմ և աւելի կշռուած։ Եւ, ճշմարիտ որ, աղջկայ ֆիզիկան բոլորովին տարբեր է,—նրա կոնքը աւելի կարօտ է զարգանալու, քան թեները։ Հետևաբար թեւերի մարզութիւնները ընտրակար են աղջկան, և բնազդումով սա չի սիրում թեւերի ծանր ու դժուար վարժումներ, այն ինչ վազը, թռիչքները, պարը և այլն շատ ախորժելի են նրան։

«Այս դիտողութիւնների և անատոմիական տեղեկութիւնների վրա հիմնուելով, աղջիկների առողջապահութիւնը պահանջում է նրանց համար, բացի մանկական հաւաքական խաղերից, նոյնպէս և պար, պարանի վրա թռիչքներ, վալան, շրջանակ, գլխանք։ Այս ամենը զարգացնում են աղջկայ փորի ու մէջքի մկանունքները, այ-

սինքն տալիս են նրան գեղեցիկ երան և լայն աւազան, որը անհրաժեշտ է առողջ ծնունդի համար։

«Քննած լինելով չորս հազարից աւելի երեխաներ Թիֆլիսի ծխական դպրոցներում; մենք եկել ենք այն եզրակացութեան, որ միայն լաւ դրուած ֆիզիկական կրթութիւնը կարող է ուղղել այս խեղճերի աղաւաղուած, ծռմռուած մարմինը։ Մեր դպրոցական աղջիկներից շատ քչերը իրանց «դրուստ են պահում»։ Մեծ մասը անպատճառ մէկ կողքի վրայ են կանգնած, ողնաշարը ծռած, մի ուսը ցած, գլուխը մի կողմ թեքած,—նոյնը նկատվում է և նըստած տեղը։ Դրա պատճառն այն է, որ նրանք մինչև անգամ երկու ոտի վրա կանգնել չգիտեն և ոչ երկու գաւակի վրա նստել... Դա մի վերին աստիճանի ցաւալի իրողութիւն է, որի վրա մենք հրաւիրում ենք մեր մանկավարժների ուշադրութիւնը։ Այդ «արատաւոր դիրքերը» (attitudes vicieuses) մեծամեծ վնասների պատճառ են դառնում; և ամեն ջանք պէտք է գործ դնել ուղղելու դրանց։ Իսկ այդ հնարաւոր է մի-

այն համապատասխան վարժումների միջոցով»։

Բայց քանի որ մեր աղջիկները ոչ միայն խաղալ չգիտեն, այլև կանոնաւոր շարժումներ չունեն, ուստի սկզբից պէտք է սովորեցնել երեխային մարմնի զանազան մասերը (թեւերը, ոտերը, գլուխը, ողնաշարը) մարզել։ Այս մարզութիւնները մենք կ'անուանենք կրթական մարզումներ*). դրանք

*) Բժ. Շրէյբէրը (Schreiber) հետեւեալ պրոգրամն է տալիս.

1) Թեւերով շրջանական պտոյտ անել—20 անգամ։

2) Թեւն առաջ պարզել (30),—մի կողմը (30),—բարձրացնել (12),—8 մինչև 10 խոր շնչառութիւն անել։

3) Մէջքը պտտել (30) անգ.)։—Տրորել ձեռները (80)։—Ուղղել մէջքը (72)։—Ոտը բարձրացնել և պարզել կողքանց։ Խոր շնչառութիւն։

4) Մօտեցնել ոտերը (8)։—Պարզել և ծալել ոտերը (40).—Սղոցելու շարժումներ անել (30).—Ծունկը առաջ բարձրացնել (12)։—8 մինչև 10 շնչառութիւն։

5) Թեւերը առաջ ու յետ գցել (10).—Պըսպղել (24).—Երկու թեւերը կողքանց դուրս ու ներս գցել (100)։ 8—10 շնչառութիւն։

6) Փայտ ջարդելու շարժում անել (20). քաղ անելու—(24).—Վազվզել տեղն ու տեղը։ 8—10 շնչառութիւն։

7) Ոտը յետ ու առաջ (24) և կողքանց գցել (24)։ Ըստ Շրէյբէրի այս շարժումների շարքը հաւասար է 4—5 ժամ քայլելուն։

պիտի կատարուեն այնպէս, որ ձանձրոյթ չպատճառեն երեխաներին.—երբէք չպէտք է ստիպողական դարձնել նրանց։

Հետեւաբար պէտք է շատ մեղմ կերպով և աստիճանաբար վարժեցնել մանուկներին։

Տե՛ս նոյնպէս Բժ. Բուդուղեանի „Մարմնամարզութիւնը“։

XI

ՆՍՏԱՐԱՆ-ՍԵՂԱՆՆԵՐԸ

Ողնաշարի կորութիւնները դպրոցներում անկանոն նստարանների պատճառով.—Ցարմարազոյն եւ անվնաս նստարան-սեղանը։ Դիտանցիայի նշանակութիւնը.—Աղիւսակ նստարանի չափերը։ Անվնաս զրութիւնը.—Տան պարապմունքները։

Մատաղ հասակից սկսում է մանկան համար մտաւոր աշխատութիւնը։ Երբեմն չտապող ծնողները 5-6 տարեկան հասակից սկսած արդէն երեխային նստեցնում են սեղանի դէմ և գրել ու կարդալ են սովորեցնում։ Միքիչ յետոյ երեխան տրվում է դպրոց, որտեղ նա անց է կացնում օրուայ մի որոշ մասը։

Այս ժամանակից սկսվում է մի վտանգալից շրջան երեխայի կազմուածքի համար, որովհետև անկանոն նստելը պարապելու ժամանակ և անկանոն դրութիւնը կարող է առաջացնել ողնաշարի և կոնքի ծռումներ։

Դեռ 50-60 տարի առաջ չվէյցարական առողջապահները Ֆինչ, Ֆարնէր և Գիւյոմ, ցոյց տուին, որ դպրոցական կեանքում, նստարանների անյարմարութիւններից առաջանում են ողնաշարի ծռումներ։ Գիւյոմի ասելով, աշակերտների 1/3-ը կորութիւններ է ստանում, Բեմբոլդը աւելի ևս մեծ թիւ է տալիս, համարեա 50%, իսկ Պարովը մինչև 77% սովորող երեխաների։

Դպրոցական առողջապահութիւնն ըզբաղուեց այս խնդրով և առանձին խնամքով սկսեցին ուսումնասիրել նստարանների խնդիրը։

Ամենից առաջ որոշուեց, որ սեղանն ու նստարանը պիտի կապած լինեն, կամ այնքան ծանր, որպէսզի երեխան չկարողանայ նրանց իրարից հեռացնել կամ մօտեցնել միմեանց, և երկրորդ, որ սեղանի և նստարանների չափերը պիտի համապատասխանեն աշակերտի հասակին։ Շատ կարեւոր են հետեւեալ չափերը (նկ. 4)։



Նկ. 4.

Կանոնաւոր սեղան-նստարան բացատական դիստանցիայով։

ա—բ. Սեղանի առջևի (կամ դրսի) եզրը։
ը—դ. Սեղանի յետին (կամ ներքին) եզրը։
գ—ե. Դիֆֆերենցիա կամ տարբերութիւնը։
է—դ. Նստարանի բարձրութիւնը։
ե—զ. Նստարանի խորութիւնը։
ե—է. Բացատական դիստանցիա։
ա—թ Տախտակի հորիզոնական մասը։
թ—ը. Տախտակի թեք մասը։
ժ—ի. Գրքակալ։
լ—զ. Թիկունքի բարձրութիւնը։
խ. Ոտերի նեցուկ։

1. Նստարանի բարձրությունը (է—դ) պիտի այնքան լինի, որ նստողի ոտները հանգիստ գետնին հանդչեն։ Առհասարակ նա պիտի հաւասար լինի մանկան հասակի 2/7-ին։

2. Նստարանի լայնությունը կամ խորությունը (լ—զ) այնքան պիտի լինի, որ սրունքները ազատ կախ ընկնեն և նստարանի եզրը չսեղմի ծնկան խոռոչը։ Նա հաւասար է մանկան 1/5 բարձրութեան։

3. Դիմաճեռենցիան (տարբերությունն) (է—ը) սեղանի տախտակի եզրի բարձրությունն է նստարանից։ Տղաների համար նա հաւասար է հասակի 1/6-ին, իսկ աղջիկների համար պէտք է այս չափին աւելացնել 2 սանտիմետր հագուստի հաստութեան պատճառով։

4. Դիստանցիա (հեռաւորություն) (խ—է) կոչվում է նստարանի հորիզոնական հեռաւորությունը սեղանից։ Նա պէտք է բացասական լինի, այսինքն. նստարանի եզրը պէտք է միմիչ սեղանի տակը մտնի, այնպէս որ, եթէ մի գիծ իջեցնենք սեղանի եզրից, այդ գիծը ընկնի նստարանի վրա

և կտրի նրանից մի մասը, որը սեղանի տակն է մնում։ Այս մասը պիտի ունենայ 5 սանտիմետր երկարություն։ Երբոր աթոռը հեռու է սեղանից, դիստանցիան դրական է, այսինքն յիշած գիծը չի ընկնում նստարանի վրա, այլ նրանից առաջ։ Դիստանցիան ահագին նշանակություն ունի աշակերտի ուղիղ թէ արատաւոր նստելու վրա։ Երբ նստարանը սեղանից հեռու է, նստողը պիտի թեքուի դէպ առաջ, որից շուտով յոգնում է, կուրծքը դիպչում է սեղանի եզրին և այլն։

Սակայն բացասական դիստանցիայով դասասեղանները մի անյարմարություն ունեն,—այն որ երեխան անկարող է կանգնել ու դաս պատասխանել։ Այդ դժուարությունը զանազան կերպով է հեռացընում։—կամ սեղանի տախտակի մի մասը ծալվում է միւս մասի վրա (Պարովի սիստեմ), կամ ամբողջ տախտակը յետ ու առաջ է քաշվում (Կանցէի սիստեմ), կամ թէ չէ նստարանն է յետ գցվում, երբ երեխան վեր է կենում։

Միայն այս ձեւի նստարաններ վրա

մանուկը կարող է ուղիղ նստել եւ ուրեմն չվնասել իրան (նկ. 5.)։



Նկ. 5.

Կանոնաւոր դիրք բացասական դիստանցիա ունեցող դասասեղանի վրա։

Ինչպէս վերեւն ասել ենք, մանկան հա-

սակին (բարձրութեանը) պիտի համապատասխանեն դասասեղանների չափերը։

Բերում ենք այստեղ պրոֆ. Էրիսմանի մի մանրամասն աղիւսակ, որի մէջ մանկան հասակի հանդէպ գրուած են նստարանների չափերը (տ. էջ 146)։

Սակայն ամենայարմար նստարանների վրա էլ նստած երեխան կարող է ծռել իր ողնաշարն ու կոնքը, եթէ գրութիւնն անկանոն է։

Ֆիզիոլոգիան կանոնաւոր ու անվնաս է համարում այնպիսի գրութիւնը, երբ տառերի հիմնական շտրիխները ուղղահայեաց են երկու աչքերի միջով անցնող գծին, իսկ երբ երեխան ուղիղ է նստած, այս գիծը զուգահեռական է սեղանի եզրին։

Այստեղից դուրս է գալիս, որ ընդունելու է ուղիղ (և ոչ թէ թեք) գրութիւնը, ուրիշ խօսքով. երեխան այնպէս պիտի գրի, որ տառերը թեք չլինեն, այլ ուղիղ։

Գրութեան միջոցին հարկաւոր է պահպանել հետեւեալ պայմանները։

1) Տետրակը պէտք է գրուի ուղղակի գրողի կրծքի առաջ, ոչ աջ և ոչ ձախ. 2) ե-

ԱՂԻՒՍԱՆ ԷՐԻՒՄԱՆԻ

Տպանների համար.

№	Սիրոտոյ վերդամիդիոն	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ
I	109—120	52	46	40	10	110	28	25	18	—5	20	20	7	20	10	12	15
II	120—130	58	52	40	10	110	32	27	20	—5	22	22	7	20	10	14	15
III	131—142	64	58	40	10	120	36	29	22	—5	24	24	8	22	10	16	20
IV	142—153	70	64	40	10	120	40	31	24	—5	26	26	8	22	12	18	20
V	153—164	76	70	40	10	120	44	33	26	—5	28	28	8	24	12	20	25
VI	164—175	82	76	45	10	130	48	35	28	—5	30	30	8	24	12	20	25

Ա ղ ջ ի կ ն ե ր ի հ ա մ ա ր.

№	Սիրոտոյ վերդամիդիոն	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ	Ուղղվելի ամրոցներ
I	109—120	54	48	40	10	110	28	27	20	—5	22	22	7	20	10	12	15
II	120—131	60	54	40	10	110	32	29	22	—5	24	24	7	20	10	14	15
III	131—142	66	60	40	10	120	36	31	24	—5	26	26	8	22	10	16	20
VI	142—153	72	66	40	10	120	40	33	26	—5	28	28	8	22	12	18	20
V	153—164	78	72	40	10	120	44	35	28	—5	30	30	8	24	12	20	25
VI	164 բարձ.	84	78	40	10	120	48	37	30	—5	32	32	8	24	12	20	25

բեխան պէտք է ուղիղ նստի—կռնակը նըստարանի թիկունքին և երկու ձեռները մինչև արմունկները սեղանի վրա, այնպէս որ արմունկները սեղանի վրա չլինեն, այլ կախ մնան. 3) Ոտերը պէտք է կամ յատակին հասնեն կամ առանձին պատուանդանին. 4) Գլուխը պէտք է միշտ բարձր և ուղիղ պահուի, տեսրից 25—30 և աւելի սանտիմետր հեռու. 5) Աչակերտը երբէք չպիտի կուրծքը սեղանին դիպցնի, այլ գոնէ 8—4 սանտ. նրանից հեռու պահի. 6) Տեսարի հիմնական գծերը պիտի ուղղահայեաց լինեն սեղանի եզրին։

Այդ են առողջապահութեան արած պահանջները, և այդ պահանջներին լիուլի բաւարարութիւն պիտի տայ դպրոցը *)։

Սակայն երեխան տանն էլ պիտի ժամերով նստած գրի ու կարդայ։ Հետեւաբար տանն էլ պէտք է նստարանի ու սեղանի չափերը գոնէ մօտաւորապէս այն լինեն, ինչ որ մեր առաջ բերածները։

Ամենից յարմարը ի հարկէ կը լիներ

*) Մանրամասնութիւնների համար տ. իմ «Դպրոցական առողջապահութիւնը», Թիֆլիզ, 1895.

այդպիսի սեղան ձեռք բերելը։ Բայց քանի որ աղջիկը մեծանում է, այժմ չինում են նաեւ այնպիսի նստարաններ ու սեղաններ, որոնց բոլոր չափերը փոփոխելի են— այսինքն. նրանց կարելի է բարձրացնել, ցածացնել, դիֆֆերենցիան փոփոխել, միայն դիստանցիան է, որ պիտի միշտ բացասական մնայ։ Ցաւակցաբար այսպիսի սեղաններ թանգ արժեն և մատչելի են ունեւորներին միայն։ Աղքատ ընտանիքներում պէտք է աշխատել ունեցած սեղանով ու աթոռներով այնպէս յարմարուել, որ մատաղահաս աղջիկը ուղիղ պահի իրան, առանց ծռմռուելու։

Դրա համար աթոռը կամ տաբուրէտը (նստարանիկ) այնպէս դրէք, որ եղրը սեղանի տակը մտնի։ Եթէ երեխան փոքր է, աթոռի վրա կոշտ բաներ դարսեցէք, օրինակ գրքեր կամ տախտակներ, և որպէսզի ոտերը կախ չընկնեն, տակը մի ցած տաբուրէտ դրէք։

XII

ԱՂՋԿԱՅ ՀԱԳՈՒՍՏԸ

Ցոյն եւ Հռովմայեցի կնոջ հագուստը.—Այժմեան հագուստի գլխաւոր մասերը.—Կորսէտի ծագումը.—Կորսէտը իբրեւ մի վնասակար ապպարաս.—Նրա սեղմումից առաջացած վնասները աղջկայ կազմուածքի համար.—Շնչառութեան եւ արեան շրջանառութեան խանգարումները, որովայնի գործարանների ճնշուելն ու տեղահան լինելը եւայլն.—Կորսէտի ազդեցութիւնը աղջկայ սիրտի վրա.—Զանազան կապերի վնասները եւ այժմեան իւրկանների անյարմարութիւնները.—Շլէյֆերից առաջացած վնասները.—Այժմեան ապիտակեղէնն ու ոտնամանները։—Բողոք կանացի կոստիւմի դէմ զանազան երկրներում.—Առաջարկած բեֆորմները.—Ինչ պէտք է դառնայ կնոջ կոստիւմը անվնաս լինելու համար.—Մեր գաւառական կանացի հագուստը առողջապահական տեսակէտից.—Լիքը եւ նրա զանազան ձեւերը.—Նոր ձեւի իւրկան եւ կօշիկները։

Աղջիկ-երեխայի հագուստը չպէտք է տարբերուի տղայի հագուստից մինչեւ որոշ հասակ։

Հին աշխարհում երկու սեռի պատանիներն էլ միեւնոյն տեսակ էին հագնվում։

Հագուստը բաղկացած էր մէկ կամ երկու լայն կտորներից, որոնք աղատօրէն և որոշ ճաշակով փաթաթում էին մարմինը ուսերից մինչեւ սրունքները, քնքշութեամբ ուրուագծելով կանացի ձեւերը։ Տակի կտորը (տունիկա), սերտ կպչում էր մարմնին, իսկ վրայինը բոլորովին ազատ փոնթերով իջնում էր ուսերից։

Կլասսիկ կինը չգիտէր ճնշել իրան զանազան կապանքներով, տեսմաներով, կորսէտներով և այլն։ Մի գօտի միայն երբեմն գրկում էր իրանը խիտոնի վրայով, և նպատակ ունէր միայն հագուստը քիփ պահելու։

Ֆրանկների կանայք սկսեցին աւելի սեղմել տունիկայի վերին մասը այն աստիճան, որ կպաւ մարմնին և պարզ յայտնագծեց կնոջ իրանն ու կուրծքը։

Այնուհետեւ կանացի կոստիւմը զարմանալի փոփոխութիւնների է ենթարկվում, և տարազը իր երկար պատմութիւնն ունի։

Գլխաւոր յեղափոխութիւնը կայանում է նրանում, որ հին տունիկան կարծես կիսվում է, և կանացի հագուստը երկու մասի է բաժանվում, վերեւի մասը—լիֆ, կամ կօրսաժ ու ներքեւի մասը—իւբկան։ Յետոյ վերեւի մասը սկսում է ճեղքուել առաջուց կամ յետեւից կամ կողքերից, որպէսզի հընար լինի ձգձգել նրան ու աւելի եւս բելիէֆ կերպով տեսանելի անել կնոջ կրծքի անյարթութիւնը։ Յետոյ մէջտեղ են գալիս կեսի բեղերը կամ պողպատէ ձողերը, որ հագցնում են կօրսաժի մէջ, որպէսզի աւելի ձիգ պահեն բիւստը, այսպիսով իրանը աւելի եւս սեղմուեց ու բարակեց։ Այս է կօրսէտի ծագումը։

Հուպ տուած ու բարակացրած իրանը աւելի բելիէֆ կերպով ընդգծում է կուրծքն ու ազդրերը, կանացի այդ ֆիզիկական հրապոյրները, և կնոջ հանճարը գտաւ կորսէտը, որը մի հեղինակ ոչ թէ հագուստեղէն, այլ ապպարաս է անուանում։

Օրիորդը և կինը տանջվում են կօրսէտից, զգում են նրա ահագին ջանները, բայց և այնպէս երբէք չեն կամենում ձեռ վերցնել նրանից, հետեւելով մի ֆրանսուհու սրախօսութեանը, թէ «եթէ ուզում ես գեղեցիկ երեւալ, պիտի տանջուես»։

Կօրսէտը դառաւ կնոջ հագուստի անհրաժեշտ և գուցէ ամենակարևոր մասը, մինչ այն աստիճան, որ առանց նրան փողոց դուրս գալը և հիւր ընդունելն անդամ անպարկեշտութիւն է համարվում։

Այն ինչ նա մեծամեծ ցնասներ է հասցնում մանաւանդ աղջկան։

Կօրսէտի դերը կայանում է նրանում, որ սեղմելով իրանը (տալիան) ու բարձրացնելով կուրծքը (ստինքները) ճոխացնում է բիւստը։

Գուցէ և շատ տղամարդիկ յափշտակուեն այդ կիսաշինծու հրապոյրներով, բայց որքան թանդ է նստում այդ բանն աղջկան!

Նորատի աղջկայ մեծատաղ, նազուկ կուրծքը, որի կողերը դեռ գուցէ ոսկրացած էլ չեն, որի մկանները դեռ թոյլ են, սեղմում են կոշտ ու կոպիտ ապպարատի մէջ, որը իր երկաթէ ձողերով դիք է պահում ամբողջ իրանը և մէջքը, սեղմում է կրծքի վանդակի ներքևի մասը, և այդպիսով կողերի աղատ ելևէջներին անյաղթելի խոչընդոտ դառնում։

Նայեցէք այս նկարներին։

Բնական աղատ շընչառութիւնը անկարելի է դառնում կօրսէտի մէջ, որովհետև սա, սեղմելով կրծքի վանդակի ներքևի մասը, մոտեցնում է իրար կողերը և հուպ է տալիս ու կռկեցնում է թոքերի ներքևի (ամենամեծ) մասերը։



Նկ. 6.

Վեներայի բիւստը։

Սրանից հետևում է այն, որ կօրսէտ հագնող աղջկայ շնչառութիւնը չափազանց մակերեւոյթային է դառնում. ուրիշ խօսքով, օդը չի տարածվում թոքերի բոլոր անկիւնները, ինչպէս ջուրը չի լցուի սպունդի բոլոր ծակերը, եթէ հուպ տուած սպունդը ջրի մէջ դնենք։



Նկ. 7.

Կօրսէտ հագնողի բիւստը։

Այստեղից պարզ է, որ այդ շնչառութիւնն անբաւարար պիտի լինի, իսկ սրա հետևանքն այն է, որ արիւնը լաւ չի մաքրվում և դրանից առաջ է գալիս սրտի բաբախումն, գլխացաւ, գլխապտոյտ, ուշագնացութիւն և... մինչև անգամ մահ!

Այո, եղել են մահուան դէպքեր... կօրսէտից.—մօդայի զոհեր!

Այդ դեռ բոլորը չէ։

Կօրսէտի երկար գործածութիւնից առաջ են գալիս ընդհանուր առողջութեան խանգարումներ.—սակաւարիւնութիւն, ընդհանուր թուլութիւն, նուազումն և ներվային զանազան խանգարումներ!

Բացի այդ, կօրսէտը համարեա անշարժ դարձնելով մէջքը ու խիստ սահմանափակելով կողերի ելևէջները, դրեթէ անշարժութեան է մատնում (գոնէ խիստ սահմանափակում է) մէջքի ու կողերի մկանները, հետևաբար արգելում է նաև նրանց ամրանալուն ու զարգանալուն։ Եւ այս կիսազարգացած մկանները պէտք է մեծ ճիգ գործ դնեն, որպէսզի կօրսէտի տակից կարողանան կատարել շնչառութեան ակտը։

Հասկանալի է, որ նրանք շուտով պիտի յոգնեն, և այդ է պատճառը, որ կօրսէտի մէջ սեղմուած կանայք միքանի ժամից յետոյ սաստիկ յոգնածութիւն են զգում և տուն վերադառնալիս կիսաուշաթափ մի կերպ դէն են գցում այս ինկուիզիցիայի ապպարատն ու վայր ընկնում անկողնու վրա։

Կօրսէտը սաստիկ խանգարում է նոյնպէս արեան կանոնաւոր շրջանառութեանը։

Սեղմելով կուրծքը, կօրսէտը սեղմում է նոյնպէս և անհամար մեծ ու փոքր երակներ ու զարկերակներ, որոնց մէջ արիւնը մեծ դժուարութիւնով է հոսում, իսկ այնտեղից դուրս քշուած արիւնը լցվում է գլուխը, ոտերը։ Արեան այս անհաւասար շարժողութիւնը սաստիկ դժուարացնում է սրտի գործը, որը պիտի ճիգ թափի այս բոլորը կանոնաւորելու համար։

Հասկանալի է, որ եթէ կօրսէտը հագցնուի աղջկան մատաղ հասակից, նրա սիրտը կը չեղուի կանոնաւոր զարգացումից, կ'արատաւորուի և կը հիւանդանայ։

Նայեցէք այս նկարներին։ Ահա կօրսէտով մեծացած աղջկայ ներքին գործարանները (նկ. 8)։

Նկար 9-ը ներկայացնում է կօրսէտ հագնող կնոջ ներքին օրգանների դիրքը։



Նկ. 8.

a. ստամոքս, b. հաստ աղիք, c. փայծաղ։



Նկ. 9.

a, b, նոյնը, ինչ որ նկ. 9, c. փայծաղ (շատ իջած)։ Ստամոքսից դէպի ծախ մի մեծ գործարան, որը լեարդն է և կողերի սեղմումից այժմ իջել է որովայնի վրա։

Տեսէք, ի՞նչպէս սեղմուած են որովայնի գործարանները, ի՞նչպէս ճնշուած են նրանք։ Ամենից շատ տուժում են ստամոքսն ու լեարդը,—ստամոքսն անկարող է

լինում բաւականաչափ լայնանալ ուտելու ժամանակ (դրանից առաջ է գալիս սրտնեղութիւն, սրտխառնութիւն և փսխումն), իսկ լեարդն ուղղակի տեղահան է լինում, դուրս է գալիս կողերի տակից ու ընկնում է ուղղակի հէնց կօրսէտի ճնշման տակ։ Դրանից առաջանում է լեղիի անկանոն գոյանալն ու արտադրումն (որից մարսողութիւնը սաստիկ խանգարվում է)։ լեղիի պարկի մէջ գոյանում են քարեր և այլն։

Տեղից հանած լեարդը իր ամբողջ ծանրութեամբ սեղմում է փոքի միւս գործարանների վրա, իջեցնում է նրանց, ծանրանում է երակների ու ներվերի վրա և հարիւր տեսակ ցաւեր ու խանգարումներ առաջացնում։

Միքանիսի կարծիքով կօրսէտը տեղահան է անում նոյնպէս և երիկամունքները։

Պրոֆ. Իվանովսկին, կանանց դիակներ հատելիս, շատ յաճախ գտնում էր լեարդի վրա մի խոր ակօս, որը կապերից էր առաջացել։ Ինքը լեարդն այդ տեղում յարատև բորբոքման մէջ էր, իսկ ակօսից ցած մասը երկարացած էր և իջած։

Արեան շրջանառութիւնը ճնշուելով աղիքների մէջ, դժուարանում է նաև նրանց բնական շարժողութիւնները, որոնք անհրաժեշտ են լաւ մարսողութեան համար։

Այս բոլոր խանգարումների վրա պէտք է աւելացնել նաև սեռական գործարանների ճնշման վատ հետևանքները։ Պէտք է գիտենալ, որ մատաղահաս աղջկայ զաւակատունը կոնքի մէջ չէ պարունակվում, այլ աւելի բարձր է դրուած։ Հասկանալի է ուրեմն, որ կօրսէտը պիտի նրան էլ ճնշի ու նրա մէջ ևս խանգարի արեան կանոնաւոր շրջանը, որից կարող են առաջանալ սեռական գործարանների գրգռումն, գուցէ և դաշտանի վաղաժամ բացուելը։

Մի երկու խօսք ևս կօրսէտի ազդեցութեան մասին աղջկայ ստինքների զարգացման վրա։

Աղջկայ ստինքները վերին աստիճանի կարևոր օրգաններ են, և նրանց կանոնաւոր զարգացմանը ոչ մի արգելք չպէտք է դրուի։ Այն ինչ կօրսէտը բարձրացնում է նրանց ու սեղմում կրծքին։ Մատաղ հասակից կօրսէտ հագնող աղջիկների կուրծ-

քը ազատ չի զարգանում և փոքր է մնում, երբեմն այնքան փոքր (տափակ կուրծք), որ մայր դառնալիս այդ աղջիկը անկարող է լինում ծիծ տալ իր զաւակին։ Հետազօտութիւնները ցոյց են տուել, որ շատ նորատի աղջիկներ, ամաչելով հասունութեան այս նշանից — կրծքի զարգանալուց —, ամուր սեղմում են կուրծքը լիֆով ու կօրսէտով, և մինչև անգամ կրծքի վրա են պառկում; որպէսզի արգելեն ստինքների մեծանալը։ Բժ. Կիանովսկին նկատել է այդ բանը աղջկերանց փակ ուսումնարաններում (ինստիտուտներում)։ Կօրսէտը բայի դրանից գրգռում է նրա պտուկները (որոնք շատ զգայուն են), որով վաղաժամ կերպով տուփական զգացողութիւն է յարուցանում աղջկայ մէջ։

Կօրսէտի գործածութիւնից առաջանում են մի շարք ուրիշ խանգարումներ, ինչպէս են. կողացաւեր, մէջքացաւեր, աչքի հիւանդութիւններ, նոյնիսկ տեսողութեան պակասումն, և այլն։

Կօրսէտի նման (ի հարկէ ոչ այն աստիճան բարդ կերպով) ազդում են և զանազան կապերը (վարտիքի և իւրկանների), ո-

րոնք նոյնպէս սեղմում են փորը և նոյնպէս սաստիկ ճնշում են որովայնի գործարանները։ Եւ յիրաւի, իւրկանների ահագին ծանրութիւնը կախվում է այդ կապերից և ձգում է նրանց, որով կապերն աւելի եւս խրվում են մսի մէջ։ Առաջուայ ժամանակները իւրկանների մէջ երկաթէ շղջանակներ էին հագցնում (կրինոլին), իսկ այժմ հասարակ դէյրաններին երկար պոչեր են թողնում.—այս բոլորը սաստիկ ծանրացնում է ներքեւի հագուստը, և այդ ամբողջ ծանրութիւնն ընկնում է կապերի վրա։ Իւրկանները, որ կինը այսքան զոհաբերութիւններով է կրում, մինչեւ անգամ տաք էլ չեն պահում նրա ներքեւի մասերը։ Միշտ իւրկայի և ոտերի մէջ օդը ազատ խաղում է, իսկ երբ միքանի տաք իւրկաներ են հագնում, այն ժամանակ փորը, յետին մասերը և առհասարակ գաւակային մասը և սեռական գործարանները սաստիկ տաքանում են. մի բան, որ շատ վնասակար է։

«Մեղնից ամեն մէկը տեսած կը լինի, ինչպէս կինը փողոցով գնալիս, մի ձեռով բարձրացնում է իր հագուստի փէշերը, ասում է տիկին Ադամ, բայց շատ քչերը

գիտեն, որքան ոյժ է ապարդիւն կերպով կորցնում այդ կինը, ինչպէս յոգնում է և որ աստիճան վատանում է նրա տրամադրութիւնը,—այն աստիճան, որ յաճախ նա մերժում է դուրս գալ ցեխոտ և թոզոտ օրերը որպէսզի ստիպուած չլինի այդ ծանրութիւնը ձեռով բարձրացնելու»։

Աւելացրէք սրա վրա և այն, նոյնպէս ապարդիւն, աշխատանքը, որը ընկնում է ամեն քայլափոխին կնոջ ոտերի վրա փաթաթուած իւրկաների ծանրութիւնը առաջ դցելուց, և դուք կը ստանաք, ճիշտ որ, մի դրութիւն, որը կարող է ուղղակի տանջալից համարուել։

Աւելացնենք, որ շէյֆները և առհասարակ երկար հագուստը ու իւրկաները գետինն աւելելով փոշի են բարձրացնում, փոշի, որ կինը իր տունն է տանում և կուլ է տալիս թէ ինքը և թէ երեխաները, իսկ այդ փոշու մէջ կարող են լինել նաեւ վարակիչ միկրոբներ։

Բայց այս բոլորը չէ։

Աղջկայ սպիտակեղէնը նոյնպէս սաստիկ տարբերուել է տղամարդինից։ Շապկի

օձիքը խոր կտրուել է և մերկացրել է կրծքի ու մէջքի վերին մասերը, թևքերը բոլորովին անհետացել են և ամբողջովին բացել կռնները և ուսերը։ Ցեռոյ շապիկը չափազանց երկարել է, փոնթեր է անում ոտերի վրա և խանգարում է ազատ քայլուածքը։ Վարտիկի գործածութիւնը համարեա վերացել է, գոնէ տաք եղանակներին, և սրունքները ու առհասարակ մարմնի ներքևի մասերը բացուել են թողի ու քամու առջև. —հագած վարտիկներն էլ այնքան լայն ու կարճ են լինում, որ չեն պահպանում սրունքները ցրտից ու փոշուց։ Մինչև անգամ գուլպաների (չուլկի) հագնելու եղանակը ցնցակար է, որովհետև ամրացնում են ծնկներից վեր բեռնի սեղմող օղերով, որոնք խանգարում են արեան ազատ շրջառութիւնը ոտերի մէջ, իսկ յայտնի է, որ ոտերի երակների մէջ արիւնը առանց այն էլ շատ դժուար է շրջում, շնորհիւ նրանց հեռաւորութեանը սրտից։

Ոտամանները նոյնպէս իրանց բնական ձևից շեղուել են։ Հները—թէ կին թէ տղամարդ—սանդալներ էին կապում ոտերին, ինչպէս այժմ չարուխներ։ Նրանք

կրունկ չունէին, չէին սեղմում մատները և չէին աղաւաղում ոտերը։ Նրանք չէին պահում ոտերը անթափանցիկ պարկի մէջ ու չէին խաչում նրանց իրանց սեփական քրտինքում, այլ ազատ էին թողնում նրանց և ընտելացնում էին եղանակի փոփոխութիւններին։

Այսօր ևս մեր գիւղական տղամարդ ազգաբնակութիւնը բրդէ գուլպա է հագնում ու վրայից չարուխ է կապում, և ամառ-ձմեռ այս է նրա ոտամանը։ Կանայք ևս դեռ շատ տեղեր մասերով ու չուստերով կամ քոշերով են մտնում գալիս, բայց քաղաքային ազգաբնակութիւնը վաղուց արդէն նրբացրել է իր ոտները կօշիկներ հագնելով, և ամենաթեթև խոնաւութիւնն ու ցուրտը սաստիկ մրսեցնում են նրան և հիւանդացնում։

Այդ դեռ ոչինչ։ Կինը տղամարդուն հաճոյանալու համար փոքրացրել է կօշիկները, որպէսզի ոտերը ևս փոքրանան, և ահագին կրունկներ է կպցրել, որ հասակը երկարի... Այստեղից մի չարք աղաւաղումներ, որոնց վրա չենք կարող երկար կանգ առնել։

—

Կանացի հագուստը այսպիսով քանի գնաց աւելի հակառողջական դառնաւ։ Առողջութիւնը զոհ գնաց մոդային ու տղամարդուն հաճոյանալու ձգտմանը և սերունդները տուժեցին։

Առաջին ձայնը կնոջ կոստիւմի (հագուստի) աննպատակայարմարութեան դէմ բարձրացաւ Ամերիկայում; լուրջ ու գործնական նորաձեւութիւնների այս երկրում, որտեղ տիկին Քինդի ջանքերով հիմնուեց «Նպատակայարմար հագուստի ընկ.»։ Ընկերութեանը վիճակուած էր նոյն իսկ այնպիսի առաջադէմ երկրում, ինչպիսին է Ամերիկան, մաքառել մոդայի դէմ; բայց նա չընկճուեց և ութսունական թուականներին այդ գաղափարը տարածուեց Ամերիկայում։

Ամերիկայից շարժումն դէպի կանացի կոստիւմի ռեֆորմը անցնում է Անգլիա, որտեղ մենք գտնում ենք Լէդի Հարբերտընին, յետոյ Ադամս ու Հանկօքին. այնտեղից Շվէդիա և Դանիա, և այժմ Եւրոպայում; նոյն իսկ Ռուսաստանում գոյութիւն ունեն նոյնանման ընկերութիւններ։

Հագուստի ռեֆորմի գաղափարը կանգ

չի առնում; առողջապահութեան պահանջները տարեց տարի աւելի և աւելի հասկանալի են դառնում ժողովրդին, և այժմ մեծ ռեֆորմը սկսուել է ամեն տեղ, որովհետև կանայք իրանք զգացել են ժամանակակից հագուստի ցնաստակարութիւնը թէ իրանց և թէ սերունդների համար։

Կնոջ իդէալական հագուստը պէտք է շատ մօտենայ տղամարդու կոստիւմին, որը համապատասխան է առողջապահութեան ցուցմունքներին։ Կորսետներն ու իւբկաները պիտի դուրս վռնդուեն կնոջ հագուստից և պիտի վերականգնուի կրծքի, փորի և ոտերի ազատութիւնը։ Վելօսիպեդը մասամբ իրագործել է այս իդէալը։ Սակայն, ի հարկէ, մենք դեռ ևս հեռու ենք մի հիմնական ռեֆորմից և պէտք է բաւականանանք քչով։

Այս քիչը պահանջում է, որ հագուստը հեշտ հագնուի ու հեշտ հանուի, որ նա չսեղմի ոչ կուրծքը, ոչ փորը և ոչ էլ մկանները, որ փափուկ կտորներից կարած լինի, շատ փոնթեր չանի մարմնի վրա, թեթև լինի և գրկի անդամները (որով տաք կը պահի նրանց)։

Այս պայմանները նամանաւանդ ան-

հրաժեշտ են մատաղահաս աղջկանց համար։

Ի հարկէ, հարկ չկայ որոշ տարազ տալ աղջիկներին և կանանց։ Իւրաքանչիւր կին իր ճաշակն ունի, և որոշ ինքնուրոյնութիւն պէտք է լինի հագուստների մէջ, որպէսզի նրանք յարմարուեն իւրաքանչիւրի կազմուածքին։ Առողջապահութեան պահանջն այն է, որ կինը ղեկավարուի յիշած սկզբունքներով։

Գաւառական և գիւղական հայ աղջկայ զգեստը շատ աւելի նպատակայարմար է առողջական տեսակէտից, իր լայն վարտիկներով, իր կարճ անթարիով ու գոգնոցով և, որ գլխաւորն է, կորսետի բացակայութիւնով։ Առողջապահական կանոնների դէմ այդ տարազը մեղանչում է կապերի առատութեամբ և եւրոպական ճաշակին մի քանի անդուրալի յատկութիւններով. երբեմն ոտների և սրունքների մերկացումով, իրանի և կրծքի ծածկուածութիւնով *)։

Ցաւալի, շատ ցաւալի է, տեսնել կնոջ աւանդական տարազի չքանալն և նրա փոխարինումն եւրոպական հագուստով։

*) Մի բան, որ միանգամայն հակառողջական և տգեղ է, այդ գլխի կապերն են, որոնք բոլորը տաքացնում են գլուխը, արգելելով քրտնքի գոլորշիանումն։

Սակայն հոսանքը այնքան զօրեղ է, որ նա սրբում է-տանում ամեն ինչ և հայ ժողովուրդը իր լեզուի, իր պաշտամունքների հետ միասին ելեկտրական արագութեամբ բարձի թողի է անում նաեւ իր տարազը։

Գոնէ փրկենք մատաղ սերունդը կորսետների աղաւաղումից։

Այժմ ամեն տեղ ընդունուած է մանուկների համար լիճ կոչուած բաճկոնիկը, որը հագցվում է շապիկի վրայից։ Լիճի վրա պիտի կոճկուեն իւրկաները և վարտիկը.—այդպիսով փորն ու կուրծքը չեն ճնշվում և ծանրութիւնը ուսերի ու գոտիկի վրա է ընկնում։

Շվեդական լիճը կարվում է բրդէ կտորից, նոյնպէս և մետաքսից։ Նա այնպէս պէտք է կարուի, որ գրկի իրանը ու կուրծքը, բայց չսեղմի (տ. նկ. 10)։

Դանիական լիճը խիստ նման է առաջինին և տարբերվում է նրանից միայն առաձգականութեամբ, որովհետեւ կարվում է ձգուող կտորից, այն է բրդէ գործուածքից։ Շատ դեր աղջիկների համար յետեւից մի քանի կէտի բեխեր են հագցնում մէջը

(китовый усъ). կայ և անգլիական լիֆ (տ. նկ. 11)։



Նկ. 10.
Շվեդական լիֆ։

Առհասարակ բոլոր լիֆերը պէտք է փոսեր ունենան ծծերի համար, որպէսզի սրանք չսեղմուեն։

Նկ. 11.
Անգլիական լիֆ։

Բժ. Ֆիլատովը գրատնում է, որ լիֆերն անդամ սեղմում են ու մոտեցնում իրար ուսերը և դրանից առաջ է գալիս կուզիկութիւն (թիակները դուրս են ցցվում)։ Եւ նա առաջարկում է փոքրերի համար լայն

գօտի, որը կոճկվում է յետեւից և որի վրա ամրանում է ներքեւի հագուստը։ Գօտին կախ է երկու գոլերից, որոնք անցնում են ուսի վրայով ու, մէջքի վրա խաչուելով, կոճկվում են գօտիկին։



Նկ. 12.
Լիֆ—վարտիկ։

Դեռահաս աղջիկների համար ամենից յարմար հագուստն է լիֆ-վարտիկը, որը մի կտորից է կարվում և փոխարինում է շապիկը, վարտիկն ու լիֆը միասին (տ. նկ. 12)։

Կարելի է վիզը բաց թողնել և թեւերը կարճ անել։ Բայց աւելի լաւ է (մանաւանդ ձմեռը), որ ծածկուած լինի։ Կարում են նուրբ սպիտակ բրդէ կտորից կամ սպիտակ ֆլանելից, նոյնպէս եւ քաթանից։ Եղանակին յարմարուելով, կարելի է և կանափի ու բամբակէ գործուածքներից կարել։ Այս լիֆ-վարտիկը միանդամից հագցնվում է ու հանվում և նրա վրա ամրացնվում է իւրկան։

Նկ. 13.
Առողջապահիկ իւրկա։

Իւրկան այն ձեւով պէտք է կարուի, որպէսզի պաշտպանի ներքևի մասերը ցրտից ու փոշուց։

Իւրկայի փէշերը միանում են միմեանց շէնքերի արանքով և միեւնոյն ժամանակ չեն կորցնում իրանց ձեւը (տ. նկ. 13)։

Աղջկայ երկար գուլպաները երբէք չը պէտք է սեղմուեն սրունքներին ըէտինէ

օղակներով, այլ կապուեն վարտիկի փէշից կամ (աւելի լաւ) լիֆից։

Կօշիկները պէտք է արձակ լինեն և շատ ցած կրունգով, տակը միայն կաշի, իսկ երեսը մահուդ, որովհետեւ մահուդը աւելի թափանցիկ է։

XIII

Դ Ա Շ Տ Ա Ն Ը

Հասունութեան գործած կոտրումն աղջկայ օրգանիզմի մէջ.—Հների եւ արդի կիսավայրենի ազգերի հայեացքը աղջկայ ամսականի վրա.—Դաշտանային արեանը վերագրած գերբնական ոյժը.—Դաշտանաւոր կնոջ անմաքրութեան գաղափարը.—Նրա առանձնացնումն, իբրեւ պիղծ էակի.—Դաշտանի երեւալը եւ աղջկայ հասութիւնը.—Առաջին «լուսնի» տօնելը կիսավայրենիների մէջ։

Հեռատես բնութիւնը դեռ արդանդի սաղմի մէջ դրել է աճման ու բազմանալու գործարանները. թէ տղայ և թէ աղջիկ-սաղմը կրում են արդէն իրանց մէջ սեռական կեանքի սկզբնական տարրերը։

Սակայն սեռական կեանքը երկար մանկական տարիների ընթացքում քնած է մնում թէ տղայի և թէ աղջկայ մէջ և որոշ հասակում միայն, պատանեկան հասա-

կում, նա զարթնում է և զարթնելիս մի պահանջող, բռնակալ ոյժ է դառնում օրգանիզմի ընդհանուր կեանքի մէջ։

Մանկական խաղաղ բուսական գոյութեան մէջ մի անսովոր, տագնապալից անհանգստութիւն, յուզիչ, հրատապ վրդովմունքներ են մուտք գործում; տարօրինակ ղգացողութիւններ, գայթակղեցնող մտքեր, անզսպելի հակումներ, ընդունակութիւնների ու ձգտումների ուժգին լարումն և ուղղի գերաշխատութիւնն,—ամբողջ օրգանիզմի զսպանակային ձգաւորութիւնն.—ահա այն անորոշ, նախագնաց նշանները, որոնք սեռական հասունութեան առաջին սուրհանդակներն են, սեռական նորաբողբոջ կեանքի գարնան աւետաբեր ծիծեռնակները։

Նրանք աւետում են, որ մի նոր արև է ծագում պատանու մատաղ կեանքի հորիզոնին, արեւ,—որի ջերմութիւնից բացվում է կոկոնը, հոտաւէտ՝ու գունաւոր դառնում վարդի թերթիկները և հիւթով լցւում է ամբողջ ծաղիկը.

Տաս-տասնհինգ տարի մանկական օրգանիզմը աճում է, փարթամանում, նրա հետ զարգանում են նաեւ սեռական բարգ-

գործարանները, որոնք կամաց-կամաց պատրաստվում են մայրութեան դժուարին դերի համար։

Եւ աղջկայ նրբակազմ, դեռ անկատար ֆիզիկական ու զգայական կեանքի մէջ մի մեծ, հիմնական կոտրումն է տեղի ունենում, որը, ինչպէս կը տեսնենք, մեծ ցնցումն է գցում նրան ամբողջ գոյութեան մէջ։

Առաջին արիւնհոսութիւնը այս ցնցման ակնյայտ արտայայտութիւններից մէկն է։

Բայց լաւ գիտենանք, որ նա դեռ հասունութեան առհաւատչեան չէ, ինչպէս կարծում են շատերը։

Այդ մի մեծ ու վտանգաւոր սխալ է, որ մենք կը կամենայինք ուղղել, որովհետեւ նա մեծամեծ չարիքների պատճառ կարող է դառնալ և դառնում էլ է (վաղաժամ ամուսնութիւն իր հետեւանքներով)։

Դաշտանը դեռ հասունութիւն չէ։ Դաշտանը բացուելուց յետոյ էլ աղջկայ օրգանիզմը աճման մէջ է։ Դաշտանը կրկնուելով ամսէ ամիս տեւում է աւելի, քան երեսուն տարի—ուրեմն կնոջ կեանքի կէսը—և ընտրում է նրա ամենաեռուն տարիները։ Որչափ ուրեմն կարեւոր է աղջկայ ու կնոջ համար լիակատար ու դրական տեղեկութիւններ ունենալ այս մեծ ակտի մասին, որը, կրկնում ենք, ահագին դեր է խաղում նրա կեանքի մէջ և այդ նպատակն է մեզ թելադրում երկար կանգ առնել այս երեւոյթի վրա և խօսել աղջկայ հետ պարզ ոճով, իբրեւ բժիշկ և իբրեւ եղբայր։

Արիւնհոսութիւնը, պարբերաբար ամսէ ամիս կրկնուող և որոշ ժամանակամիջոց տեւող արիւնհոսութիւնը, անբացատրելի էր հին մարդուն և իր խորհրդաւորութեամբ դերբնական երեւոյթների շարքն էր անցել։

Եւ հների (նաև նոր ոչ-քաղաքակիրթ ազգերի) մէջ դաշտանը մի ակտ է, որի միջոցով պիղծ, կեղտոտ հիւթեր են դուրս թափվում։ Այս հիւթերը, իբր թէ, պարունակվում են հոսող արեան մէջ և հաղորդում են սրան զանազան դերբնական յատկութիւններ։

Ճանապարհորդները և հեսազօտողները անհամար սնապաշտութիւններ են արձանագրել, որոնք մինչեւ հիմա էլ կապուած են դաշտանի հետ։

Շվաբիայում և գերմանական շատ եր-

կրներում մինչև հիմա էլ գոյութիւն ունի այն սնապաշտութիւնը, թէ դաշտանի արիւնով թրջած շապիկը հանգցնում է հրդեհը, եթէ կրակը գցեն։ Կոյսի շապիկը հագնող տղամարդին չի դիպչի գնդակը ու չի վիրաւորի սուրը։

Հռոմում կարծում էին, թէ կարկուտն ու փոթորիկն անգամ փախչում են դաշտանաւորից։

Պլինիուսը զարմանալի պարզամտութեամբ առաջ է բերում հետևեալը, իբրև դաշտանի արեան զօրութեան նմուշներ.

Երբ դաշտան ունեցողը մօտենում է խաղողին, սա թթվում է, բոյսը չորանում է, ծառի տերևները թափվում են։ Նրա մի հայեացքից հայելին խաւարում է, սուր գործիքը գուլանում, փղոսկրը մուգ գոյն է ստանում; մինչև անգամ երկաթը ժանգոտում է և վատ հոտ ստանում և այլն։ Դաշտանի արիւնը լիզող շունը կատաղում է և նրա խածելը չափազանց վտանգաւոր է դառնում։

Իբրև այս հայեացքի հետեւանք, դաշտանաւոր կինը և աղջիկը դառնում են պիղծ, արատաւոր էակներ, սրանցից պէտք

է հեռանալ, կամ նրանց հեռացնել, որ չպղծեն ուրիշներին։

Հին աշխարհում, նոյնիսկ Յունաստանում, դաշտանաւոր կինը անմաքուր էր համարվում։

Մովսէս Մարգարէն նոյնպէս աղջկան ու կնոջը այդ միջոցին պիղծ է համարում, պատուիրում է նրանց առանձնանալ եօթ օր և եօթ օրից յետոյ մատաղ անել։ Ոչ ոք չպէտք է ձեռ տար նրանց իրերին, ամուսինը չպէտք է մօտենար իր կնոջ անկողնուն անգամ; իսկ յարաբերութիւն ունեցողը մահուան էր դատապարտվում կնոջ հետ միասին։ Արիւնհոսութիւնը վերջանալուց յետոյ աղջիկը պիտի լողանար աղբիւրի կամ անձրեւի պաղ ջրի մէջ, թէկուզ ձմեռ լինէր։ Այս նպատակի համար առանձին աւազաններ էին շինվում տներում, որոնք կոչվում էին «միկուա *)»։

Նոյն աչքով էին նայում դաշտանաւոր կնոջ վրա նոյնպէս և պարսիկները, մեդացիք, իրանցիք։ Զենդավեստի մէջ ուղղակի ասուած է, թէ արիւնհոսութիւնը անմաքուր է դարձնում աղջկան։ Սա պիտի ա-

*) Ѕ. Плоссъ. Женщина.

ռանձնանայ, հեռանայ շրջապատողներից և չնայի օջախի կրակին, որ չպղծի նրան. նրան հեռացնում էին 15 քայլ ջրից ու կրակից։ Եթէ դաշտանաւոր կինը յարաբերութիւն էր ունենում տղամարդու հետ, նա ճիպոտի 20 հարուած էր ստանում։ Հնդկաստանում այդ մի աննրելի յանցանք ու մեղք էր համարվում, որի համար մարդիկ պէտք է տանջուէին դժոխքում։ Այնտեղ աղջկան պառկեցնում էին տան մի հեռաւոր պուճախում, որը դաcտան-սատան էր կոչվում։ Պարսիկների տներում էլ դեռ մինչեւ այժմ այսպիսի մի անկիւն կայ։ Հնդիկ աղջիկը այդ միջոցին չպէտք է լուացուի և լաց լինի. նա իրաւունք չունի մի միջատ անգամ սպանելու, ոչ էլ ձի, փիղ, էշ հեծնելու և ոչ էլ կառք նստելու։ Նրան արգելուած է նոյնպէս և գլխին անուշահոտութիւններ, օծանելիք քսել, խաղերի մասնակցել, ցերեկը պառկել կամ քնել, ոչ էլ ատամները մաքրել ու բերանը ողողել։ Տղամարդու հետ յարակցութիւն ունենալու միտքն անգամ մահացու մեղք է համարվում։ Նա չպէտք է մտածի անգամ Աստծու, արեգակի, զոհաբերութիւնների և աղօթքի մասին։ Նա իրաւունք չունի իր դաւակներին անդամ մօտենալու։

Դաշտանով պղծուած կնոջ, ինչպէս ասել էինք, հեռացնում էին տնից։

Շատ տեղերում այդ նպատակով շինվում էին խրճիթներ, կամ խփվում էին վրաններ, մարդկային բնակատեղերից հեռու, օրինակ. անտառներում, ուր ապաստանում էին դաշտանաւորները և մնում մինչեւ արիւնհոսութեան վերջանալը։ Այնտեղ նրանց պահում էին բոլորովին առանձնացած, պառաւ կանանց հսկողութեան ներքոյ և ոչ մի տղամարդ չէր համարձակվում մօտենալ նրանց ու որ և է առնչութիւն ունենալ այդ տան հետ։

Առաջին «լուսնի» յայտնուելը պահանջում է, ըստ ժողովրդի հասկացողութեան, որոշ զգուշութիւններ։ Մի տեղ աղջկան պղծած-նստած են պահում; միւս տեղ նրան արգելում են սանրով գլուխը սանրել, մի երրորդ տեղ որոշ կերակուրներ են միայն թոյլ տալիս ուտելու և այլն և այլն։

Դաշտանի յայտնուելը մինչև հիմա էլ յաւակցաբար համարվում է իբրև աղջկայ կատարեալ հասունութեան ապացոյց, իսկ

քանի որ հասունութեան հետ կապուած են որոշ քաղաքացիական կամ հասարակական իրաւունքներ, նա տօնվում է բոլոր աղգերի մէջ։

Եւ յիրաւի մի շարք ծէսեր են կատարվում մեր օրերում անգամ անքաղաքակիրթ աղգերի մէջ։ Շատ տեղեր հասութիւնը տօնվում է շքեղ ծէսերով։

Աւստրալիական մի քանի ցեղերի մէջ երեխայի երկու կտրիչ ատամները կոտրում են կամ սղոցում, երբեմն էլ սև ներկում։ Ուրիշ երկրներում մորթագրում են աղջկան (татуировка, tatouage)։ Աֆրիկայում այդ նպատակով խեղճերին մինչև 4000 ծակոց են անում ասեղով։ Ականջների ու քթի ծակելը կատարվում է նոյնպէս հասունութեան միջոցին։ Շատ տեղեր ծակ են անում նոյնպէս և ներքին պռօշը և մէջը փայտ կամ փղոսկր ամրացնում։

Ցիշած արարողութիւնները համեմատաբար անմեղ բաներ են։

Շատ տեղերում երեխաներին սոսկալի տանջանքների և հրեշաւորութիւնների են ենթարկում։

Այսպէս, Գվիանում կենդանու ատամով երկու խոր ու երկար ճեղքուածներ են անում աղջկայ մէջքի կաշու վրա ու վերքի մէջ պղպեղ ածում։ Երեք օր նրան քաղցած ու ծարաւ են պահում ազանազան տանջանքների են ենթարկում, յետոյ մի ամիս պահում են համակի մէջ։ Մի ուրիշ տեղ տընեցիք ու հիւրերը ճիպոտներով ծեծում են մերկացրած աղջկան 6 ժամ շարունակ և սա չպէտք է ձայն հանի և ոչ էլ դէմքի վրա ցաւ արտայայտի... Տեղ-տեղ հասունացած աղջիկներին տանում են թաղնուած տեղեր և յանձնում պառաւ կանանց, որոնք նրանց պատրաստում են ապագայ ամուսնական կեանքի համար, անտանելի խստութեամբ պահելով և զրկանքների ու տանջանքների ենթարկելով։

Այսպէս է տօնվում նոյնիսկ մեր օրերում առաջին լուսինը կիսավայրենի ցեղերի մէջ։

կիրթ ազգերի մէջ վերջ տալ այս անմիտ հաւատալիքներին ու ամսական արիւնհոսութիւնը մտցնել կնոջ ֆիզիոլոգիայի մէջ։

Անտարակոյս, յիշած հայեացքները դաշտանի վրա, ինչպէս և ժողովրդական բոլոր սնոտիապաշտութիւնները որոշ դրական հիմունքներ ունեն, այսինքն. որոշ իրողութեան վրա են հիմնուած։

Դաշտանի վերաբերմամբ մենք կարող ենք մատնանիշ անել մի երկար շարք ֆիզիկական ու հոգեկան ցնցումների վրա, որոնք տեղի ունեն այդ ժամանակամիջոցին և որոնց անմեկնելիութիւնը հէնց գրգռել է խաւար ուղեղներ և առաջ է բերել յիշած սնոտիապաշտութիւնները։ Ամիսը մէկ անգամ (աւելի ճշտօրէն ասած-28 օրը մէկ անգամ) աղջկայ կամ կնոջ սեռական դորձարանները (մեզ անյայտ պատճառով) լցվում են արիւնով, որի ճնշողութեան ներքոյ զաւակատան թաղանթի երակներից մի քանիսը պատռվում են ու արիւն տալիս։ Այդ արիւնն է, որը դուրս թափուելով կազմում է աղջկայ «ամսականը»։ Մի քանի օր տեւում է այս արիւնթափութիւնը, յետոյ արիւնը քաշվում է աղջկայ կոնքային

XIV

ԴԱՇՏԱՆԸ ԵՒ ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԱՂՋԿԱՅ ԿԱԶՄՈՒԱԾՔԻ ՎՐԱ

Դաշտանի ֆիզիոլոգիան.—Նրա պարբերականութիւնը.—Ո՞ր տարիքումն է սկսվում նա.—Կազմուածքի, կլիմայի ու կենցաղի ազդեցութիւնը «ամսականի» վրա.—Դաշտանի «փոխանակող» արիւնհոսութիւնը.—Դաշտանի տեւողութիւնը.—Ուշացած դաշտան.—Նախադաշտանային նշանները.—Աղջկայ կազմուածքի զարգացումն.—Նեւրային գրգռումն, զգացմունքների լարումն, բնաւորութեան եւ հոգեկան ապխարհում կատարուած փոփոխութիւնները արբունքի մէջ։ Սեանս-Հիլէրի օրէնքը.—Աղջկայ կազմուածքի արագ զարգացումից առաջած խանգարումները ու հիւանդական երեւոյթները.—Խանգարումներ սեռական գործարանների Ֆունկցիայի մէջ.—Կմախքի վնասումներ.—Արնաստութիւն եւ նրա պատճառները.—Թոռմախս։

Այսպէս ուրեմն մարդկութեան մանկութեան մէջ դաշտանը մի տարօրինակ հակաբնական երեւոյթ էր կարծվում; և միայն լուսաւորութիւնը կարողացաւ քաղաքա-

գործարանների միջից ու դաշտանը դադարում։ Այս ակը համեմատում են ծովի յորդանալու ու նուազման (приливъ и отливъ)։ Աղկայ սեռական օրդանների մէջ մեծ դեր են խաղում երկու գնդակաձև մարմիններ, որոնք դրուած են զաւակատան երկու կողմերը. սրանք ձուարաններն են, որոնք արտադրում են ձուիկները, ապագայ երեխայի սկզբնասաղմերը։ Ձուիկների թիւը ահագին է, մի քանի հարիւր հազար, բայց նրանցից մի քանիսն են միայն բեղմնաւորվում։ Ձուիկներից մէկը կամ մի քանիսը ազատվում են ու ընկնում զաւակատան մէջ, որտեղ և տեղի է ունենում բեղմնաւորումն, այլապէս նա կորչում է։ Բեղմնաւորուելու ամենադպաստաւոր ժամանակը դաշտանն է, որովհետեւ այդ միջոցին արգանդի խոռոչի թաղանթը, արիւնից ուռած, փուխր դառած, կնճիռներ է կազմում, որոնց մէջ և բուն է դնում տղամարդու սերմով բեղմնաւորուած ձուիկը, այնպէս, ինչպէս ցորենի հատիկը արմատ է դնում փուխր ու անհարթ հողի մէջ։

Ահա դաշտանի կատարած դերը և պատ-

ճառը։ Դաշտանը կրկնվում է ամեն լուսնամիսը (չորս շաբաթ-28 օր) մի անգամ։

Այս զարմանալի պարբերումների, ինչպէս և կեանքի շատ երեւոյթների, իսկական պատճառը մեզ անյայտ է մնում։ Ինչի՞ է մեր սիրտը մի րոպէում 70-80 անգամ է խփում, ինչի՞ մենք 16 անգամ շունչ ենք առնում նոյն րոպէի մէջ—նոյնպէս չգիտենք։ Լուսնամսի տեւողութիւն ունենալու զուգադիպումը կարծել է տուել, թէ դաշտանի երեւալը կապ ունի լուսնի հետ։ Սակայն այդ մի տարօրինակ սխալ հետեւողութիւն է, որի ժողովրդի հասկացողութեան մէջ արմատանալը թիւրիմացութեան կամ տգիտութեան արդիւնք է։ Եթէ արիւնհոսութիւնը բոլոր աղջիկների ու կանանց համար լուսնի որոշ օրը սկսուէր ու վերջանար, գուցէ դեռ հնար լինէր կապել այդ երեւոյթը լուսնի շրջանների հետ, բայց չէ՞ որ երկրիս բոլոր կանայք մի օրում չեն տեսնում իրանց ամսականը։

Դաշտանը բացվում է աղջկայ 13-ից մինչև 16 տարին։ Սակայն նա երեւում է նաև աւելի վաղ ու աւելի ուշ, նայելով երկրի կլիմային, աղջկայ ֆիզիկական զար-

գացմանը և կենցաղին։ Ջերմ երկրներում աղջիկը տեսնում է ամնականը 11—10 տարեկան հասակում; նոյնիսկ աւելի վաղ, իսկ հիւսիսային երկրներում 16-ից յետոյ միայն։

Քաթիլյան հինգ տարեկան էր, երբ Մահամմէդը ամուսնացաւ նրա հետ և ութ տարեկան էր, երբ կին դարձաւ։ Հնդկաստանում 10 տարեկան աղջիկը արդէն հասունացած է համարվում ու ամուսնանում է, իսկ Հարաւային Ամերիկայի հնդիկ աղջիկներին 9 տարեկանից վաղ են մարդու տալիս։

Մեր երկրում քաղաքաբնակ աղջիկները դաշտանաւորվում են յաճախ 12—13 տարեկան, իսկ լեռնաբնակները աւելի ուշ։

Քաղաքի կեանքը ընդհանրապէս աւելի վաղ է հասունացնում աղջկան, քան գիւղինը։ Սրա պատճառն անտարակոյս անընդնատ շփումներն են տղամարդկանց հետ, որով վաղաժամ զարթնում են սեռական զգացմունքները, նոյնպէս և թատրոնները, պարահանդէսները ու ընթերցանութիւնները, որոնք գրգռելով աղջկայ երեւակայութիւնը, դրա հետ միասին զարթեցնում են նիրհած պատանեկան զգացմունքներ։

Ժ. Ժ. Ռուսսօն նկատել է Շվեյցարիայի լեռնականների մէջ, որ արդէն լաւ կազմակերպուած աղջիկները դեռ դաշտան չէին տեսած և այս հանգամանքը նա վերագրում է բարքերի պարզութեանը, ընութեան գոգում վարած անպաճոյճ կենցաղին, որը չի գրգռում երեւակայութիւնը։

Մի քանի հեղինակներ մատնանիշ են անում այն հանգամանքի վրա, որ չափազանց տաք հագուստը, տաք տների մէջ ապրելը առաջ են գցում դաշտանի երեւալը։ Այս տեսակէտից մեր գիւղերում գործական fուrսին գուցէ որոշ դեր խաղալիս լինի։

Նկատվում է, որ սեւահեր աղջիկները աւելի վաղ են դաշտանավորվում, քան շէկահերները, փափկասուններն աւելի, քան հասարակ, աշխատաւոր կեանք վարողները, հիւանդոտ-արիւնատներն աւելի, քան առողջ և յաղթանդամները։

Բացառութիւններ, ի հարկէ, շատ կան։

Պատահում են դէպքեր, որ արբունքը սկսվում է նաև մանկական հասակում, պատահում է նոյնպէս և 18—20 տարում։

նատ մայրեր տեսնելով, որ իրանց աղջկայ ամսականը չի բացվում, վրդովվում են, դէս ու դէն են ընկնում, զանազան միջոցներ են գործ դնում և աւելի վնասում են աղջկան, քան օգուտ տալիս։

Այստեղ պէտք է յիշենք մի երեւոյթի մասին, որը անչափ անհանգստութեան պատճառ է դառնում—այդ փոխանակող արիւնհոսութիւնն է։ Երբեմն դաշտանի ժամանակ արիւնը, փոխանակ սովորական ճանապարհով դուրս գալու, հոսում է մարմնի մի ուրիշ տեղից, օր. քթից, բերանից, աղիքներից (յետքից) կամ ստամոքսից (փըսխում է)։ Այս արիւնհոսութիւնները առանձին նշանակութիւն չունեն աղջկայ առողջական դրութեան համար, բայց եթէ չափազանց են լինում, վերջ ի վերջոյ կարող են աղդել և առաջացնել արնատութիւն, այս պատճառով հարկաւոր է բժշկի դիմել։

Յաճախ, առաջին դաշտանից յետոյ, մի բանի ամիս աղջիկը չի «տեսնում». առհասարակ առաջին վեց ամիսը (ու հէնց մի տարին) շատ անկանոնութիւններ են պատահում և դրա մէջ վրդովեցուցիչ բան չկայ։

Դաշտանը տեւում է 3—5 օր, անօր-

մալ և հիւանդական դէպքերում նաև աւելի երկար (մինչեւ 8 օր)։ Ամեն աղջիկ փորձով գիտէ, թէ քանի օր է տեւում է արիւնհոսութիւնը, և գիտէ թէ ինչ պայմաններ ու հանգամանքներ ազդում են նրա տեւողութեան վրա։ Դրա պատճառը լինում է կենցաղի փոփոխութիւնը, ծանր աշխատանքներ, անհանգիստ կեանք, հոգեկան վրդովմունքներ, անքուն գիշերներ, կօրսէտի ձգումն, զանազան դրգռիչ խմիչքների գործածութիւնը (սուրճ, գինի), սեռական գրգռումներ և այլն։

Նոյն գործօններն ազդում են նաև կարճացնելով դադարները։ Մենք ասել ենք, որ դաշտանը կրկնվում է նորմալ դէպքերում 27—30 օրը մի անգամ։ Անզգոյշ կենցաղը կարող է կրկնել տալ 26—25, նոյնիսկ 22 օրը մի անգամ, որ կը դառնայ մի անբնական դրութիւն։

Երբեմն դաշտանը բացակայում է մինչեւ 17—19 տարեկան հասակը։ Աղջիկը ամեն ամիս զգում է թեթեւ ցաւեր արգանդում, բայց արիւն չկայ։ Այս դէպքերում անհրաժեշտ է դիմել բժշկի, որովհետև երբ-

բեմն աղջկայ սեռական գործարանների մէջ որ և է անբնական բան է լինում։

Երբեմն էլ արդէն սկսուած արիւնհոսութիւնը մէկ-երկու օր տեւելուց յետոյ, յանկարծ կտրվում է։ Այդ հետեւանք է լինում վախի, մի մեծ հոգեկան վրդովմունքի, կամ մրսելու, վայր ընկնելու։ Այդ պատահարներից յետոյ երբեմն դաշտանը մի քանի ամիս դադարում է։

Սկզբում ասել ենք, թէ արբունքի մօտենալուն աղջկայ ամբողջ ֆիզիկան ու հոգեկան աշխարհները ցնցվում են։

Այս ցնցումը օրգանիզմի մէջ արտայայտվում է մի շարք երեւոյթներով, որ պէտք է լաւ ճանաչել։

Աղջկայ սեռական գործարանները առհասարակ մեծ քանակութեամբ արիւն են ստանում; իսկ դաշտանի մօտենալուն-աւելի եւս։ Բայց այդ արիւնլցումն չի սահմանափակվում աղջկայ զաւակատնով ու ձուաբաններով. կոնքի մէջ գրուած բոլոր գործարանները ևս լցվում են արիւնով։ Այդ է պատճառը, որ պատանուհին, դաշտանը մօտենալիս, մի տեսակ ծանրութիւն է զգում

աճուկների մէջ ու գաւակներում, որը սաստկանում է քայլելիս կամ մէջքը ծռելիս։ Բացի այդ անսովոր զգացողութիւններ են առաջ գալիս արտաքին սեռական գործարաններում, որոնք զարմանալի զգայուն ու գրգռուողենդառնում, մազոտում են ու արտադրում լորձանման հեղուկներ։

Որքան շրջահայեաց ու զգոյշ պէտք լինեն ծնողները, որ այս դիւրագրգռութիւնը չտանի պատանի աղջկան դէպի ախտ, դէպի տուփական զգայնութիւն։ Սեղմուած հագուստը, կռացած նստելը (կար անելիս), սայլով անհարթ ճանապարհ գնալը, սանդուխներ բարձրանալը, վերջապէս պարը և ամեն տեսակ ուժգին շարժումներ, ըստ Ֆիւրստի, ինքնակար են, որովհետեւ գրգռման են հասցնում սեռական օրգանները. —գրգռումն աւելանում է նոյնպէս և մրրսելուց։ Եւ յիրաւի, մի որեւէ մարմնամասի յանկարծակի սառեցնումն առաջացնում է արեան ներլցնումն դրսից-ներս նոյն սեռական գործարանների մէջ, իսկ դրանից առաջանում են ոչ միայն գրգռումն, այլ և ցաւեր ու ուրիշ հիւանդութիւններ։

Միեւնոյն ժամանակ զաւակատունն ու

բեմն աղջկայ սեռական գործարանների մէջ որ և է անբնական բան է լինում։

Երբեմն էլ արդէն սկսուած արիւնհոսութիւնը մէկ-երկու օր տեւելուց յետոյ, յանկարծ կտրվում է։ Այդ հետեւանք է լինում վախի, մի մեծ հոգեկան վրդովմունքի, կամ մրսելու, վայր ընկնելու։ Այդ պատահարներից յետոյ երբեմն դաշտանը մի քանի ամիս դադարում է։

Սկզբում ասել ենք, թէ արբունքի մօտենալուն աղջկայ ամբողջ ֆիզիկան ու հոգեկան աշխարհները ցնցվում են։

Այս ցնցումը օրգանիզմի մէջ արտայայտվում է մի շարք երեւոյթներով, որ պէտք է լաւ ճանաչել։

Աղջկայ սեռական գործարանները առհասարակ մեծ քանակութեամբ արիւն են ստանում; իսկ դաշտանի մօտենալուն-աւելի եւս։ Բայց այդ արիւնլցումն չի սահմանափակվում աղջկայ զաւակատնով ու ձուաբաններով. կոնքի մէջ գրուած բոլոր գործարանները ևս լցվում են արիւնով։ Այդ է պատճառը, որ պատանուհին, դաշտանը մօտենալիս, մի տեսակ ծանրութիւն է զգում

աճուկների մէջ ու գաւակներում, որը սաստկանում է քայլելիս կամ մէջքը ծռելիս։ Բացի այդ անսովոր զգացողութիւններ են առաջ գալիս արտաքին սեռական գործարաններում, որոնք զարմանալի զգայուն ու գրգռուողենդառնում, մազոտում են ու արտադրում լորձանման հեղուկներ։

Որքան շրջահայեաց ու զգոյշ պէտք լինեն ծնողները, որ այս դիւրագրգռութիւնը չտանի պատանի աղջկան դէպի ախտ, դէպի տուփական զգայնութիւն։ Սեղմուած հագուստը, կռացած նստելը (կար անելիս), սայլով անհարթ ճանապարհ գնալը, սանդուխներ բարձրանալը, վերջապէս պարը և ամեն տեսակ ուժգին շարժումներ, ըստ Ֆիւրստի, ՀԷսասակար են, որովհետեւ գրգռման են հասցնում սեռական օրգանները. —գրգռումն աւելանում է նոյնպէս և մրրսելուց։ Եւ յիրաւի, մի որեւէ մարմնամասի յանկարծակի սառեցնումն առաջացնում է արեան ներլցնումն գլխից-ներս նոյն սեռական գործարանների մէջ, իսկ դրանից առաջանում են ոչ միայն գրգռումն, այլ և ցաւեր ու ուրիշ հիւանդութիւններ։

Միեւնոյն ժամանակ զաւակատունն ու

ձուարանները մեծանում են, ու որոշ մնայուն դիրք բռնում կոնքի մէջ, իսկ կոնքի ոսկրները լայնանում են, ամրանում և լայնացնում աւազանը, որի մէջ պէտք է զարգանայ զաւակատունը և ապրի ապագայ սաղմը։

Ընդհանրապէս զարմանալի արագութեամբ է աճում աղջկայ ամբողջ կմախքը. հասակը երկարում է, լայնանում է կրծքի վանդակը, որով զարգանում են և թոքերը։ Քարշը նոյնպէս արագ աճում է հասունութեան միջոցին, մինչեւ անգամ (13—14 տարեկան հասակը) աւելի է դառնում, քան նոյն հասակի տղաներինը։ Բացի այդ, առանձնապէս պէտք է յիշատակել աղջկայ usինfնեrի մէջ առաջ եկած փոփոխութիւնները։

Ստինքները կնոջ սեռական գործարաններին են պատկանում։ Ցամենայն դէպս, նրանք ներվային թելերով կապուած են սեռական գործարանների (զաւակատան, ձուարանի և արտաքին մասերի) հետ։ Այս պատճառով էլ դաշտանի միջոցին ստինքները լցվում են արիւնով, գնդանում, նոյնիսկ

ցաւում, պտուկները չափազանց հեշտագրգիռ դառնում և այլն։

Նկատվում է մի տեսակ լարումն համարեա բոլոր զգայարանքների, որոնք զարմանալի սրութեան են հասնում աղջկայ դաշտանային շրջանում։—Ընդհանրապէս նկատվում է ամբողջ ներվային սիստեմի դիւրագրգռումն կամ, ընդհակառակ, դիւրանուազումն։

Այս միջոցին ամեն հոգեկան շարժում չափազանցրած է և յանկարծահաս, այնպէս որ աղջիկը անկարող է լինում սանձել ստացած տպաւորութիւնների աղդեցութիւնը կազմուածքի վրա։ Ահ, ցնծութիւն, ամօթ, դայրոյթ, բարկութիւն,—ամեն ինչ շփոթում է նրա արեան շրջանառութիւնը, որև լաւ նկատվում է աղջկայ մերթ կարմրող, մերթ սպրտող դէմքի վրա։

Սրանք են խոշոր, աչքի ընկնող ֆիզիկական երեւոյթները աճող օրգանիզմի մէջ։

Բացի այդ, հասունութեան մտենալուն նաև բնաւորութեան մէջ առաջանում է մի շարք փոփոխութիւններ, որոնց վրա անհրաժեշտ է կանգ առնել.

«Աղջկայ հոգու խորքերում ծագող նո-

բանոր յոյզերը այնպիսի մի ցնցում են գցում նրա ամբողջ հոգեկան աշխարհի մէջ, որ նրա հին, մինչեւ այժմ փայփայած մըտքերն ու զգացողութիւնները միանգամայն տակն ու վրաեն լինում:—ամեն բան ուրիշ, նոր ձեւ ու գոյն, նոր նշանակութիւն է ստանում:—աշխարհը երեւում է նրա աչքերին մի նոր, անսովոր լուսով լուսաւորուած:

«Մատաղահաս աղջիկը աւելի քաշուող ու ամօթխած է դառնում, աւելի է զսպում իրան, նրա ձեւերն ու շարժումները աւելի քնքոյշ և չքնաղ են դառնում և միեւնոյն ժամանակ նրա սրտի մէջ զարթնում են յանկարծակի շփոթումներ, յուզմունքներ, տրամադրութեան փոփոխումներ, առաջ է գալիս հակումն դէպի մելամաղձութիւն և առանձնութիւն, նա յաճախ տխրում է ու հոգոցներ հանում, առանց որոշ պատճառի լալիս է, և զգում է իր սրտի խորքերում ծագումն անհասկանալի և անորոշ իղձերի ու ցանկութիւնների: Հաճոյանալու ցանկութիւնը, որ բնական է կնոջ մէջ, մի արտասովոր պահանջ է դառնում և իշխում է միւս բնազդումներին: Այդ ժամանակ զարգանում են նաեւ կրօնական զգացմունքները, որոնք մինչեւ այդ բացակայ էին:

«Ակզբներում անգիտելով այն անսովոր յոյզերի և դէպի միւս սեռն ծագող ձգտման պատճառը, որոնք վրդովում են նրանց, պատանուհին յաճախ իր զգացմունքները վատնում է կամ չափազանց ատուածպաշտութեան մէջ, նուիրելով իրան աղօթքի ու պաշտամունքների, կամ թէ չէ իր սիրածարաւ սրտի բոլոր զգացմունքները ուղղելով դէպի իր ընկերուհիները: Եւ, եթէ աղջիկը հեռու է պահվում հասարակութիւնից և առիթ չի ունենում շփուելու երիտասարդների հետ, այն ժամանակ դէպի իր ընկերուհիները տածած այս ընկերական սէրը դառնում է ուղղակի սեռական սէր: Ընկերուհուն գրած նամակները նոյն ձեւ են ընդունում, ինչ որ ապագայում պիտի լինեն սիրահարին գրած նամակները»:

Առաջ եմ բերում հետեւեալ նամակը, որ կարող է ծառայել իբրեւ նմուշ այն թղթակցութիւնների, որ վարում են արբունքի հասած աղջիկները իրար հետ.

«Իմ միշտ շատ սիրելի և չքնաղ օրիորդ, մինթէ դուք չգիտէք, որ ձեր իւրաքանչիւր բառը ինձ երջանիկ է դարձնում...

«Եթէ գիտենայիք, թէ ինչ մեծ դատարկութիւն եմ զգում սրտիս մէջ, անշուշտ կը շտապէիք լցնելու, դուք, որ այդչափ բարի էք... դէպի ինձ։ Ես այնպիսի անհամբերութեամբ էի սպասում արձակուրդներին, որ նորից տեսնեմ ձեզ և բերանովս կրկնեմ, թէ սիրում եմ ձեզ...

«Ցիշում էք ձեր վերադարձի օրը... Եթէ մենակ լինէինք, ես ձեզ կը խեղդէի համբոյրներովս... վաղուց ես պահանջ էի զգում ձեզ հետ միայնակ մնալու... բայց այդ չէր յաջողվում և ստիպուած էի խեղդել մէջս այս իղձը։ Հէնց որ հնար գտնէք, երկար-երկար նամակ գրեցէք։ Զէ՞ որ, իմ թանկագինս, դուք այնքան բարի էք, որ այդ հրճուանքը չէք մերժի ձեր Պ.-ին։ Այլ ես անկարող եմ շարունակել, վախում եմ։ Ց՛տեսութիւն, սիրածս, ձեր պատկերը միշտ սրտիս խորքերումն եմ պահում։ Մի համբոյր...

Միշտ ձեզ սիրող Պ.» *)

Իտար ասում է հետեւեալը. «Երբ որ մարդ կարդում է հասունացած աղջկայ

*) Marro. La puberté.

օրագիրը, շատ մեծ հմտութիւն չը պէտք է ունենայ նա, որ կարող լինի որոշել, թէ որ տողերը դաշտանի օրերն են գրուած և որոնք յետոյ։ Այդ այնքան պարզ է, որ թւում է թէ որոշ տողեր գրելիս աղջիկն ուզեցել է ասել. «այսօր իմ ամսականն է»։

Հասունացող կամ արդէն հասունացած աղջկայ հոգեկան տրամադրութեան այս շրջանը չափազանց արկածալից ու վտանգաւոր մի շրջան է, որի միջոցին սիրելու ու սիրուելու պահանջը կարող է մղել աղջկան դէպի անհեռատես վարմունքներ, դէպի անդիմադրելի հակումն դէպի միւս սեռը, մանաւանդ, որ շատերի մէջ ամօթխածութիւնը այնքան զօրեղ չէ, որ սանձ դնի նրանց յաճախ միամիտ, բայց և այնպէս ապատաւոր կրքային միտումներին, նոյն իսկ գործողութիւններին։

Այսպիսով աղջիկը երբեմն այնպիսի յանդուգն քայլեր է անում, որ յետոյ չի կարողանում առանց կարմրելու յիշել։

Վերեւ ասացինք, որ դաշտանի բացուելը դեռ ապացոյց չէ, որ աղջիկը բոլորովին հասունացած է սեռական կեանքի համար։

Ո՛չ։

Կրիզիսը տեւում է որոշ ժամանակամիջոց, որի ընթացքում պատանուհու թէ սեռական գործարանները, և թէ ամբողջ օրգանիզմը դեռ աճման մէջ են։

Մարրօի ասելով, որը տաք կլիմայում (Իտալիայում) է արել իր դիտումները, կրիզիսը տեւում է աղջկայ համար 5—6 տարի, իսկ տղայի համար 8—10 տարի։ Այսքան տարիների ընթացքումն է, որ կատարվում են այն ներքին, մտերիմ, բայց մեզ անյայտ պրոցեսները, որոնք պէտք է կազմեն ամուսին դառնալու ընդունակ անհատներ։

Այս պրոցեսներն են, որ իրանց կանոնաւոր ընթացքում առաջ են բերում աղջկայ ֆիզիկական, բարոյական ու հոգեկան աշխարհում վերև յիշած երեւոյթները։

Ցաւակցաբար յաճախ նրանք շեղվում են իրանց կանոնաւոր ընթացքից և այն ժամանակ երեւան են գալիս կիսահիւանդական ու հիւանդական դրութիւններ, որոնք հարուածում են աճող աղջկայ կազմուածքը և շեղում են նրան բնական զարգացումից։

Այս շեղումների մասին է, որ մենք

մտադիր ենք մի քանի խօսք ասել և որոնք պէտք է նկատի ունենան ծնողները։

Գիտնական Սեանա-Հիլերը ձեւակերպել է հետեւեալ օրէնքը. օրգանիզմի դերաճումն առաջ է բերում նրա ֆունկցիաների զարգացման խանգարումն։ Ուրիշ խօսքերով. քանի արագ է աճում պատանու կազմուածքը, այնքան յետ է մնում մարմնի ամրապնդումն։ Այդ օրէնքը ակնյայտ է բուսական աշխարհում, որտեղ նկատվում է, որ արագ ծլող-աճող բոյսերը շատ նրբակազմ են լինում, անպտուղ են լինում, կամ մանր, անհիւթ պտուղներ տալիս, քան օրինակ. ծառերը, որոնց աճումն դանդաղ է։

Այս մի իրողութիւն է, որը ամենքին յայտնի է, քանի որ դիտվում է ամեն օր։ Ո՞վ չգիտէ, որ արագ հասակ անող (բարձրացող) աղջիկները ընդհանրապէս թուլամորթ, նուազարիւն ու գունատ են լինում, շուտ յոգնում են աշխատանքից, տրամադիր են լինում դէպի զանազան խանգարումներ, նոյնիսկ տկարութիւններ։

Եւ քանի արագ ու ուժգին է պատանուհու աճումն, այնքան աւելի ակնյայտ են և յաճախակի այդ խանգարումները։

Աղլկայ կազմուածքը անշուշտ աւելի պէտք է արձագանք տայ հասունութեան ցնցումին, քան տղայինը, քանի որ նրա սեռական գործարանները, ինչպէս գիտենք, աւելի բարդ ու բազմատեսակ են, հետեւաբար և աւելի կենսական նիւթեր պէտք է խլեն մարմնի միւս մասերից իրանց զարգացման համար։

Այսպիսով յիշած գործարանները մի տեսակ պարազիտներ են դառնում աղլկայ օրգանիզմի համար, քանի որ պակսեցնում են միւս բոլոր մարմնամասերի ստացած սննդահիւթերը։

Եթէ օրգանիզմը ամրակազմ է, եթէ ժառանգականութիւնը չի հարուածել նրա կենսունակութիւնը, այն ժամանակ սեռական գործարանների գերաճումն չի կարողանում ջնասել նրան,—այլ ստիպում է աղջկան աւելի սնունդ առնել և այդպիսով աճման համար բաւարար նիւթեր բաժանել բոլոր գործարաններին և մարմնամասերին.

Սակայն որչափ և զերծ լինի պատանուհին հիւանդական ժառանգականութիւնից, այնուամենայնիւ դաշտանաւորուելիս նրա կազմուածքը ենթակայ է լինում որոշ

խանգարումների ու հիւանդական շեղումների, որոնց վրա պէտք է մի քիչ կանգ առնել։

Ամենից առաջ խանգարումները նկատվում են սեռական գործարանների մէջ, որոնց գերաճումն առաջ է բերում տուփային գրգռումն, իսկական արբունք, որի միջոցին աղջիկը տղամարդու հետ հպումներից ստացած հաճոյքին բաւարարութիւն տալու համար, յաճախ անգիտակցաբար կամ ընկերուհիների օրինակին հետեւելով անձնատուր է լինում մարմնաշարժութեան։ Այս աղջիկները աչքի են ընկնում ֆիզիկական թուլութեամբ, գունատութիւնով, ծուլութիւնով։ Նրանց աչքերը արտասովոր փայլ են ստանում, իսկ կոպերի տակը կապտում կամ մգանում, դէմքերի վրա դուրս են տալիս զանազան պզուկներ, թշերը յաճախ վառվում են, այն ինչ շրթունքները դալկացած են։ Նրանք սիրում են առանձնանալ, դիւրայուզուող են դառնում ու վատ տրամադրութեան տէր, միշտ մի տեսակ ահ ու դողի մէջ են, հեռանում են ու խորշում մանկական խաղերից, նոյնպէս և իրանց սիրող անձերից, տարօրինակ վարմունքներ

ունեն, դանդաղ են ըմբռնողութեան ու մտաւոր աշխատանքի մէջ։

Կմախքի արագ աճումն ու ողնաշարի երկարումը, վերև յիշած օրէնքին համաձայն, ժամանակ չի տալիս ոսկրերին ու նրանց կապերին ամրանալ, և մենք նկատում ենք ողնաշարի ծռումներ (կորութիւններ), որոնք աւելի սաստկանում են դպրոցական կեանքում; ինչպէս ցոյց ենք տուել դրքիս նախընթաց գլխում։

Մարմնական գործարանների կողմից նկատվում են զանազան խանգարումներ, ինչպէս են. սրտխառնութիւն, բղկոց, փքումն, նոյնիսկ փսխումն և երբեմն սաստիկ փորկապութիւն։ Երբեմն էլ աղջիկները նեղւում են ստամոքսային ցաւերով, անախորժութիւնով։

Սոյն հասակումն է զարգանում նաև արնաստութիւնը (хлороз), որի ծագման մէջ մեծ դեր է խաղում; ըստ Մայներտի, Նելսոնի և ուրիշների, կօրսէտը, որ սեղմում է կրծքի ներքեւի մասը և խանգարում (ինչպէս արդէն բացատրել ենք) թէ ստամոքսի և թէ թոքերի կանոնաւոր գործունէութիւնը։ Շվեդացի Հուսը պնդում է, թէ 10

—15 տարի առաջ արնաստութիւնը անյայտ էր իր երկրում գեղջկուհիների մէջ, որովհետև կօրսէտի գործածութիւնը դեռ չէր մտել այնտեղ։ Բայց հէնց որ սկսեցին կօրսէտ հագնել, հիւանդութիւնը տարածուեց։ Պարսկաստանում և Հնդկաստանում արեան պակասութիւնը նկատվում է միայն այն աղջիկների ու կանանց վրա, որոնք եւրոպական հագուստ են հագնում։ Սակայն, անտարակոյս, միայն հագուստը չէ աղջիկների արնաստութեան պատճառը։

Այստեղ մեծ դեր են խաղում նաև քաղաքային աննպաստ կեանքի պայմանները, աղջիկների անհանգիստ, վրդովալից կենցաղը, իր ուսումով, իր անքուն դիշերներով, իր ներվային թուլութիւններով, մնունդի պակասաւորութեամբ։

Արնաստութիւնը մի չարիք է, որը խորապէս հարուածում է աղջկայ դեռահաս օրգանիզմը, որ դարձնում է նրան ներվային, նոյնիսկ հիստերիկ, ընկճում է նրա հոգին ու միտքը, առաջ է բերում թուլութիւն, գլխի պտոյտ գալ, սրտի բաբախումն, շնչարգելութիւն, մարսողութեան տկարութիւններ և այլն և այլն։

Աղջկայ դաշտանային շրջանի միւս, աւելի սպառնալից արտայայտութիւնն է բոfախs կամ բարակացաւը, ի հարկէ այն աղջիկների մօտ, որոնք ժառանգաբար տրամադրուած են դէպի այս սոսկալի հիւանդութիւնը։

Ցիշատակենք (ապագայում այդ մասին առանձնապէս խօսել խոստանալով) նաև ներվային խանգարումները, որոնք հանում են մինչեւ ներվային ցաւերի, հեստերիայի և նոյնիսկ ժամանակաւոր ցնորութեան ու յանցաւորութեան։

Սրանք են համառօտօրէն դաշտանային շրջանում աղջկան սպառնացող վտանգները։ Այս վտանգների մասին ծնողները ամեն տեղ և ամեն դասակարգի մէջ շատ թերի հասկացողութիւն ունեն, յամենայն դէպս զարմանալի անհոգութեամբ ու կարճատեսութեամբ են վերաբերվում նրանք դէպի իրանց աղջիկների առողջութիւնը։

XV

ԴԱՇՏԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Դաշտանի առողջապահութեան անհրաժեշտութիւնը.—Պէտք է պատրաստել աղջկան.—Հանգստութեան կարեւորութիւնը ամսականի միջոցին.—Հոգեկան դրութիւնը.—Մրսելուց առաջացած վնասները.—Մարսողութեան զորձարանների խանգարումն եւ նրանց խնամքը.— Դաշտանի անկանոնութիւնները.— Ամսականի ժամանակից վաղ եւ ուշ երեւալը.—Արիւնահոսութեան պակասումն կամ աւելանումն.—Նողմնակի երեւոյթները.—Դաշտանային ցաւը եւ նրա բժշկութիւնը.—Թանուոր աղջկայ առողջապահութիւնը ամսականի ժամանակ։

Մենք աշխատեցինք ընդգծել այն կարեւոր գիտելիքը, թէ դաշտանաւորումն մի տեսակ մտրակումն է աղջկայ օրգանների գործունէութեան համար։ Նա խորապէս ցնցում է պատանուհու ամբողջ օրգանիզմը և հետեւաբար, ճշմարիտ որ, մի ճգնաշրջան, կրեղիս է կազմում նրա կազմուածքի մէջ։

Ամենաթեթև անզգուշութիւնը դաշտանային շրջանում կարող է ուրեմն առաջ բերել զանազան խանգարումներ աղջկայ ֆիզիկականքեանքի մէջ, որոնք վաղ թէ ուշ արձագանք կը տան նրա ամբողջ կազմուածքում։ Շատ «կանացի» կոչուած հիւանդութիւնների պատճառներից մէկն էլ դաշտանաւոր աղջկայ անզգուշութիւններնեն

Անտարակոյս շատ աղջիկների վրա իսկի չի էլ նկատվում դաշտանի բացուելը, և ուրեմն այսպիսիները առերես իսկի կարիք էլ չունեն որոշ առողջական միջոցներ ձեռք առնելու։ Բայց այդ մի մեծ սխալ է.— երբէք կինը, որքան էլ նա ամրակազմ լինի, որքան էլ քիչ քաղաքակրթուած (ուրեմն և քիչ նազուկացած), չի կարող անասունների նման անհոգ լինել դէպի այս կարեւոր շրջանը։ Շատ ենք լսում այնպիսի կիսաառասպելական պատմութիւններ, թէ օրինակ. լեռնցի կինը ծանր դաշտային աշխատանքների միջոցին առանց երկունքի ծնում է, և երեխային մի փալասի մէջ փաթաթած գցում է շալակը ու շարունակում բանել... Նոյնպիսի բաներ պատմում են

նաև դաշտանաշրջանում աղջկայ գործած քաջութիւնների մասին։

Եթէ հաւատալու էլ լինենք այդ բոլորին, դարձեալ հարց է ծագում, թէ արդեօք ինչ հետեւանք է ունենում այդ վայրենի, ուղիղ որ անասնական առողջապահութիւնը աղջկայ ու կնոջ առողջութեան վրա։ Այդ մասին ոչ ոք, ի հարկէ, չի խօսում և մենք ամեն իրաւունքով կասենք, որ այդ նման անզգուշութիւնների համար անհրաժեշտաբար պէտք է տուժեն խեղճերը,

Կասկած չկայ, որ գեղջկուհին ու լեռնաբնակ աղջիկները շատ աւելի ամրակազմ են ու դիմացկուն, քան քաղաքացիները, այնու ամենայնիւ նրանք էլ նոյն կերպ են կազմուած, ինչ որ վերջինները և հետեւաբար հետեւեալում յիշատակած առողջապահական խորհուրդները վերաբերում են նրանց ևս։

Ամենից առաջ բացատրենք մի կարեւոր կէտ, որը հետեւեալն է.

Պէտք է արդեօք աղջիկ-պատանուհուն բացատրել սեռական գործարանների մոտ-ը իմ ֆունկցիաները, հարկ է արդեօք պար-

զել նրա առաջ այդ օրգանների խաղալիք դերը։

Այդ մասին մենք մանրամասն կը խոսենք, երբ կը զբաղուենք աղջկայ բարոյական կրթութեամբ։ Այն ժամանակ կը տեսնենք, թէ որքան շրջահայեցողութիւն, որչափ ընքուշութիւն է հարկաւոր օրիորդի աչքը բանալու համար, որպէս զի տուած տեղեկութիւնները փոխանակ ամրապնդելու նրա մէջ բարոյական սկզբունքները, հակառակ հետեւանք չունենան։ Այժմ կ'ասենք միայն, որ դաշտանին մօտեցող աղջկան պէտք է անպատճառ զգուշացնել, թէ ինչ է պատահելու, որպէսզի նա չսարսափի արիւնհոսութիւնից և ամաչելով չթաղցնի ամսականի երեւալը, որով կը ցնասի իրան։

Մայրը պէտք է ընքշութեամբ զգուշացնի իր աղջկան, ներկայացնելով դաշտանը իբրև մի առօրեայ երեւոյթ, որից չի խուսափում ոչ մի աղջիկ, հասկացնելով նախագնաց երեւոյթները և համոզելով, որ իրան իմաց տայ, երբ կը նկատի այդ նշանները։

Այս կերպով միայն մայրը կարող է դրաւել աղջկայ հաւատարմութիւնը, որը

նրա ամբողջ բարոյական կրթութեան հիմքը պէտք է դառնայ։

Ամենից առաջ դաշտանի մօտենալու ու բացուելու ժամանակ հանգստութիւն է պահանջվում։ Աղջիկը պէտք է թողնի իր ծանր աշխատանքները.—ոչ կալսել, ոչ ծանր բան վերցնել, ոչ խմոր հունցել, ոչ ձձում հարել, ոչ կուժ դնել ուսին և այլն։ Քաղաքացուհին աւելի ևս զգոյշ պէտք է լինի։ Պէտք է հասկանալ, որ այդ միջոցին ամեն տեսակ ճիգ ցնասակար է։ Շատ կանայք ու նրբակազմ աղջիկներ ուղղակի անընդունակ են դառնում նոյնիսկ թեթև ֆիզիկական աշխատանքի.—այսպիսիները, ի հարկէ, պէտք է պառկած մնան մի կամ երկու օր։ Կանգնած դիրքը նոյնպէս ցնասակար է, որովհետև արիւնը աւելի է հաւաքվում ներքին մասերում և դրանից առաջանում է աւելի առատ արիւնհոսութիւն ու ցաւեր։

Բանուոր դասակարգի աղջիկը ցաւակցաբար յաճախ անկարող է լինում հանգիստ մնալու, չարաչար աշխատանքը հալածում է նրան նոյնիսկ դաշտանային օրերը, սակայն աղատ չէ նոյնպէս և քաղաքացի ունեւոր տան օրիորդը, միայն այստեղ բա-

լերն, երեկոյթներն ու խնճոյքներն են իրանց անքուն գիշերներով, դաշնամուրն ու ուսումն իրանց նստակեաց ժամերով, որ անկարելի են դարձնում առողջապահական պատուէրների գործադրումն։

Ով կարող է, պէտք է զգուշանայ շատման դալուց, սանդուխներ բարձրանալուց, նոյնպէս այն ամեն բանից, ինչ կարող է ցնցումներ առաջացնել (օր. սայլով, կառքով, նոյնիսկ երկաթուղով ճանապարհ գնալը)։ Կար անող աղջիկը չպէտք է ոտով պտըտի կարի մեքենան, ամեն տեսակ մարմնամարզութիւն պէտք է դադարեցուի միքանի օրով, ինչպէս և սարեր բարձրանալը, պարը։

Եթէ բանուոր աղքատը իր տնտեսական դիրքի շնորհով ստիպուած է դաշտանի միջոցին էս բաներ, հարուստ ընտանիքի օրիորդը կարող պէտք է լինի ամուսայ մէջ մի քանի օր «հանգստանալ» հասարակական կեանքից։ Թող մայրերը, որոնք անշուշտ տուժել են օրիորդ ժամանակ վարած անզգոյշ կեանքից, յետ պահեն իրանց աղջիկներին անսանձ զուարճասիրութեան փորձանքներից։

Իսկ փորձանքները անթիւ են։

Սեղմած իրանը, որը արգելում է, ինչպէս տեսանք, արեան կանոնաւոր շրջանառութիւնը կոնքի մէջ, սրտի արագ բաբախումն պարի ազդեցութեան ներքոյ, օդի ապականութիւնը, որը ծանրանում է աղջկայ կրծքին, որովհետև այդպիսի օդի մէջ արիւնը անկարող է լինում մաքրուել, աւելացրէք սրանց սեռային զգացմունքների որոշ չափով զարթնելը շնորհիւ տղամարդու հետ հպուելուն, երևակայութեան վառումն, յետոյ մըրսելու վտանգը պարից, պաղ օշարակներից ու պաղպաղակից, որոնք պէտք է հովացնեն յուզմունքից տաքացած ու քրտնած մարմինը, մանաւանդ դեկոլտէ ունեցողներինը, երբ մերկացրած ուսերն ամեն րոպէ սառում ու ջերմանում են,—այս բոլորն ինկատի ունեցէք և դուք կը հասկանաք, թէ որ աստիճան այսպիսի կենցաղը կորստաբեր կարող է լինել աղջկայ համար դաշտանային կամ նախադաշտանային շրջանում։

Հոգեկան դրութիւնը նոյնպէս պէտք է ուշադրութեան առնուի, քանի որ աղջկայ ամբողջ ներվային սիստեմը որոշ դրդռման մէջ է։ Այս պատճառով պէտք է աղատ պահել աղջկան վատ նորութիւններից, վախից,

վշտից, հոգսերից և առհասարակ ամեն տեսակ հոգեկան յոյզերից։ Աղջիկը ինքը պէտք է խուսափի այն ամեն բանից, ինչ որ կարող է վրդովել նրա խաղաղ հոգեկան տրամադրութիւնը, օրինակ. յուզիչ բոմաններից ընթերցումից, թատրոն յաճախելուց և այլն։

Ի՞նչ դեր է խաղում մրսելը։

Մրսելը կարող է մեծ վտանգներ հասցնել դաշտանաւոր աղջկան ամսականի ժամանակ, քանի որ մրսելիս դրսի (մաշկի) արիւնը լցվում է ներսի գործարանները։

Նախընթաց գլխում յիշատակած լողացումներն ու ջրով շփումները պէտք է թողնել։ Աղջիկը դաշտանը վերջացնելուց յետոյ միայն պէտք է մաքրող վաննա ընդունի։

Դաշտանի միջոցին աղջիկը պէտք է գործ ածի մեր յիշած վարտիկը և փակ իւպկան։

Մի սխալ ու վտանգաւոր համոզմունք է բուն դրել ժողովրդի մէջ, այն է. թէ աղջիկը չպէտք է փոխի սպիտակեղէնը, քանի դեռ արիւնը չի կանգնել։

Ընդհակառակը, դաշտանաւոր աղջիկը կամ կինը պէտք է յաճախ փոխեն իրանց սպիտակեղէնը և անպատճառ ամեն օր

(նոյնիսկ օրը միերկու անգամ) դաղջ ջրով, կամ բօրակաթթուտի 2% լուծուածքով լուանան արտաքին սեռական մասերը։ Մաքրութիւնից միայն օգուտ կարող է առաջ գալ և երբէք վնաս։

Դաշտանաւոր աղջիկն ու կինը իրանց սպիտակեղէնները արեան ապականութիւնից պաշտպանելու համար, գործ են ածում առանձին ձեւի կապեր։

Կապերի ձեւերը շատ տարբեր են լինում; նրանց նպատակն է ծծել-իրանց մէջ պահել հոսող արիւնը։ Այդ նպատակով նրանց մէջ դրվում է բամբակ, սպունգ և այլն։

Այդ լաւ է, բայց ցաւակցաբար այդ բարձիկները չեն փոխում դաշտանահոսման ամբողջ ընթացքում։ Այդ նոյնպէս մի մեծ սխալ է, որովհետև բարձիկի մէջ ներս ծծուած արիւնը մնալով փտում է ու գարշելի հոտ արձակում։ Բարձիկը պէտք է ամեն օր փոխել։ Քաղաքներում վաճառվում են պատրաստի կապեր, բայց ամեն աղջիկ կարող է ինքը պատրաստել աւելի էժան կերպով։

Քանի որ դաշտանի միջոցին աղջկայ մարմնոյ գործարանները խանգարվում են, պէտք է զգոյշ լինել ուտելու մէջ։

Երբէք չպէտք է չափազանց ծանրաբեռնել ստամոքսը, այլ պէտք է քիչ քիչ ուտել և միայն դիւրամարս կերակուրներ. թթու, իւղալի և շատ քաղցր ուտելեղէններից պէտք է ժուժկալ պահի իրան դաշտան ունեցողը։ Հացեղէնը (հաց, բրինձ և այլն) պէտք է քիչ ուտել, լաւ է գործ ածել կանաչեղէն։ Սուրճ, մուգ թէյ չպէտք է խմել, թոյլ է տրվում բաց թէյ, ջրով կարմիր գինի, քիչ գարեջուր, լիմոնադ և այլն։ Թեթեւ փորլուծութիւնը կամ կապութիւնը առանձին նշանակութիւն չունեն, իսկ եթէ աւելի լուրջ խանգարումն կայ, պէտք է բժշկի դիմել։

Ահա այն զգուշութիւնները, որ պէտք է նկատի ունենալ կանոնաւոր դաշտանի միջոցին։

Ցաւակցաբար աղջկայ լուսինը յաճախ անկանոնութիւններ ունի,—սրանց մասին պէտք է մի քանի խօսք ասել։

Դաշտանի անկանոնութիւնները երեք տեսակ կարող են լինել.

1. Նա ժամանակից առաջ կամ ուշ է յայտնվում։

2. Արիւնհոսութիւնը չափազանց սակաւ կամ յորդ է լինում։

և 3. Այդ միջոցին կողմնակի անախորժ երեւոյթներ են տեղի ունենում։

1. Դաշտանաւորման սկզբներում յաճախ պատահում է, որ ինչպէս ասել ենք, ամսականի բացուելը ամսէ ամիս մօտենում է կամ հեռանում։ Օրինակ. փոխանակ 28 օրը, երեւում է 26 օրը, նոյնիսկ 25—24—22 օրը մի անգամ, կամ ընդհակառակը 30—40 օրը մի անգամ։

Այս անկանոնութիւնը սակայն մի քիչ յետոյ ուղղվում է և դաշտանը յայտնի յաջորդականութիւն է ստանում; այնպէս որ նոր դաշտանաւորուած աղջիկը շատ չպէտք է վրդովուի դրանից, թէեւ այնուամենայնիւ պէտք է յայտնի մօրը, որը որոշ խորհուրդներ կը տայ նրան։

Բայց եթէ այդ անախորժ երեւոյթը կրկնվում է միքանի ամիս շարունակ, պէտք բժշկի դիմել։ Մի միջոց միայն թոյլ է տրվում աղջկան գործածել դաշտանի ուշանալու դէմ։—այդ ոտերի տաք վաննան է, որի մէջ կարելի է մանանեխ խառնել, որպէսզի

արիւնը քաշուի ներքեւի մասերը և այդ-
պիսով գուցէ արիւնհոսութիւն բացուի։

2. Արիւնհոսութիւնը երբեմն կամ շատ
սակաւ է լինում ու տեւում է մէկ օր, կամ
առատ սկսվում է ու յանկարծ դադարում,
կամ թէ չէ առատ է լինում ու տեւում
5—6 և աւելի օր։

Այս երեւոյթներից ամեն մէկը իր որոշ
պատճառներ ունի, որոնց մասին անկարող
ենք երկար խօսել այստեղ։ Կասենք միայն,
որ ծանր դէպքերում պէտք է անպատճառ
բժշկի դիմել, որովհետեւ նա միայն կարող
է հասկանալ երեւոյթի պատճառը ու դար-
ման տանել։

Ընդհանուր առողջական դրութիւնը
(արնատութիւն, ջերմային հիւանդութիւն-
ներ, սրտի ախտ, թոքախտ և այլն) այս ձեւի
անկանոնութիւնների գլխաւոր պատճառ-
ներն են։ Սակայն կարող են տեղի ունենալ
նաև տեղային պատճառներ։ Օրինակ. կարող
է պատահել, որ դաշտանի օրերը աղջիկը
ամսականի սաստիկ ցաւեր և բոլոր երեւոյթ-
ներն ունի և սպասում է ամեն րոպէ արեան
երեւալու, բայց արիւն չկայ։ Այդ դէպքե-
րում երբեմն զննումը ցոյց է տալիս, որ ա-

րեան ճանապարհը փակուած է ու սա հա-
ւաքուած է մնում զաւակատան մէջ։ Մի
աննշան ապերացիա է հարկաւոր և աղջիկը
փրկուած է։

Մեր մէջ այդ դէպքերում բժշկին դի-
մելը ամօթ է համարվում և աղջիկները եր-
բեմն կեանքով տուժում են այդ անտեղի
ամօթխածութեան համար։ Զարմանալու բան
է, որ մի պզուկի կամ գլխացաւի համար
հարկ են համարում բժշկի դռները քարշ
դալ, իսկ դաշտանի կենսական պրոցեսի
խանգարումները, որոնք ահագին ազդեցու-
թիւն ունեն ապագայ կնոջ կեանքի վրա,
անուշադիր են թողնվում։

3. Դաշտանին ուղեկցող ամենատանջա-
լից երեւոյթը ցաւն է։

Դաշտանային ցաւերը առաջ են գալիս
այն հանգամանքից, որ զաւակատան անցքը
նեղ է լինում և արիւնը հաւաքուած է
մնում զաւակատան մէջ։ Ցաւերը երեւում
են կամ մի քանի օր ամսականից առաջ,
կամ մի քանի ժամ, և ընդհանրապէս դա-
դարում են, երբ բացվում է արիւնը։ Բայց
կան դէպքեր, երբ ցաւերը տեւում են մին-
չեւ արիւնհոսութեան վերջանալը։

Թեթեւ ցաւերը համարեա առօրեայ երեւոյթ են դաշտանաւորման սկզբներում. մի քանի ամսից յետոյ նրանք համարեա թէ բոլորովին դադարում են ու ամսականը առանց ցաւերի է լինում։ Սակայն սակաւաթիւ չեն և սաստիկ ցաւալից դաշտանները։ Ցաւերը կարող են այնքան սաստիկ լինել, որ խեղճ աղջիկը ճիչեր է արձակում, թաւալ է տալիս անկողնու մէջ և առհասարակ սաստիկ անհանգստութեան նշաններ է ցոյց տալիս։ Այս ցաւերը սահմանափակուած չեն մնում կոնքի մէջ, այլ տարածվում են մէջքը, կռնակը, աճուկները, աղդրերը, նոյնիսկ ծոծրակը, թեւերը, ամբողջ գլուխը,—մի խօսքով ամբողջ մարմնի մէջ։

Աղջիկները սարսափով են սպասում դաշտանին ու մի տեսակ յուսահատ դրութեան մէջ են գտնվում։

Ի՞նչ անել։

Մեր ամենից գլխաւոր խորհուրդն այն կը լինի, որ ծնողները չհաւատան զանազան պառաւների ու տատմայրերի ձնասակար և յաճախ նոյն իսկ մահացնող առաջարկութիւններին։

Բժշկին դիմեցէք։ Իսկ բժշկի բացա-

կայութեան միջոցին դործ դրէք հետեւեալ անվնաս միջոցները

Հանդարտ պառկեցրէք աղջկան անկողնի մէջ, թեթեւ լուծողական տուէք (լուծողական ձէթ) կամ յօդնա շինեցէք, և տուէք քրտնեցնող տաք խմիչքներ, օր. մորու (малина-ի) թէյ, փորի վրա տաքացրած շորեր դրէք, կամ տաքացնող փաթեթ շինէք կամ թեթեւ կերպով մերսէք փորը (եթէ այդ դուր է գալիս հիւանդին)։ Կարելի է փորձել նոյնպէս և տաքացրած ագուրներ, խուփեր, պարկի մէջ լցրած թեփ, աղ և այլն։

—

Մենք երկար կանգ առանք դաշտանի, իբրև հասունութեան առաջին և գլխաւոր (թէև ոչ միակ) երեւոյթ վրա, որը այնքան մեծ ազդեցութիւն ունի օրիորդի ֆիզիկական ու հոգեկան կազմի վրա։

Մենք աշխատեցինք ակներև դարձնել այն գիտական իրողութիւնը, ֆակտը, որ ամսականի բացուելը պատանուհու կեանքի ամենախոշոր երևոյթներից մէկնէ և հետևաբար նա ծնողներից առանձին ուշ ու հոգս է պահանջում։

Դաշտանային շրջանում առաջացած

ՁԼՍանները, կանանց հիւանդութիւնների հիմնական սկզբնապատճառներն են, ասում են բժիշկները։ Քանի քանի կանայք փրկուած կը լինէին անվերջ ու յաճախ անբուժելի տանջանքներից, եթէ մեղանչած չլինէին դաշտանի առողջապահութեան դէմ!

Իր տան մէջ հայ աղքատ կինը անխոնջ բանուոր, անլեզու դրաստ է։ Նա չունի դադար դաշտանային շրջանի մէջ ևս և «օֆ» ու «ախ» անելով, շարժում է ցաւոտ սրունկները, կռացնում է իր կոտրատուող մէջքը, որ յետ չմնայ գործից*)...

Մինչև այսօր դեռ չի մտել այս խաւար մթնոլորտի մէջ դաշտանաւոր աղջկան ու կնոջ խնայելու գիտակցութիւնը։ Գիւղացի տղամարդը, իրան ինքնակալ տէր համարելով ընտանիքի մէջ, չգիտէ կարեկցել տան կնոջ ֆիզիկական ցաւերին, ինչպէս և հոգեկան վշտերին։ Իր տգիտութեան մէջ նա ընդունակ չէ հասկանալու, որ կինը մի

*) Մեզ պատահել է ականատես լինել յդի կանանց այնպիսի ֆիզիկական աշխատութիւնների, որոնք պահանջում էին նրանից բոլոր մկանների լարումն։ «Ջանն էլ դուրս գայ», ասում էր տան տղամարդը,—բա՛ ինչի՞ համար է, որ տան բանն էլ չանի»։

մեծ, դժուարին, երբեմն էլ կորստաբեր (իր համար ի հարկէ) դեր ունի կատարելու— առողջ սերունդ արտադրելու, որի համար պիտի անպայման կերպով առողջ պահպանուեն նրա սեռական գործարանները։

Այսպէս է գիւղական ազգաբնակութեան մէջ։

Քաղաքներում նոյնն է, եթէ ոչ աւելի վատ։

Եւ, յիրաւի, այստեղ կինը սկսել է ինքնուրոյն աշխատանք որոնել, սկսել է ձգտել տղամարդու հետ աշխատանքի մեծ ասպարէզում։

Կնոջ աշխատանքը այժմ արդէն բաւականին բազմատեսակ է. աղախնու ու կարանողի պարապմունքից սկսած մինչև վարժուհու ու դաստիարակչուհու գործը։

Առհասարակ աշխատանքները կարելի է երկու կարգի բաժանել.—այնպիսիներ, որոնք կաշկանդում են մարդուս ազատութիւնը ամբողջ օրը կամ օրուայ մի մասը, և նրանք, որոնց կատարելը կամ չկատարելը մարդու իր սեփական կամքից է կախուած։ Այս վերջինները կոչվում են ազատ պրոֆեսիաներ։

Տխրալի ու աննախանձելի է առաջին կարգի աշխատանք յանձն առնող աղջիկների դրութիւնը։

Սրանք են. աղախինները, արհեստանոցներում (տարազի) աշխատողները, խանութներում ծառայողները, լուացարարները, հացթուխները, յետոյ դայեակները, դաստիարակչուհիները, վարժուհիները և ուրիշները։

Ամբողջ օրերով, երբեմն և գիշերուայ մի մասը, օրուայ բոլոր եղանակներին, վարձուած աղջիկը պէտք է ֆիզիկական աշխատանքի մէջ լինի, կամ ժամերով կանգնած ու շարժողութեան մէջ, կամ նստած, իրանը կորացրած, փորն ու կուրծքը սեղմած հաւաքելով՝ սպառելու համար իր ոյժերը, միշտ երկիւղի ու սպառնալիքի տակ, որ գործը, նրան մի կտոր հաց տուող գործը, չգնայ նրա ձեռից։ Եւ արիւնհոսութեան մէջ ևս նա ոչինչով չի փոխում իր կենցաղը, և ի հարկէ տուժում է իր ամբողջ կեանքում։ Դրանք են, որ յետոյ, երբ ցաւը կը յաղթի, բժշկի շէմքերը մաշողները, դրանք են վաղաժամ թառամողները ու ծերացողները... Վարձ տուողը գործ է

պահանջում; ի՞նչ փոյթ նրան, թէ այդ գործ կատարողը երկաթէ մեքենայ չէ, այլ մի կին, որը իր ամսականի միջոցին անընդունակ է դառնում ֆիզիկական ծանր աշխատանք կատարելու։ Ի՞նչ փոյթ, թէ այդ խեղճ արարածի գործարանները յետոյ, երբ նա կին կը դառնայ, պէտք է ենթարկուեն մի շարք հիւանդութիւնների, որոնք պէտք է քայքայեն նրա ընդհանուր առողջութիւնը։ Ի՞նչ փոյթ, թէ նրանից ծնած սերունդն էլ պէտք է տուժի...

Աշխատանքի մի աղբիւր գտնելը այնչափ է դժուարացել, որ մի որևէ գործ գըտած աղջիկը, պարապմունքը չկորցնելու համար, չի դադարում գործելուց նոյնիսկ դաշտանի օրերը։ Աշխատանք տուողը ինքը պէտք է այնքան մարդասիրութիւն ու գութ ունենայ սրտում, որ այդ օրերին թեթևացնի աղջկայ աշխատանքը, հանգիստ տայ նրան։ Մինչև այն ցանկալի ժամանակի հասնելը, երբ օրէնսդրութիւնը ստիպողական կը դարձնի կնոջ դադարը ամսականի օրերում; ունևոր հասարակութիւնը ինքնա-

բերաբեր պէտք է անի այդ։ Թող փարթամ ու անբան տիկնայք, իրանց գունատուած և յոգնած ու ցաւից պռօշները կծող աղախնի դէմքը դիտելիս, յիշեն, որ սա էլ իրանց նման մի կին է։

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ ԹԵՐԹ»

Երկշաբաթեայ պատկերազարդ հանդէսի

(1903—4 շրջանի համար)

Իրրև յաւելուած, բաժանորդները կըստանան Յբէ 4-ից մինչև 6 պատկերազարդ գրքոյկ։

Բաժանորդագինն է 2 ր. 50 կ. (արտասահմանում—10 ֆր.)

Կարելի է վճարել և մաս-մաս—սկզբում 1 ր. 50 կ., յունվարին էլ 1 ր.։ Հրատարակութիւնն սկսուելու է սեպտեմբերին։ Տարեշրջանը սեպտեմբերից սեպտեմբեր է։ Աշխատակցում են շատ հայ բժիշկներ թէ Ռուսաստանում և թէ Թուրքիայում ու Պարսկաստանում։

Բաժանորդագրութեան համար պէտք է դիմել թերթիս խմբագրատուն (Сергіевская ул. д. № 12.) կամ „Гуттенбергъ“ գրավաճառանոց։

ԲԱԳԻՈՒՄ գրուել «Պրոմէթէուս» գրավաճառանոցում (Товарищество „Прометеусъ“—Баку)։ Պարսկաստանում դիմել Դր. Փաշայեանին (Թաւրիզ)։

Հասցէն. Тифлисъ. Редакція „Арогджапаикъ Тертъ“.

Արտասահմանից. Tiflis, Rédaction „Arogdjapahik Tert“.

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՐԻՉ՝ Բ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.

Պատրաստվում է տպագրութեան համար

«Ա Ղ Ջ Ի Կ»

II ՀԱՏՈՐ

(Մտաւոր և բարոյական կրթութիւն)

Զգ է՝ եթե գոյությունքեր Սոկ
գոյ։ Գոյություն է տրված
Հն է՝ տան — Թէ Տոյ
Հոգ Վեր Էրեկոյ (Հոգ։

10
40 ռ
Ep
MAГ
43
Ko
№ 309/3
10 թ.

7933